

Լ. Գ. ՏԵՐԵՆՈՎԱ և Վ. Գ. ԵՐԴԵԼԻ


ԱՇԽԱՐՀԱԳԻՆԻՅՈՒՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱԿ

ԴԱՍԱԳԻՐՔ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԶՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ



91(075)

S-39

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

5 OCT 2011

Լ. Գ. ՏԵՐԵՆՈՎԱ ՅԵՎ Վ. Գ. ԵՐԴԵԼԻ

91(075)

5-39

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ԴԱՍՍԱԳԻՐՔ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԶՈՐՐՈՐԴ ԴԱՍՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Բնագիրը հաստատված է ՌԽՖՍՀ Լուստոգրիմասի կողմից

Значение востановлено



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

Այս դասագիրքը հանդիսանում է վերամշակումը 4-րդ դասարանի աշխարհագրության այն ստորիլ դասագիրքի, վոր լույս է տեսել 1933-34 թվին Մոսկվայում:

Վերամշակումը կատարվել է ԽՍՀՄ Ժողովրդական Համկ(բ)ի կի 1934 թ. 16/Մ վորոշման ցուցմունքների հիման վրա և կայանում է հետևյալում.

1. Հետևողականորեն զարգացված է աշխատանքների սխեման՝ աշխարհագրական քարտեզի մասին դիտելիքներն ամրապնդելու համար:

2. Նյութն ավելի կոնկրետացնելու, դա աշակերտության հասակին ավելի հարմարեցնելու նպատակով, դասագիրքի մեջ մտցված են մի շարք պատկերա-վոր աշխարհագրական նկարազրույթյուններ, համապատասխանորեն վերամշակված է դործնական տեքստը, ավելացված է իլյուստրացիաների քանակը:

3. Կատարված են նյութի մի շարք կրճատումներ և սարկեցումներ այն փոփոխությունների կապակցությամբ, վորոնք մտցված են ծրագրի մեջ հա-մաձայն 1934 թ. 16/Մ վորոշման:

Հիմնական հեղինակներն զուգընթաց դասագիրքի վերամշակման դոր-ծում մասնակցություն են ունեցել Ն. Ի. Պոպովան և Պ. Գ. Տերեխովը:



ՀԱՍՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Л. Г. Терехова и В. Г. Эрдели
ГЕОГРАФИЯ
учебник для начальной школы
часть вторая
Гиз. Арм. ССР, Ереван, 1939


ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

1. ԽՍՀՄ-Ի ԴԻՐՔԸ ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միու-թյունը (ԽՍՀՄ) զտնվում է արևելյան կիսագնդում, յերկու աշ-խարհամասերում՝ Յեվրոպայում և Ասիայում:

Գլորուսի և կիսագնդերի քարտեզի վրա դոնք՝ Յեվրոպա և Ասիա աշ-խարհամասերը:

Նայեցե՛ք, ԽՍՀՄ-ն Յեվրոպայի և Ասիայի վոր մասերում է զտնվում:



ԽՍՀՄ-ն իր տարածությամբ զգալի չափով գերազանցում է խոշորագույն կապիտալիստական պետությունների տարածությունը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միու-թյունը յերկրագնդի ամենամեծ պետությունն է: Խորհրդային Միությունը բռնում է ամբողջ բնակված ցամաքի վեցերորդ մա-

սը: Արեւմտաքից զեպի արեւելք Խորհրդային Միությունը ձգվում է 10 հազար կիլոմետր: Հյուսիսից զեպի հարավ ԽՍՀՄ-ն ձգվում է $4\frac{1}{2}$ հազար կիլոմետր:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա Միության արեւմտյան սահմանի մոտ դռն է Մենսկ քաղաքը և նույն քարտեզի վրա արեւելյան սահմանի մոտ, Ճապոնական ծովի ափին դռն է Վլադիվոստոկ քաղաքը:

Յուշ տվե՛ք այն յերկաթուղին, վոր միացնում է այդ յերկու քաղաքները երբար հետ: Ծեպրեթաց գնացքն այդ տարածությանն անցնում է 13 օրում:

ԽՍՀՄ-ի Յեվրոպական և Ասիական մասերն իրարից բաժանվում են Ուրալյան լեռներով, Ուրալ գետով, Կասպից ծովով և Կովկասյան լեռներով:

Քարտեզի վրա դռն է ԽՍՀՄ-ի Յեվրոպական և Ասիական մասերի միջև յեղած սահմանը:

ԾՈՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Նայեցե՛ք քարտեզին. մեր Միությունը զանազան կողմերից չբջապատված է ծովերով: ԽՍՀՄ-ն այդ ծովերի վրայով առեւտուր է անում ուրիշ յերկրների հետ:


Հյուսիսային կողմից Միության ափերը հազարավոր կիլոմետր տարածության վրա լողողում է Հյուսիսային Սառուցյալ, ավկիանոսը: Ինչպե՞ս դուք արդեն դիտե՛ք, այդ ովկիանոսը ցուրտ դառնում է դանդաղ: Դրա մի զգալի մասը ծածկված է սառույցներով մոշ միայն ձմեռը, այլև ամառը: Սառույցները խանգարում են նավագնացությանը Սառուցյալ ովկիանոսում:

Միայն արեւմտյան մասում՝ Կոլա թերակղզու և Նոր Յեթկիր կղզիների միջև Սառուցյալ ովկիանոսի մի մասն ազատ է սառույցներից: Այդ Բարենցի ծովն է: Ատլանտյան ովկիանոսից անցնում է այստեղ Գոլֆստրիմ տաք հոսանքը: Սա տաքացնում է Բարենցի ծովը, և ամառը սառույցները քաշվում են հեռու՝ զեպի հյուսիս: Բարենցի ծովը Կոլա թերակղզու ափերի մոտ չի սառչում նաև ձմեռը:

Բարենցի ծովից զեպի հարավ ցամաքի մեջ է մտնում Սպիտակ ծովը: Սրա մեջ տաք հոսանքը չի թափանցում և տարվա կեսն այս ծովը ծածկված է լինում սառույցով:

ԽՍՀՄ-ի արեւմտյան սահմանին մոտենում է Բալթիկ ծովը:

Ֆիննական ծոցը: Այստեղից անցնում է ծովային կարճ ճանապարհը զեպի Արեւմտյան Յեվրոպայի յերկրները՝ Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա: Շատ չողենավեր են մտնում Ֆիննական ծոցը. նրանք բերում են արտասահմանյան ապրանքներ և տանում են մեր ապրանքները:




Բարենցի ծով

Միության Յեվրոպական մասի հարավային կողմում դռն է Սև ծովը: Սա տաք, չսառչող ծով է, այստեղից ել յելք կա զեպի արտասահման:

Հյուսիսից Սև ծովի մեջ է մտնում Ղրիմի թերակղզին, վորը Սև ծովը բաժանում է մոշ այնքան խոր Ազովի ծովից:

Միության արեւելյան ծովային սահմանը կազմում են Խաղաղ ովկիանոսի ծովերը՝ Բերինգի, Ոխոտի և Ճապոնական: Բերինգի և Ոխոտի ծովերն իրարից բաժանվում են Կամչատկա թերակղզով: Սառույցները դժվարացնում են նավագնացությանն այդ ծովերում: Ոխոտի և Ճապոնական ծովերի միջև գտնվում է Մախալին կղզին: Մախալինի հյուսիսային կեսը պատկանում է Խորհրդային Միությանը, իսկ հարավային կեսը՝ Ճապոնիային: Այդ ծովերից ամենախարեւորը Ճապոնական ծովն է. նրա միջոցով մենք յելք ունենք զեպի Խաղաղ ովկիանոսը:

վարժուքյուններ.— Ուրվագծային քարտեզի վրա ԽՍՀՄ-ի ծովային սահմանների վրայով կապույտ մատիտով գիծ քաշեցե՛ք և սպառ իրենց տեղերում զրեցե՛ք Խորհրդային Միության վերը նշված ծովերը, կղզիները և թերակղզիները: Հիշեցե՛ք զրանց անունները և դիրքը քարտեզի վրա:



Սև ծով

Քարտեզի վրա ցույց տվե՛ք Ֆիննական ծոցից Անգլիա տանող ծովային ճանապարհը:

Քարտեզի վրա ցույց տվե՛ք Սև ծովից Ֆրանսիա, Վլադիվոստոկից Ճապոնիա տանող ծովային ճանապարհները:

Մեր ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

(Սահմանակից պետությունները)

Խորհրդային Միության մերձավոր հարևաններն են. արևմտյան սահմանում՝ Ֆինլանդիան, Նատոնիան, Լատվիան, Լեհաստանը, Ռուսիան. հարավում՝ Թուրքիան, Իրանը (առաջ Պարսկաստան եր կոչվում), Ավգանստանը, Չինաստանը, Տուվայի ժողովրդական հանրապետությունը, Մոնղոլական ժողո-

վրդական հանրապետությունը և Ճապոնիայի գերիշխանությունն սակ զտնվող Մանչուրիան և Կորեյան. վերջապես Սախալին կղզու վրա մենք սահմանակից ենք Ճապոնիային:

Դտե՛ք այդ պետությունները քարտեզի վրա:

ԽՍՀՄ-ն միակ պետությունն է ամբողջ աշխարհում, վերտեղ իշխանությունը պատկանում է բանվոր դասակարգին և աշխատավոր դուգաղիությունը:

Խորհրդային Միության բանվորա-դուգաղիական իշխանությունը միակ իշխանությունն է ամբողջ յերկրագնդի վրա, վորը կոմունիստական կուսակցության գեկալարությամբ պայքարում է յերկրագնդի բոլոր ժողովուրդների միջև յաղաղություն հաստատելու համար:

Խորհրդային Միության ժողովուրդները պատերազմ չեն ցանկանում, բայց նրանք ամեն մի րուպի պատրաստ են պաշտպանելու իրենց սոցիալիստական պետությունը: Կարմիր բանակն արթուն պահպանում է Խորհրդային Միության սահմանները:

Վարժուքյուն.— Միության ուրվագծային քարտեզի վրա ցամաքային սահմանների վրայով կարմիր մատիտով գիծ քաշեցե՛ք և սպա զրեցե՛ք սահմանակից պետությունների անունները:

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ


Դիտեցե՛ք ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզը: Քարտեզի մեծ մասը ներկված է կանաչ դույնով: Այդ ցույց է տալիս, վոր ԽՍՀՄ-ում ցածրադիր հարթություններ չառ կան:

Քարտեզի վրա նշանակված են յերեք մեծ դաշտավայրեր՝ Արևելա-Յեվրոպական, Արևմտա-Սիբիրական և Թուրանի:

Քարտեզի կանաչ ֆոնի մեջ տեղ-տեղ յերևում են բաց-դեղնավուն բծեր: Դրանք բարձրություններն են. ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասում գտնվում են Միջին-Ռուսական և Մերձվոլգյան բարձրությունները, Ասիական մասում՝ Միջին-Սիբիրական բարձրությունը:

ԽՍՀՄ-ի համարյա ամբողջ հարավային և արևելյան սահմանի յերկայնությունը, ինչպես և ԽՍՀՄ-ի Ասիական և Յեվրոպական մասերի միջև պարզ յերևում են դարձնադույն չերտերը՝ դրանք լեռներ են:

ԽՍՀՄ-ի Յեկրոպական մասում գտնվում են Ղրիմի լեռները:
ԽՍՀՄ-ի Յեկրոպական և Ասիական մասերի սահմանում
ձգվում են Ուրալյան և Կովկասյան լեռները: Ափզանտանի և
Զինաստանի սահմանում բարձրանում են Պամիր լեռնաշխարհը



Հարթություն

և Տյան-Շան լեռները: Զինաստանի և Մոնղոլիայի սահմանում—
Ալտայան լեռները:

Վարժաբյուցներ.— Ֆիզիկական քարտեզի վրա ցույց տվե՛ք և հիշեցե՛ք
վերը բերած դաշտավայրերը, բարձրությունները և լեռները:


ԽՍՀՄ-ի Ֆիզիկական քարտեզի վրա դիտեցե՛ք «Լեռնադաշտների համեմա-
մատական բարձրությունները» նկարը և ապա դա՛ր՝ այդ դաշտները քար-
տեզի վրա:

ԳԼԽԱՎՈՐ ԳԵՏՆԵՐՆ ՈՒ ԼՃՆԵՐԸ

ԽՍՀՄ-ում մեծ դետեր չառ կան: Նրանց մի մասն սկիզբ է
առնում բարձրություններից, մյուս մասը հոսում է լեռներից:

Քարտեզից յերևում է, Վոր Խորհրդային Միության դետերը
հոսում են զանազան ուղղությամբ՝ դեպի նրա արևելքը վաղուց
բոլոր ծովերը:

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ծովերն են հոսում հե-
տևյալ մեծ դետերը՝ Հյուսիսային Գվինեա, Պեչորա, Ուր, Յենի-
սեյ, Լենա:



Բալկալ լիճ

Ուրալի և Ճապոնական ծովերի միջի նեղուցն է թափվում
Ջրառատ Ամուրը:

Գնեպրը թափվում է Սև ծովը. այս դետի վրա կառուցված
է Դնեպրյան ելեկտրոկայանը:

Դնեպրից դեպի արևելք Ադովի ծովն է թափվում Դոն դե-
տը: Նա ամուրը սաստիկ ծանծաղում է. այդ ծանծաղումները
խանդարում են նախադնացությանը:

Կասպից ծովն է թափվում Վոլգան, վորը Միության Յեկ-
րոպական մասի ամենամեծ նավարկելի դետն է: Նրա մեջ շատ
փոսկներ են թափվում: Այդ փոսկներից ամենամեծերն են Ուլան
և Կաման:

Ուրալյան լեռներից սկիզբ է առնում և թափվում Կասպից
ծովը յերկար, բայց սակավաջուր Ուրալ դետը:

Ֆիննական ծոցն է թափվում կարճ, բայց լայն ու ջրառատ
Նևան:

Քարտեզի վրա գտե՛ք այդ բոլոր գետերը: Յույց տվե՛ք նրանց հոսանքը՝ սկսած ակունքից մինչեւ գետաբերանը:

Խորհրդային Միութեան մեջ շատ լճեր կան: Քաղցրահամ լճերից ամենամեծերն են՝ խոր Բայկալը՝ Միջին-Սիբիրական բարձրության վրա, Լադոգա և Ունգա լճերը՝ ԽՍՀՄ-ի Յեւ-բոսպորական մասի հյուսիս-արևմուտքում:

Այդ լճերից ամենախոշորներն են Կասպից և Արալյան լճերը, վերջինից սովորաբար ծով են ասում:

Քարտեզի վրա գտե՛ք հիշած լճերը:

Վարժաւթյուն.— Ուրվագծային քարտեզի վրա իրենց տեղերում դրեցե՛ք վերը բերած գետերի և լճերի անունները:

Հիշեցե՛ք նրանց անունները և քարտեզի վրա ունեցած դիրքը:

Կապույտ մատիտով ուրվագծային քարտեզի վրա դիժ քաղեցե՛ք գետերն ամբողջ հոսանքի ուղղութեամբ սկսած ակունքից մինչև գետաբերանը:

Գետաբերանի մոտ դրեցե՛ք յուրաքանչյուր գետի անունը:

Կապույտ մատիտով ներկեցե՛ք կամ շտրեկային գծերով ծածկեցե՛ք վերը հիշված լճերը:

ԻՆՁ Ե ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ ՅԵՎ ԻՆՁՊԵՍՈՒՆԻ Ե ՊԵՏԻ Ե ՊԱՏՐԱՍՏԵՆԼ ԱՅՆ

Ուրվագծային քարտեզն այնպիսի քարտեզ է, վորի վրա նշված են աշխարհամասերի կամ անունձին յերկրները, ծովերը, գետերը ուրվագծերը, սակայն նրանց անունները չեն նշված:

Աշխարհադրական քարտեզը լավ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է աշխատել ուրվագծային քարտեզի վրա— նրա վրա դանազան նշումներ անել ու անունները դրել:

Յուրաքանչյուր մարդ հեշտութեամբ կարող է ուրվագծային քարտեզ պատրաստել: Դրա համար պետք է վերցնել աշխարհագրական վոչ այնքան մեծ քարտեզը, կոչնել պատուհանի ապակուն: Քարտեզը վրայից պետք է ծածկել մի թերթ մաքուր թղթով: Յեթե ապակին լավ լուսավորված լինի, քարտեզը թղթի միջով կերևա: Մնում է միայն մատիտով թղթի վրա դնել քարտեզի յերևացող ուրվագիծը:

Քարտեզը կարելի չէ արտանկարել նաև բարակ կամ պատճենահան թղթի ողնութեամբ:

II. ԽՍՀՄ-Ի ԲՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԽՍՀՄ-ն հյուսիսից դեպի հարավ ձգվել է $4\frac{1}{2}$ հազար կիլոմետր տարածութեան վրա: ԽՍՀՄ-ի հյուսիսային մասը գտնւում է բևեռային շրջանից դեպի հյուսիս, նրա ամերը վոդո-դում է Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը և այդ պատճառով էլ նրա կլիման ցուրտ է:

ԽՍՀՄ-ի մեծ մասը գտնվում է բարեխառն գոտում:

Քանի վոր ԽՍՀՄ-ն հյուսիսից դեպի հարավ մեծ տարածութուն է բռնում, այդ պատճառով էլ նրա անոթյունը շատ բազմազան է:

Յուրա գոտու ձմեռային սոսկալի սառնամանիքները դեպի հարավ աստիճանաբար թուլանում են. ցուրտ կլիման դառնում է բարեխառն-ցուրտ, ապա բարեխառն, իսկ ամենահարավում՝ նույնիսկ բարեխառն-տաք:

Այդպես հյուսիսից դեպի հարավ փոխվում է ԽՍՀՄ-ի կլիման: Կլիմայի փոփոխութեան հետ փոխվում է նաև բուսական և կենդանական աշխարհը:

Իր բնութեան առանձնահատկութուններով ԽՍՀՄ բաժանում են մի քանի շրջանների կամ գոտիների:

1. ԲԵՎԵՌԱՅԻՆ ԳՈՏԻ

Դիտեցե՛ք դուրուսը և կիսադեղերի քարտեզը. դուք տեսնում եք, վոր Յեվրոպայի, Ասիայի և Ամերիկայի հյուսիսային ափերի յերկայնքով, Հյուսիսային բևեռի շուրջը, հազարավոր կիլոմետր տարածութեամբ ձգվում է Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը:

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի համարյա բոլոր կողմ-


ները, վորոնք դռնվում են Յեւրոպայի և Ասիայի Հյուսիսային ափերի մոտ, պատկանում են Խորհրդային Միությանը:

ԽՍՀՄ-ի ամենահյուսիսային մասն է այդ— Խորհրդային Միության բևեռային գոտին:

Դաժան և բևեռային դրուս բնությունը: Ձմեռը մի քանի ամիս չարունակ արեն այնտեղ բոլորովին չի ծաղում, իշխում է բևեռային գիշերը: Կուր թերակղզու Հյուսիսային ափերում այդ բևեռային գիշերը տևում է 2 ամիս, Նոր Յերկիր կղզում՝ 4 ամիս, իսկ Հյուսիսային բևեռում՝ կես տարի:

Ամառն արեւը մի քանի ամիս բոլորովին մայր չի մտնում— բևեռային ցերեկ է լինում:

Բայց արեւը կեսօրին շատ չի բարձրանում և այդ պատճառով թույլ և տաքացնում:



Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՅՑԱԼ ՈՎԿԻԱՆՈՍԸ

Ձմեռը.— Անվերջ ու անոսման ամեն կողմ տարածվում է սառցե անապատը:

Հսկայական սառցադաշտերը պատել են ովկիանոսը: Նրանք

չարժվում են, իբար են ճնշում: Ճայթյունով ու զզրոցով ջարդվում են սառույցները, և կարճվում են մեծ սառցակույտեր՝ «տորոսներ»:

Սոսկալի սառնամանիքներ են, մոլեղնում են ձյունախառն փոթորիկը, բաւ ու բորանը:

Արդեն մի ամբողջ ամսից ավել է, վոր ամեն ինչ պատած է բևեռային դիշերով խալարով: Կյանքը կանգ է առել: Բոլոր կենդանի եղանակները թաղել են: Սառցե անապատով յերբմն միայն անցնում է սպիտակ արջը:

Յերբմն յերկիրը պարզում է, և այդ ժամանակ սառցե անապատը լուսավորվում է առողերի փայլով և լուսնի լույսով: Յերբմն յերկնակամարի վրա չողչողում է Հյուսիսային:

Ամառը.— Արեւ մի քանի ամիս չարունակ մայր չի մտնում:

Ովկիանոսի մակերևույթի վրա սառույցն սկսում է հալվել: Սառցադաշտերը կոտրատվում, ջարդրոգվում են և ամբողջ ամառվա ընթացքում լողում են ովկիանոսում:

Սառույցների վրա տաքանում են փոկերը: Բարենցի ծովում մեծ խմբերով լողում են տատիկներ, ձողաձկներ և այլ ձկներ:

Նոր Յերկիր ժայռա ափերի մոտ յերևում են ծովացուրերը, իսկ Ասիայի ափերի մոտ՝ կետերը:

Կիսադղերի քարակղի վրա դառն Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի այն մասը, վոր պատկանում է ԽՍՀՄ-ին:

Գտե՛ք հետևյալ ծովերը՝ Բարենցի, Սպիտակ և Կարայի:


ԲԵՎԵՌԱՅԻՆ ԿՂԶԻՆԵՐ

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի սառցադաշտ մակերև- փույթից բարձրանում են բազմաթիվ մեծ ու փոքր կղզիներ:

Բևեռային կղզիներում տաքվա կեսից ավելին ձմեռ է լի- նում, և կղզիներն ովկիանոսի հետ միասին պատած են սառույց- ներով ու ծածկված են ձյունով:

Բնությունն այստեղ միայն 2—3 ամիս է կենդանանում: Ձյունը և սառույցները հալվում են: Քարաժայռերը մերկանում են: Տեղ-տեղ յերևում է սղքատ բուսականություն՝ դույնզգույն քարաքոսեր, կանաչ մամուրարձեր, մեծ ծաղիկներով ցածրա-

Հասակ խոտեր, բևեռային կախաչներ, անմոռուկներ, զանգուշ-
կիկներ:



Թռչնի շուկա

Կղզիների ծովափնյա ժայռերի վրա համարյալ են բազմա-
թիվ թռչուններ: Այստեղ բուն չինելու և ձաղեր հանելու համար
հարավից չվում են այդերուկները, սուղահամկերը, վորոնները:
Յերբեմն սրանց բների շարքը տարածվում է մի քանի կիլոմետր:
Թռչունների յերամներն ամպերի պես անցնում են ժայռերի վրա-
յով: Թռչունների աղմուկը լցնում է ողը: Զուր չե, վոր այդ
տեղերն անվանում են քոչնի շուկա:

Բայց ամառը բևեռային կղզիների վրա կարճատև է: Դեռ
ձյունն ու սառույցը բոլորովին չհալված՝ նորից վրա յեն հաս-

նում ցրտերը: Թռչունները թռչում են դեպի հարավ, և շուտով
ձմեռը կրկին վերադառնում է:

Դաժան է բևեռային կղզիների բնությունը:

Մարդիկ միայն վերջերս են սկսել բնակություն հաստատել
նրանց վրա:

ՆՈՐ ՅԵՐԿՐՈՒՄ

ՆՍՀՄ-ի քարտեզի վրա գտե՛ք Նոր Յերկիր կղզիները:

Առաջին բնակիչները — վաթսուն տարի առաջ Նոր Յերկիր
կղզիների ավին մոտեցավ մի նավ, վորի վրա գտնվում էին
նենեց-արդյունաբերողներ — Ֆոմա Վիլկան իր ընտանիքով և
ընկերներով:

Նրանք այի իջան, բարձրացան ժայռերը:

Վիլկան նայեց իր շուրջը: Սև ժայռոտ լեռներ, տեղ-տեղ
ծածկված ձյունով, մեկ ել ծերպերում մառնում... Վո՛չ մի
շունչ... Վո՛չ մի ձայն: Մարսափը պատեց նրանց:

Մտածում էին վերադառնալ տուն, բայց ծովափին մի կի-
տախարխուլ խրճիթ դտան և վորոշեցին մնալ: Տեղը նրանց
արդյունաբերության համար բավական հարմար էր: Հեռու տե-
ղերից դալիս էին այստեղ փոկերի մեծ հոտեր, լեռներում թա-
փառում էին բևեռային աղվեսներ և վայրի յեղջերուներ:

Վորսորդները շատ դաղաններ սպանեցին և սկսեցին հայ-
րենիք վերադառնալու պատրաստություն տեսնել:

Բայց Վիլկան չցանկացավ տուն վերադառնալ. նա իր կնոջ,
յերեխաների և մի ընկերով հետ մնաց այս կղզում: Նոր խըր-
ճիթ շինեցին: Մթերքների և վառուղի բավականաչափ սաշալ-
ուենային:

Մոտեցավ ձմեռը: Ծովը ծածկվեց սառույցով: Արևը թաղ-
նըվեց, քամիներն աղմկեցին: Սուլեց ձյունախառն փոթորիկը:
Ամեն ինչ ծածկվեց ձյունով: Ծանր է ձմեռը: Տնակը համարյա
ամբողջապես թաղվել էր խոր ձյունի մեջ. ստիպված էին լի-
նում ծխնելույզով դուրս դալ: Սպիտակ արջերը շատ անգամ
մոտեցան տնակին ուտելու բան ձարելու համար: Բայց ամենից
ծանրը մթությունն ու ցուրտն էր: Վիլկայի ընկերն այնպես էլ
դարնան արև չտեսավ — մեռավ:

Բայց ահա յերևաց արեւը: Յեկավ դարունը: Սառույցը շարժվեց ծովում: Սառույցների վրա յերևացին փոկեր: Յեկան թռչունները: Լեռներից աղմկելով ցած հոսեցին հեղեղները: Վիլկան շատ ծովային դադաններ ու թռչուններ խփեց:

Բայց նա կարտեւել եր մարդկանց: Նա նաւով ստույտ կատարեց Նոր Յերկրի շուրջը, վորպէսզի մի վորեւե մարդ դտնի: Սակայն վոչ մի տեղ վոչ վորքի չհանդիպեց:

Ձմեռը յեկավ ու կրկին անցավ: Հետեյալ դարնանը Վիլկան հանդիպեց արդունաբերողների, վորոնք տունդրայից ելին յեկել: Վիլկան իր ամբողջ վորսը վաճառեց արդունաբերողներին և փոխարենը ձեռք բերեց վառոդ, հրացան և մթերքներ: Արդունաբերողները վերադարձան տունդրա և պատմեցին, վոր Նոր Յերկրում առատ վորս կա, և վոր այնտեղ ապրում և վորս սորդությամբ ու ձկնորսությամբ և զբաղվում Վիլկան:

Այն ժամանակ տունդրայից չքավոր նեններն սկսեցին Նոր Յերկրի վոխադրվել: Այսպէս հիմնվեց առաջին բնակավայրը Նոր Յերկրում:

Նոր բնակիչներն արտել կաղմեցին և Վիլկային ել ավադ ընտրեցին:


Ծանր եր Նոր Յերկրի առաջին բնակիչների կյանքը: Շատերը նրանցից մեռան— վորը ընդախտից ու սովից մեռավ, վորը ծովում խեղդվեց, վորը սառույցների տակն ընկավ, ջարդվեց կամ սառույցը նրան բաց ծով տարավ, կորցրեց:

Ինչպէս փոխվեց կյանքը Նոր Յերկրում.— Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո կյանքը խիստ փոփոխության յենթարկվեց Նոր Յերկրում:

Այնտեղ այժմ մի քանի դյուդեր կան, վորոնք ունեն հիւ վանդանոցներ և գարոցներ: Կղզիների բնակիչները կաղմել են արտելներ: Ծովային դադաններ խփելու համար նրանք այժմ մօտորային նավակով են ծով դուրս դալիս: Վորսում են ձուկ և թռչուն: Թռչունների ձվեր են հավաքում: Մեծ քանակությամբ մօրթեղեն են ձեռք բերում:

Նոր Յերկիր են գալիս չողենաւերը, վորոնք բնակչության համար բերում են մթերքներ, վառոդ, զենք և այնտեղից տանում են մօրթեղեն, ձուկ, ճարպ:

Կառուցվել են մի քանի ռադիօկայաներ: Հիմա Նոր Յերկրի բնակիչները կարող են կապ պահպանել ամբողջ Միության հետ: Կաղմակերպված են հետազոտական կայաններ: Այդ կայաններում ուսումնասիրում են Նոր Յերկրի բնությունը:



Նոր Յերկրում


Նոր Յերկրում կա Խորհուրդ, վորը կարգավորում և Նոր Յերկրի բնակիչների կյանքը:

ԲԵՎԵՌԱՅԻՆ ՎՈՐՍԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Շատ ծովային դադաններ, ձկներ ու թռչուններ կան ԽՍՀ Միության բեռնային դոտում:

Այս հարստություններն ոգտադործելու համար խորհրդային կառավարությունն այստեղ կարգավորում և բեռնային վորսարդյունագործական տնտեսությունը: Կաղմվում են ձկնորսական և վորսորդական կոյեկտիվ տնտեսություններ: Հիմնվում են ձկնորսական բազաներ: Եւրոպայից և Երկրից արդարեւ տասնյակներով

Վորսորդական ու ձկնորսական նավեր ունի: Վորսորդներին և ձկնորսներին ոգնելու համար ոգտագործվում են սառցահատ նավերը, սավառնակները և ռադիոն:



Փոկերի վորսը

ՓՈԿԵՐԻ ՎՈՐՍԸ ՍԱՌՅԱՀԱՏՈՎ

Գարնանային արևի տաք ճառագայթները տակ թափանցիկ, կապտավուն սառույցների վրա տաքանում են փոկերը: Նրանք հազարներ են: Տաքանալով՝ նրանք ժամերով ներհում են, յերբևմն միայն կողքից-կողք դառնում:

Ձի ընում միայն մեկ ծեր, փորձված փոկ— պահակը:

Բարձր յերկնքում թռչում է սավառնակը: Դա ողային հետախույզն է արդյունադործական սառցահատից: Ողաչուն տեսով փոկերի պառկած հոտը և ռադիոյով հաղորդեց սառցահատին այդ տեղի մասին:

Շուտով հեռվում յերևում է սառցահատը: Վորսիսողի փոկերը չլիսխենան ու փախչեն, նա կանգ է առնում փոկերից բավական հեռու: Վորսորդները հաղնում են սղխաակ խալաթներ և իջնում սառույցի վրա: Նրանք, հրացանները ձեռքներին, կամաց, դադտագողի մոտենում են փոկերին: Ամենալավ հրացանաձիղը

գնում է առջևից: Նա անշիղ հարվածով սպանում է պահպան փոկին:

Սկսվում է արագ կրակոյ, և կարճ ժամանակամիջոցում սպանվում են հարյուրից ավելի փոկեր: Հրացանաձիգներն առաջ են գնում:

Հրացանաձիգներին հետևում են քերթողները: Նրանք ունեն մեծ, սուր դանակներ: Նրանք սպանված փոկերից հանում են կաշին և ճարսը:

Գալիս է սառցահատը, բարձում է փոսը և չարժվում գեպի փոկերի հաջորդ հանդատավայրը: Ողաչուն որս մասին արդեն սաղիսյով խմաց և տվել:

ԶԿՆՈՐՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կոլա թերակղզու հյուսիսային ափին, ալստեղ-ալստեղ ցրված են ձկնորսական կայաններ, ձկնորսական բաղաներ:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա դոն'ք Կոլա թերակղզին:


Հաճախ գալիս են ալստեղ առադամտային և մատորային նավեր և ծովածոցում խարխալ գցում: Վոմանք ձուկ են բերում, իսկ վոմանք, վերցնելով սղալար, սարք և խայծեր, գնում են վորսի:

Յերբ ձկան վորսն սկսվում է, նավերն անընդհատ ձուկ են կրում: Զուկը նավահանգստում դատարկում են, դարսում տակառների մեջ, վրան աղ ցանում և չոգենավերով փոխադրում պահեստները:

Զողաձուկը սովորաբար չարժվում է խիտ շերտով, վոր ունենում է մի քանի կիլոմետր յերկարություն և լայնություն: Նույնպիսի խիտ և մեծ շերտով է չարժվում և չոգենավերով փոխադրում: Հենց ալստեղ ել նրան ուղեկաններով փակում են և վորսում մեծ շերտներով, պարկերով, դուլլերով:

Զուկն աղ են գնում, չորացնում, ալխտում:

Մեծ քանակությամբ ձուկ վորսում են մանավանդ տրաուկերներով: Խորհրդային նոր տրաուկերը մի ամբողջ լողացող դործարան է:



Ձկան վորս տրտուկերով

Նա վոր միայն ձողաձուկ է վորսում, այլև այլ ձուկը մշակության և յենթարկում և դարձնում սրատրաստի մթերք:

Հենց վոր տրտուկերը ծով և դուրս դալիս, նրա վրա դանդաղ աղբոսկայանն սկսում է իր աշխատանքը: Ռազիստը կատվում է այն բոլոր տրտուկերների հետ, վորոնք այդ ժամանակ դանվում են ծովում, և ձկան շարժման մասին նրանց տված տեղեկությունների հիման վրա նավապետը նշում է վորտի տեղը:

Տրտուկերն ուղևորվում է դեպի նշած կետը: Տրտլը (հատուկ ցանց) իջեցնում են ծովը: Նավը շարժվում է, և սկսվում է վորսը:

Մի ժամից հետո տրտլը հանում են, ճախարակի միջոցով բարձրացնում, և ձուկը մատուցյալն «հասում է» տախտակամածի վրա: Տրտլը ժամը մեկ բարձրանում է և ամեն անգամ իր հետ բերում մոտ հազար կիլոգրամ ձուկ:

Սկսվում է ձկան մշակումը: Աշխատանքն քնթանում է շրջափայծի: Նավատուներից մեկը մեծ պատառաքողով բռնում է ձողաձուկը և դնում յերկաթե թիթեղով պատած մարտր սեղանի վրա: Մյուսը կացնի ճարպիկ հարվածով կտրում է ձկան գլու-

խը, և գլխատած ձուկն սկսում է սողալ սեղանի հարթ, փայլուն մակերևույթով: Այստեղ ճարպիկ ձեռքերը բռնում են ձուկը, սուր դանակով վորը ճեղքում և վորոտիքը հանում:

Ձուկը ձեռքից ձեռք է անցնում: Մաշկահան են անում, յերկայնքով յերկու մասի բաժանում և հանում վորդնաշարը: Ձկան փայլուկ մասերն աղ են դնում և տեղափոխում նավի շտեմարանը:

Հենց այստեղ ել, տրտուկերի վրա, վոսկրներից վոսկրային ալյուր են պատրաստում, իսկ ձողաձկան լյարդից ձկան յուղ են հանում, վորը դործ է ածվում վորպես բուժիչ և սննդայար նյութ:

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ՀԱՆԱՊԱՐՀԸ

Մեր Միության հեռավոր հյուսիսում բնական շատ հարստություններ կան:

Լայն շերտով հազարավոր կիլոմետր տարածության վրա ձգվում են դարավոր անտառներ, այդ անտառներում շատ թանկարժեք մորթատու դողաններ կան: Զանազան տեղերում գտնվել են ածուխ, նավթ, գրաֆիտ և ուրիշ ոգտակար հանածոներ:

Բայց ի՞նչ ճանապարհով դուրս բերել այդ հարստությունները տալոյայի և տունդրայի ընդարձակ դժվարանցանելի տարածությունների վրայով:

Նայեցե՛ք Խորհրդային Միության քարտեզին: Ընդարձակ ջրանատ գետերը շատ տեղերում կտրում են Միության ամբողջ հյուսիսային մասը և իրենց ջրերը տանում դեպի հյուսիսային բևեռային ծովերը: Այդ ծովերով ամառը կարելի չէ գնալ Միության հյուսիսային ծովափի ցանկացած հեռավոր կետը, ինչպես և ուրիշ յերկրներ:

Բայց հյուսիսային բևեռային ծովերով նավարկելը դժվար և վտանգավոր է: Շատ նավեր են խորտակվել նրանցում՝ ձգմվելով սառույցներից:

Խորհրդային կառավարությունը խնդիր է դրել լավ հետազոտել այդ ծովերը և բացել անվտանգ ծովային ճանապարհ ինչպիսիք:


Այս նպատակով ամեն տարի ուղարկվում են հզոր սառցա-
հատներից և սալառնակներից բաղկացած զիտարչավներ: Նրանք
ուսումնասիրում են բեկռային ծովերը:

Արդեն շատ խորհրդային զիտարչավներ մեկ ամառվա ըն-
թացքում անցել են Մաուրցյալ օվկիանոսը մեր Միության
Հյուսիսային ամերի մոտով:

Կղզիների վրա չինված են բեկռային շատ կայաններ, վորոնք
յեղանակի և բեկռային սառույցների շարժման վերաբերյալ մըշ-
տական զիտողություններ են կատարում: Նրանք իրենց զիտո-
ղությունները սաղիոյով հաղորդում են այն բոլոր նավերին, վո-
րոնք լողում են բեկռային ծովերում:

Վերջին տարիներում սիրելյան մեծ զետերի գետարերան-
ներին են մոտենում տասնյակ առևտրական նավեր:

1935 թվից սկսած բացվել է ապրանքատար նավերի ուղղա-
կի հաղորդակցություն Մուրմանսկից դեպի Վլադիվոստոկ և
ընդհակառակը: Դրա համար Հյուսիսային ծովային ճանապարհի
մի քանի տեղերում տարադրվում են հզոր հերթապահ սառցա-
հատներ: Նրանք ուղնում են նավերին անցնել այն տնդից, վոր-
տեղ ծանր սառույցներ են կուտակվել:



Եթայեղիցիաների քարտեղը՝ Հյուսիսային ծովային ճանապարհով

Բայց բեկռային ծովերը դեռ լավ ուսումնասիրված չեն, և
նավերը շատ տեղերում դեռևս շատ վտանգավոր է: Այդ պատ-

ճառով ել Հյուսիսային բեկռային ծովերի հետազոտությունը
դեռ շարունակվում է: Կաղմակերպվում են նոր զիտարչավներ:
Ձանաղան տեղերում կառուցվում են բեկռային նոր կայաններ:

Դաժան է կյանքը բեկռային կայաններում: Ծանր են նավե-
լու պայմանները բեկռային ծովի սառույցների մեջ: Մեծ հա-
տատակամոթյուն, տոկունություն և խիզախություն ունեն այն
հարյուրավոր խորհրդային աշխատողները, ծովագնացներն ու
զինանկանները, վորոնք կովի յեն բռնվել Մաուրցյալ օվկիանո-
սի դաժան բնության հետ Հյուսիսային Մեծ ճանապարհի հա-
մար, մեր բեկռային գոնայի յուրացման համար:

Արտադրական աշխատանք. — Լրագրերի միջոցով հետևեցիք թե ի՞նչպե-
ս են անցնում այս տարվա բեկռային զիտարչավները: Գարտեղի վրա վորոնք
զրոգանքով նշանակեցեք նրանց անցած ճանապարհները:

«ՁԵԼՅՈՒՍԿԻՆՆ» ԱՐՇԱՎԸ

Այս հոգվածը կարդալիս պետք է շարունակ հետևել քարտեղին:

1933 թ. ոգոստոսին Մուրմանսկից դուրս յեկավ «Ձելյուս-
կին» բեկռային մեծ չոդենավը: «Ձելյուսկինը» տանում էր զի-
տարչավ՝ Հյուսիսային ծովային ճանապարհի ուսումնասիրելու
համար:

Գիտարչավի պետն էր նշանավոր զինանկան և բեկռային
հետազոտող Ռ. Յու. Շմիդտը: Շոդենավը վարում էր փորձված
բեկռային կապիտան Վորոնինը:

ԱՌԱՋԻՆ ՍՍՌՈՒՅՑՆԵՐԸ. — Առաջին յերեւ ուր «Ձելյուս-
կինը» դնում էր Բարենցի ծովով:

Ողղաղ էր: Տաք: Մեկ-մեկ պատահում էին ձկնորսական
խոշոր նավեր: Յերբեմն, հեղքելով ջուրը, ծովի մակերևույթի
վրա յերեւում է կեռի մեջքը:

Յերբորդ ուր չոդենավը մոտենում է Նոր Յերկրի ձյունա-
պատ ժայռոտ ամերին: Կղզիների միջև գտնվող նեղուցով դուրս
է դալիս Կարայի ծովը:

Կարայի ծովում չոդենավը հանդիպում է սառույցների:
Շուտով «Ձելյուսկինը» ընկնում է համատարած սառույցների մեջ:

Սառույցները հսկայական ուժով դարձվում են շողենալի կողերին: Կապրտան Վորոնինը, շարունակ փոխելով նավի ուղիները, աշխատում է թուլացնել հարվածները: Բայց այդ քիչ է ունենում: Մեծ սառույցների հետ ունեցած հենց առաջին բազմաթիվ ժամանակ «Չելյուսկինը» ճեղքվածք է ստանում: Պետք էր նորոգել նավը:

Վերջապես, սառույցները դառնում են անանցանելի: «Չելյուսկինը» ստիպված է կանգ առնել: Ռադիոյով ողնուխիան կանչված «Կրասն» սառցահատը հանում է նրան ծանր սառույցների միջև:

Շողենավը շարունակում է իր ճանապարհը: Նրա վրա վոչ մի բոլոր չի բնդհատվում կազմակերպված աշխատանքային կյանքը: Կապրտանն իր կամրջակից աչալուրջ հետևում է ծովին: Գիշեր-ցերեկ լսվում է շուռքմանի հրամանը: Գիշեր-ցերեկ կանդնած են մեքենավարները շողենավի կաթսաների մոտ: Յուրաքանչյուր չորս ժամը մեկ փոխվում է նավաստիների պահնորդությունը: Գիտական աշխատավորներն անընդհատ դրազված են հետադոտությունից:

Շողենավը դանդաղորեն առաջ է գնում Կարայի ծովով: Սառույցներից աղատվելով, նա ընկնում է խիտ մառախուղի մեջ: Մառախուղից հաղիվ աղատվում է— կրկին անանցանելի սառույցներ:

Վերջապես 17-րդ օրը շողենավը մոտենում է Չելյուսկին հրվանդանին: Յեվ ի՞նչ ուրախություն: Այստեղ նա հանդիպում է Նորհրդային Միության բեկռային հինգ լավ նավերի:

«Չելյուսկին» ՉՈՒԿՈՏՅԱՆ ԾՈՎԻ ՍԱՌՑԵ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.— Չելյուսկին հրվանդանից հետո շողենավն ամբողջ 10 օր գնում է դեպի Բերինգի նեղուցը, հհանդիպելով վորեն արգելի:

Արդեն հեռու չե վրանդելի կղզին, իսկ նրանից հետո մնում է վերջին ծովը— Չուկոտյան ծովը: Բայց սա ճանապարհի ամենադժվար մասն է: «Չելյուսկինը» կրկին ծանր սառույցների մեջ է ընկնում:

Մոտենում է ձմեռը: Սառույցներն սկսում են իրար հետ

մխանալ, ստոչել: Շողենավն ավելի ու ավելի դանդաղ է առաջ շարժվում: Հաճախ սառույցներն այնպիսի մեծ ուժով են ճընշում շողենավը, վոր նա շարժվում է նրանց ճնշման ուժով:

Ահա, վերջապես, Բերինգի նեղուցը...

Հանկարծ, բոլորովին անսպասելի կերպով, սառույցները ճնշում են դեպի յետ և շողենավը կրկին Չուկոտյան ծովը տանում...

Գալիս է ձմեռը և սառույցները վերջնականապես չլիքացում են ծովը: Շողենավը ստամ մնում է հսկայական սառցադաշտի մեջ... Ստիպված են ձմեռել սառույցների մեջ: Շողենավը սայի կրակարանները հանդցնում են, վորպեսզի վառելիքը տնտեսվի:

Բայց չելյուսկինցիները չեն վհատում ձմեռելուց: Գիտական աշխատավորներն ավելի մեծ յեռանդով շարունակում են իրենց հետադոտությունները: Բոլորն սկսում են ամենայն լրջությամբ սովորել:

«ՉԵԼՅՈՒՍԿԻՆ» ԽՈՐՏԱԿՈՒՄԸ.— Արդեն յերկու ամսից ավելի յե, ինչ «Չելյուսկինը» ձմեռում է Չուկոտյան ծովի սառույցների մեջ: Հսկայական սառցադաշտի հետ միասին նա թափառում է ծովում:

Ծովը ծածկած սառցադաշտերը սեղմում են իրար: Սառույցները զգրգոցով և ճաթյունով կտրտվում, փչլվում են և իրար վրա կուտակվում:


Անցնում է դեկտեմբերը, հունվարը: Ահա արդեն փետրվարի 13-ն է: «Չելյուսկինը» վրա կյանքն ընթանում է ինչպես միշտ, թեպետ այժմ ավելի հաճախ են լսվում կոտրուկ սառույցների հարվածներ ու ճարձատյուններ: Բայց բոլորն ընտելացել են դրան: Միայն նավի հրամանատարական կադրը Շմիդտի և Վորոնինի ղլխավորությամբ աչալուրջ հետևում է սառույցներին: Յեվ իդուր չե վոր հետևում են:

Հանկարծ ցերեկվա ժամը 2-ին լսվում է չհմեցնող հարված, և սառցե վիթխարի պատը շարժվում է դեպի «Չելյուսկինը»: Նավի կողքում մեծ ճեղքվածք է առաջանում:

Անհրաժեշտ պաշարն անմիջապես սառույցների վրա իջնցնելու հրաման է տրվում: Մի քանի վայրկյանից հետո բոլորն ի-

դենց տեղերումն են, և դատարկելու աշխատանքը լրիվ չափով ե ընթանում: Վոչ մի իրարանցում, վոչ մի աղմուկ...

Սառույցները նորից ճնշում են շողենավը: Մեկը մյուսի հետևից տրաքվում են շրջաձածկի յերկաթե թերթերը: Շողենավի ձախ կողքը պատռված է: Զուրն սկսում է նավի ներսը թափանցել:



«Չեյուսկին» խորտակումը

«Չեյուսկինը» սուզվում է: Բոլորն այդ պարզ տեսնում են: Բայց վո'չ ճիշ, վո'չ հուսահատություն: Աշխատանքը շարունակվում է: Շուտով բոլոր անհրաժեշտ պաշարը, դիտական դորժիքները և նյութերը սառցի վրա յեն: Բայց ահա նավի քիթն սկսում է թեքվել: Տախտակամածը ծածկվում է ջրով: Լսվում է հրաման՝ «թողնել նավը»:

Շողենավի քիթն արագորեն ջրի տակ է անցնում: Նավախելը բարձր ցցվում է ջրի վրա:

Ամենից վերջը շողենավը թողնում են դիտարչավի պեռ Շմիդտը և կապիտան Վորոնին: Մի քանի վայրկյան ևս, և «Չեյուսկին» անհետանում է սառույցների տակ:

ՃԱՄԲԱՐ ՍԱՌՅԻ ՎՐԱ. — Շողենավը խորտակվեց, և մարդիկ մնացին անթիւն՝ սառցե անապատի մէջ:

Մթություն է: Փոթորիկ: Սաստիկ սառնամանիք:

Շտապ կանդնեցնում են ռադիոկայմը, վրաններ են դնում: Աշխատելը սոսկալի ծանր է. դորժիքներ չկան, սառնամանիքից մատները չեն ծալվում, քամին գլորում է նրանց, բուքը կուրացնում է աչքերը: Վերջապես, ուժառայու, թրջված, սառած՝ բոլորը մտնում են վրանները և քնում ծանր քնով:

Առավոտը նրանց հուսադրող լուր է բերում. Ուելլենի ռադիոկայանը (Չուկոտյան թերակղզու վրա) լսում է չեյուսկինցիներին: Շմիդտը ռադիոյով հաղորդում է Մոսկվա շողենավի խորտակման մասին:

«Կաղատեն... Պետք է միայն դիմանալ», — մտածում է ամեն մեկը:

Աստիճանաբար կյանքը կարգի յե ընկնում: Ճամբարի վրա ծածանջվում է խորհրդային կարմիր դրոշակը:

Ռադիոյով լուր են ստանում Մոսկվայից, վոր ողնության են ուղարկվում սավառնակներ, դիրիժարներ և «Կրասին» սառչահաար: Բոլորի տրամադրությունն ավելի ևս բարձրանում է: Սկսում են վնտուել և մաքրել՝ հրապարակնք՝ սավառնակների վայրեջքի համար:

Բայց այն սառցադաշտը, վորի վրա դանվում է ճամբարը, չարունակ չարժվում է: Այստեղ-այնտեղ յերեան են դալիս մեծ ճեղքեր, սառույցները կուտակվելով իրար վրա՝ հակայական թմբեր են առաջ բերում: Մեկը մյուսի հետևից կոտորանվում են և անբողբոմները: Սառցակույտը քանդում է խոհանոցը, իսկ մի ուրիշ անդամ՝ հանրակացարանը: Մի անգամ քիչ մնաց սառցի տակ անցներ ռադիոկայմը: Ճամբարն ամեն մի բուպե վտանդի մեջ է: Իսկ ողնություն դեռ չկա: Սանդաղում են բուքը և մառախուղները: Արդեն մոտ մեկ ամիս թափառում է ծովում լողացող ճամբարը: Բայց չեյուսկինցիները չեն վհատում: Նրանք բոլլեիկյան համառուլյամբ կռվում են սառույցների դեմ, չարունակում են հետադուտել Չուկոտյան ծովը: Կոմունիստները և կոմյերիտականներն ամեն տեղ ամենածանր և պատասխանատու աշխատանքի մեջ կանգնած են Խուլին չարքերում:

Աշխույժ տրամադրություն պահպանելու համար կաղմուկերպում են ընթերցանություն, խաղեր, յերպեցողություն, լույս են ընծայում պատի թերթ՝ «Անճառաուր չենք լինի»:

Կերջապես, մեկ անգամ ճամբարի վրա յերևաց սավառնակը, վերը ճեղքեղ-անցել եր մառախուղը և բուրբը: Չեղյուսկինցիների առաջին խումբն աղատված է:

Բայց մառախուղն ու բուրբը սաստկանում են: Ստիպված էն դարձյալ սպասել:

Մի ամբողջ ամիս լողացող ճամբարում դեռ չարունակվում և համառ կռիվը սառույցների դեմ:

Ամբողջ Խորհրդային Միությանը լրագրերի միջոցով լարված հետևում է, թե ինչ և կատարվում հեռավոր հյուսիս-արևմելքում: Բոլորն անհամբեր սպասում եյին պարզ ու խաղաղ որերի՝ Չուկոտյան ծովում:

Վերջապես, ապրիլի սկզբին գալիս են այդպիսի որեր: Սավառնակները մեկը մյուսի հետևից իջնում են սառույցների վրա և տանում չեղյուսկինցիներին: Ապրիլի 13-ին թռչում են վերջինս վեց հոգին: Բոլորն ել աղատված են:

Ուրախությամբ ու հպարտությամբ դիմավորում և չեղյուսկինցիներին ու նրանց աղատող հերոս ուղահուններին ամբողջ յերկիրը:

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՈՒ» ԲԵՎԵՈՒՄԻՆ ԿԱՅԱՆԸ

Դեռ մինչև հիմա Հյուսիսային բեվեում յերբեք մարդիկ չեն ապրել: 1937 թ. խորհրդային չորս ինքնաթիռներ հասան հյուսիսային բեվեո և վայրեջք կատարեցին մի մեծ լողացող սառցի վրա: Յած դրին բեվեոյին կայանի կահավորությունը ու հետազոտողների համար բնակելի վրան չինեցին:


Ինքնաթիռները թռան-գնացին: Սառցի վրա մնացին բեվեոյին չորս հերոս հետազոտողներ՝ Պապանինը, Կրենկելը, Շերովը և Ֆեդորովը: Նրանց չուրջը հազարավոր կիլոմետրի վրա տարածվում եր սառցապատ ովկիանոսը:

Սկսվեց աշխատանքը: Ամեն որ որական չորսական անգամ նրանք դիտում եյին յեղանակը և ռադիոյով հաղորդում իրենց դիտումները:

Հինգ մետրանոց պողպատե սարանով չափում եյին Հյուսիսային Սառույցյալ ովկիանոսի խորությունը, հետազոտում եյին ջրի կազմությունը:

Սառույցը, փորի վրա ապրում եյին պապանինականները, չարժվում եր հարավ՝ տարվելով ծովային հոսանքներով և քշվելով քամիներից: Համարյա ամեն որ արևով և աստղերով վորոշում եյին, թե Հյուսիսային բեվեոյից ինչքան և հեռացել սառցադաշտը: Սառույցները չարժվում եյին, սառույցների վրա կիավում եյին սառցակույտեր: Հետազոտողները յուրաքանչյուր բուրբ պատրաստ եյին փրկելու դիտական գործիքները, մթերքը և նույնիսկ իրենց կյանքը:

Անցավ մայր չմտնող արևով ամառը, անցավ աշունը, յեկավ ձմեռը, նրա հետ միասին նաև բեվեոյին յերկար դիչերը, յերբ ամիսներով արեւը չի յերևում յերկնակամարում: Լողացող սառցադաշտի վրա աշխատանքը չդադարեց: Աշխատում եյին լամպերի լույսով:



Բեվեոյին կայան

Հսկայական աշխատանք եյին թափում մթնադիչերը, ձյունոտ բուրբին ու փոթորիկին այն ճեղքին հասնելու համար, ուր ովկիանոսի խորությունը չափումներն եյին կատարում: Տառացի կերպով քամին վայր եր պցում նրանց, ձյունը լցվում եր աչքերը: Մի անգամ ճանապարհը կորցրին և քիչ մնաց կորչելին իրենց բնակարանի մոտերքում:

Բայց այդ դժվարութիւններն եւ չընդհատեցին աշխատանքը: Պարանն անցկացրին և բռնելով նրանից՝ հասնում էին ճեղքին: Աշխատանքը շարունակվում էր, անկախ յեղանակից:

Ինն ամիս ապրեցին հետադուստրները լողացող սառցադաշտի վրա և լողացին նրա վրա յերկու հազար կիլոմետրից ավելի տարածութիւն: Առանձնապէս դժվար էր նրանց համար վերջին ամիսը:

Ամեն բոլե նրանց խորտակում էր սպառնում: Սառցադաշտը ճեղքճեղքվում էր զանազան ուղղութիւններով, բաժանվում էր կտորներով: Հերոս հետադուստրները ապրում էին սառցադաշտի փոքրիկ կտորի վրա, բայց վաղ վրձ մի բոլե չընկճվեց, շարունակվում էր գիտական աշխատանքը, և ամեն որ սահմանված ժամերին սաղիւյով հաղորդում էին յեղանակի մասին տեղեկութիւններ:

Նրանք համոզված էին, վոր իրենց մասին մտածում և մտահոգված է ամբողջ խորհրդային յերկիրը:

Յեւ նրանք չսխալվեցին: Անհրաժեշտ մոմենտին ուղարկվեցին խորհրդային սառցահատները, և խորհրդային խիզախ նավաստիները վերջին հերոսներին սառցադաշտից:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՌԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՅԵՂԱՆԱԿԻ ՎՐԱ

Գիտական հետադուստրներն ապացուցում են, վոր Հյուսիսային բևեռային շրջանի յեղանակը մեծ աղբեցութիւն ունի մեր յեղանակի վրա: Հյուսիսային բևեռային շրջանը մի հսկայական սառցարան է, վորտեղից դեպի մեզ փչում են ցուրտ քամիներ: Վորքան չափ սառույցներ են կուտակվում Սառուցյալ ովկիանոսում, այնքան ավելի ցուրտ է լինում մեզ մոտ:

Բևեռային դոտում ամեն տեղ նույն կլիման չէ: Ինչպես դիտել, սառցապատ ովկիանոսի մեջ գտնվող ջրի տաք շերտը կախված է Գոլֆստրիմ տաք հոսանքից: Յեթե չլինէր այդ հոսանքը, Յեվրոպայի Հյուսիսը բռնված կլինէր սառույցներիով, դաժան սառնամանիքը կպատեր բոլոր կենդանի երկրներին: Տաք հոսանքի ջերմաստիճանի մեջ տեղի ունեցող ամեն մի փոփոխութիւն անդրադառնում է մեր յեղանակի վրա: Մեզ մոտ

յեղանակը ճիշտ դուշակելու համար, մենք պետք է իմանանք, թե ինչպես է փոխվում յեղանակը Հյուսիսային բևեռային դոտում, ինչպես են շարժվում սառույցները Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում:

Վարժուքյուններ.— Ուրվագծային քարտեզի վրա ԽՍՀՄ բևեռային դոտը շուրջը գլծ քաշեցէ՛ք: Գրեցէ՛ք բևեռային դոտու ծովերի և կղզիների անունները:

Արտադասյամ աշխատամք.— Բացիկներից, լրագրերի և ամսագրերի նկարներից և իշուստրացիաներից կազմեցէ՛ք ալբոմ՝ «ԽՍՀՄ-ի բևեռային դոտին»:

2. ՏՈՒՆԴՐԱՅԻ ԳՈՏԻ

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ամբողջ ամբողջ Խորհրդային Միութեան յերկայնքով մի շերտով ծղվում է տունդրան:

Բնական դոտիների քարտեզի վրա գտէ՛ք տունդրայի դոտին:

ՏՈՒՆԴՐԱՅՈՎ ԶՄԵՌԸ

Յեղջերուները մեզ արագորեն տանում էին տունդրայով: Մեր շուրջը փռվում էր ձյունապատ անսահման հարթութիւն: Նա փախչում էր դեպի յետ. ամայի, միապաղաղ: Ամեն ինչ սպիտակ էր: Մեր շուրջը մի բլծ անգամ չէր նշմարվում:


Սուր սառեցնող քամին շունչներս կտրում էր և ձյունի փոշին ածւում մեզ վրա: Զմեռային կարճ ցերեկը, կամ, ավելի ճիշտ՝ ձմեռային աղջամուղջն արագ անցավ: Գիշերը վրա յեր հասնում: Մշուշը խտանում էր:

Քամին մի ակնթարթ դադարեց, բայց հետո սկսեց մոնչալ նոր ուժով:

Հանկարծ ձյունի հսկայական զանգվածներ թափվեցին մեզ վրա: Բուքն սպիտակ միապաղաղ շերտով պատվում էր մեր տեր: Սահնակները մերթ ծանրացած՝ դանդաղորեն բարձրանում էին ձյունաթմբերի գլուխը, մերթ շեշտակի ուր վոր ցած էին սահում: Զյունն մրրկին արդեն մի քանի ժամ էր շարունակվում էր, բոլորովին չթուլանալով

Մենք մի քանի անգամ կանգ առանք յեղջերուներին հանդըստացնելու համար: Վերջապես, նրանք բոլորովին ուժատապառ յեղան և կանգ առան:

Մենք սահնակներեց մորթիներ հանեցինք և վրանի նման մի



Ձմեռը տունդրայում

բան պատրաստեցինք: Մինչդեռ մենք զբաղված էյինք, ձյունը մեզ բոլորովին ծածկեց:

Մոտ 4 ժամ մնացինք ձյան տակ պառկած:

Յերբ ձյունաթմբի տակից դուրս յեկանք, քարացանք զարմա քեցից:


Կարծես բուք բոլորովին չեր ել յեղել: Մեր չուրջը հեղեղված էր բեկռային շողշողուն լույսով: Ձյունի հարթությունը կաճկլտում էր և ծխածանի բոլոր գույներով շողշողում: Մենք յեղջերուները լծեցինք և առաջ գնացինք: Յեղջերուները հանդըստից հեռու կրկին սկսեցին վազել արագ և հալածար քայլով:

Սկսեց լուսանալ: Շուտով յերեացին յերեք վաչիկ (վրան):

ԱՄՍՈՒՐ ՏՈՒՆԴՐԱՅՈՎ

Չորս ամիս հետո մենք նույն ճանապարհով վերադառնում էյինք: Ամառ էր: Տունդրան չեր կարելի ճանաչել: Նա այժմ ամբողջապես ծածկված էր կանաչ ու դուր ժամուռներով, մոխ-

բաղուն քարաքոսերով—յաղելով: Մամուի միջից կարմրին էյին տալիս լեռամբի պառլիները, նայում էյին ճախնամորու թփերը, կապույտ հապալասները: Տեղ-տեղ աչքի էյին ընկնում անմոռուկների, բեկռային կակաչների և դեղին ակոնիտոնի ծաղիկների վառ բծերը: Տեղ-տեղ յերևում էյին դաճաճ կեչիներ, ռուկներ:



Ամառը տունդրայում

Վոր կողմն ել նայում ենք, ամենուրեք փայլում են անհամար լճեր: Բարձր տեղից նրանք կապույտ, փայլուն հայելիների էյին նմանում: Արևն ամենեկին մայր չեր մտնում: Տունդրայում կյանքն ամբողջ ուր յեռում էր: Միլիոնավոր սագեր, բաղեր, կարապներ և ուրիշ թռչուններ ծածկում էյին լճերը և թռչում էյին ողում: Գիշեր-ցերեկ լճերի վրա աղմկում էյին թռչունները:

Մենք հանգստանում էյինք լճի ափին: Այստեղ մի փոքրիկ բլրի վրա գտնվում էյին նենների վրանները: Նեններն ամբողջ ուր թռչուններ էյին վորսում, ձկներ բռնում, ապխտում, չորացնում ձմեռվա համար պաշար էյին պատրաստում:

Ամառային արեգակը լուսավորում էր և տաքացնում: Մարդկանց և յեղջերուների համար առատ սնունդ կար: Բայց

մոծակները թունավորում եյին նրանց կյանքը: Նրանք մեծ խմբերով թուչում եյին ողում՝ մշուշի նման չըջապատելով ամեն մի կենդանի եյակ: Նրանք այնքան շատ եյին, վոր մարդ հազիվ եր կարողանում շնչել: Յեղջերուների հոտերը խելադարի պես վազում եյին բաց տեղեր, վորտեղ մոծակ քիչ ե լինում, վորովհետեւ բաց տեղերում քամին քշում եր մոծակներին:

ՏՈՒՆԴՐԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ-ի բնական գոտիների և ֆիզիկական քարտեզի վրա դեմք տունդրայի գոտին:

ՏՈՒՆԴՐԱՅԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ.— Համարյա ամբողջ տարածությունը, վոր բռնված ե տունդրայով, քարտեզի վրա ներկված ե կանաչ գույնով: Այդ նշանակում ե, վոր տունդրայի մակերեսովթը հարթ ե: Մի քանի տեղերում տունդրան ծածկված ե բլուրներով: Քարտեզի վրա բլուրները ցույց չեն արված, քանի վոր քարտեզը շատ փոքր մասշտաբի յե: Պատահում են և լեռնոտ տունդրայի տեղամասեր:

Դիտեցե՛ք քարտեզը և ցույց տվե՛ք այն տեղերը, վորտեղ լեռները կրում են տունդրան:

ԿԼԻՄԱՆ.— Տունդրայի համարյա ամբողջ գոտին դառնվում ե բևեռային շրջանից հյուսիս, վորտեղ արեգակը ձմեռը մի քանի օր և նույնիսկ մի քանի ամիս չարժնակ բոլորովին չի յերեւում: Տունդրայի ամերը վողողում են ցուրտ ծովերը, վորոնց մեջ ամառվա ընթացքում անգամ լողում են սառույցներ: Այդ պատճառով ել տունդրայի կլիման խիստ ե: Ձմեռն այստեղ տեւում ե 8-9 ամիս: Հաճախ լինում են սոսկալի սառնամանիքներ և բուքեր. հաճախ փչում են ցուրտ և չոր քամիներ: Ձյուն քիչ ե գալիս, և դեռինը սառչում ե մեծ խորությամբ:

Ամառը տունդրայում կարճատեւ ե: Արեն որեր և ամիսներ չարժնակ մայր չի մտնում, բայց կեսօրին անգամ շատ չի բարձրանում յերկնակամարում և յերկիրը քիչ ե տաքացնում: Այդ պատճառով ել տունդրայում վաղ այնքան մեծ խորության

մեջ 50-100 սանտիմետր դառնում ե հավերժական սառածության շերտ:

ՏՈՒՆԴՐԱՅԻ ԳԵՏԵՐՆ ՈՒ ԼՃԵՐԸ.— Հավերժական սառածության շերտը չի թողնում, վոր հալված ձյունի ջրերն անցնեն դեռնի խորքերը: Այդ պատճառով տունդրան հարուստ ե լճերով և ճահիճներով:

Քիչ չեն և ջրառատ գետերը, վորոնք կտրում են տունդրան: Այդ գետերի մեծ մասն սկսվում ե հեռու հարավում: Տունդրայում նրանք հոսում են միայն փոքր տարածության վրա և թափվում են բևեռային ծովերը:

ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա դեմք հետեյալ գետերի դեղագետները՝ Պեչորա, Ուր, Յենիսեյ և Լենա:

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.— Տունդրայի բուսականությունը հարուստ չե: Այստեղ անտառներ չկան, վորովհետեւ դեռինը փոքր խորությամբ ե միայն հալչում: Ցածրադիր տեղերում աճում են մամուռներ, բարձրադիր տեղերում՝ ֆարաֆսեր, սրանցից ամենից հաճախ պատահում ե յագելը: Յերբեմն պատահում են դեռնի վրա փովող մանր ծառեր՝ գամա կեչի, ուլի, սոմի: Մամուռների մեջ շատ կան հատապտուղ բույսեր՝ լոռամրգի, մախնամորի, կապույտ հապալաս, հավամրգի: Միայն ցուրտ քամիներից պաշտպանված տեղերում աճում են խոտեր՝ դուլնիզդույն, վառ ծաղիկներով:

Տունդրան անտառազուրկ տարածություն ե՝ մամուռ և քարաքոսերով ծածկված:


Տունդրայի կենդանական բնակչությունը շատ բաղմաղան չե, բայց բաղմաթիվ ե:

Բներում ապրում են բևեռային անթիվ մկներ, վորոնք կերակրվում են քարաքոսերով և տունդրայի ուրիշ բույսերով:

Բաղմաթիվ լճերի ամերն ամառը ծածկված են չվող թռչուններով՝ քաղերով, սագերով, կարապներով: Այստեղ նրանք դառնում են առատ սնունդ՝ ջրային բույսեր, մանր ձկներ և ջրային ուրիշ կենդանիներ: Գետերում և լճերում բաղմաթիվ ձկներ կան:

Տունդրայում շատ կան նաև բևեռային աղվեսներ (песец) և բևեռային բվեր, վորոնք կերակրվում են մկներով և չվող

թուզուներով: Հաճախ պատահում են և դայլեր: Սմառը տունդ-
բայի ողջ լցվում է մոծակների բզզոցով, վորոնք ամպերի պես
հետապնդում են ամեն մի կենդանի եյակի:



Բեկեռային բու և կաքավ



Բեկեռային աղվես և մուկ

ՏՈՒՆԴՐԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տունդրան բռնում է յերկու անգամ ավելի մեծ տարածու-
թյուն, քան Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան միասին վերց-
րած: Այդ հսկայական տարածության վրա շատ նոսր է բնակ-
չությունը: Քաղաքներ այնտեղ քիչ կան, այն ել վոչ մեծ:

Տունդրայում ապրում են հետևյալ ժողովուրդները՝ ցեմ-
ները, սամները (լոսարները), լառավետլանները (չուկչա-
ներ), ուսները:

Գարտեղի վրա՝ ԵՂ 164, գտե՛ք, վո՛րտեղ են ապրում այդ ժողովուրդները:

Տունդրայի ժողովուրդները գլխավորաբար զբաղվում են
յեղջերվապահությամբ, վորսորդությամբ, ձկնորսությամբ:
Համարյա բոլորն ել քոչում են տեղից-տեղ՝ անընդհատ սնունդ
վորոնեղով թե իրենց և թե յեղջերուների համար:

Տունդրայի վաչկատուն բնակչության կյանքն առաջ մեծ
կախում ունի նրան չըջապատող դաժան բնությունից:

Յեթե չըջակաքում առատ կեր կար յեղջերուների համար,
վորոն առատ եր, տունդրայի բնակիչն ել լավ եր ապրում:
Բայց ահա դետինը սառցի բարակ շերտով ծածկվեց—յեղջերուն
այլևս կեր չունի, նա նիհարում է և սատկում: Գաղանները հե-

ռանում են ուրիշ տեղ, թսկարդները մնում են դատարկ: Այդ
ժամանակ ալորուստը դժվարանում եր, վրա յեր հասնում սովը,
հիվանդությունը և աղքատությունը:

Տունդրայի բնակչության մեջ դեռ մինչև վերջերս հանդի-
պում եյին կուլակներ: Այդ մարդիկ փորձում եյին խանդարել
խորհրդային շինարարությունը: Չեն վերացել վորոշ տեղե-
րում նաև հողեորականները (չամանները), վորոնք տունդրա-
յի վաչկատունների մեջ պահպանում են սնտախալաչությունը
և փորձում են խաբել նրանց:

Խորհրդային իշխանությունը համառ պայքար է մղում
տունդրայի ժողովուրդների կյանքը վերակառուցելու համար:

ՆՆՆՆՆՐԸ

Նենները յեղջերվապահներ են: Նրանց համար յեղջերուն
չափազանց կարևոր կենդանի յե: Նեններն ալորում են վրանե-
րում, վորոնք ծածկված են յեղջերվի մորթով: Քնում են յեղ-
ջերվի մորթու վրա, կերակրվում են յեղջերվի մսով, յեղջերվի
մորթուց յոր են կարում:

Յեղջերուները կերակրվում են գլխավորապես մոխրագույն
քարաքոսերով—յադելով, վորով ծածկված են տունդրայի ըն-
դարձակ տարածությունները: Յերը յեղջերուներն ուտում, վեր-
ջացնում են յադելը, այն ժամանակ նենները քոչում են նոր
արոտատեղեր:

Նենների համար մեծ նշանակություն ունի նաև մորթատու
և ծովային գաղանների վորսը: Վորսում են բեկեռային աղվես-
ներ, գայլեր, աքեր, ծովացուլեր և փոկեր: Մորթատու գա-
ղանների վորսն սկսվում է հենց ձմռան սկզբից:

Ամառն զբաղվում են ծովային գաղանների վորսով, ձկնոր-
սությամբ, թռչնորսությամբ և ձվեր հավաքելով:

Չմեռը նենները քոչում են դեպի հարավ, ավելի մոտ ան-
առաներին, իսկ ամառը չարժվում են դեպի բեկեռային ծովերի
ափերը:

Սառնամանիքի, փոթորիկի, մառախուղի և բեկեռային գիշերվա
խավարի մեջ տունդրայի ճյուղապատ լուռ տարածությունն-

Պի անծայրածիր հարթության վրա թափառում են նենները:

Հենց վոր սառած դետինը հալվում է, բեռնային ծովերի ափերը կենդանանում են: Նեններն ամեն ամառ դալիս են այստեղ: Ծովային քամին յեղջերուներից քշում, հեռացնում է մոծակներին և բոռերին:

Բայց բեռնային կարճատև ամառը չուտ է անցնում: Ծովափերը ծածկվում են խիտ մառախուղով: Ձյունն ավելի ու ավելի հաճախ է դալիս, սուլում և վրոնում է քամին: Թռչունները չվում են, գաղանները հեռանում, մարդիկ էլ քոչում են տունդրայի խորքերը, անտառներին ավելի մոտ:

ԼՈՒՈՐԱՎԵՏԼԱՆՆԵՐ

(ՁՈՒԿՁԱՆՆԵՐ)

Լուորավետլաններն ապրում են Ձուկոտյան թերակղզում, Ասիայի հեռավոր հյուսիս-արևելքում:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա դեռ՝ Ձուկոտյան թերակղզին:

Լուորավետլանների մի մասը — «ծովափնյաները» — ապրում են ծովափին և զբաղվում են ծովային վորսով: Մյուս մասը — «յեղջերվապահակա՛ն» լուորավետլանները — նենների նման յեղջերվապահությամբ են զբաղվում և իրենց յեղջերուների հետ քոչում են տունդրայում:

Ծովափնյա լուորավետլանների գլխավոր վորսը ներսյան է (փոկը): Ներսյի մորթուց լուորավետլանները չոր են կարում, միան ուտում են, իսկ ճարպը դործ են ածում՝ վորպես վառելանյութ և լուսավորելու համար:

Ծովափնյա լուորավետլանների դյուղերը ցրված են ծովափին: Նրանք բաղկացած են 20-30 վրանից (յարանդ):

Յարանդը մեծ վրան է և բաղկացած է մի քանի բաժանմունքներից: Ներքին բաժանմունքի մեջ կա ոջախ, բացի այդ՝ կան լապտերներ, վորոնց մեջ փոկի ճարպ է վառվում: Ձմեռը, նույնիսկ 45°-ի սառնամանիքներին, յարանդում չատ տաք է լինում, միայն թե փոկի ճարպն անպակաս լինի:

Շներն անհրաժեշտ կենդանիներ են ծովափնյա լուորավետլանների համար: Նրանք փոխարինում են յեղջերուներին:

Յերբ լուորավետլանը ցանկանում է ձմեռը դնալ ծովը վորսի, կամ ապրանքներ դնելու, կամ գաղան բռնելու համար թակարդ դնելու, նա շներին լծում է սահնակին: Շների վոհմակն սկսում է վազել առանց սանձի, դեկավարվելով միայն կանչերով:

Նախկին ժամանակներում ծովային գաղանների վորսի հաջողությունից եր կախված ծովափնյա լուորավետլանների ամբողջ կյանքը: Յերբ ծովի վրա փոթորիկ եր բարձրանում, վորսը յերկար ժամանակ դադարում եր, լուորավետլանները, սպասելով ունեցած պաշարը, նստում էյին իրենց բնակարաններում առանց սննդի և վառելիքի:

ԻՆՁՊԵՍ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ ՏՈՒՆԴՐԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Շարի ժամանակ իրավադուրկ տունդրայի վաչկատուն ժողովուրդները Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո դարձան Խորհրդային Միության իրավահավասար քաղաքացիներ:

Խորհրդային որենքներով նրանք ունեն իրենց տունդրային խորհուրդները: Քոչում է տունդրայի բնակչությունը, նրա հետ քոչում են նաև տունդրայի խորհուրդները — ամառը դեպի հյուսիս՝ դեպի ծովափի քամիները, իսկ ձմեռը, սառնամանիքներին՝ դեպի հարավ, անտառների հովանու տակ ձմեռելու համար:

Ամառային փոքրիկ ավանում, վորը բաղկացած եր մի քանի արդյունադործական խրճիթներից, ամառվա ընթացքում տեղավորվել եր տունդրայի խորհուրդը:

Շայրի խրճիթի վրա կախ է տված կարմիր դրոշակը: Դրան վրա կախված է տախտակ, վորի վրա գրված է «Խորհուրդ»:

Փողերի խրճիթը լեւի-լեցուն է մարդկանցով:

Խորհրդի նիստը բացված է:

Քննում են վորսի խնդիրը:

— Մեզ թակարդներ են պետք, հրացաններ,— ասում է ինչ-վոր մեկը:

— Խրճիթներ չկան: Չմեն արդյունաբերողների համար տաքանալու, դիշերելու տեղ չկա: Միայն ձյունի մեջ ենք ըն-նում:

— Մենք գնում ենք բեռնային աղվեսի և ծովային դադանի հետևից: Առաջ մենք խոնարհվում եյինք հարուստ յեղջերվատու-րոջը: Նա մեզ միս էր տալիս և, իբրև հատուցում, պահանջում էր բեռնային աղվեսներ: Շատ բեռնային աղվեսներ եյինք մենք տալիս նրան: Իսկ հիմա Պետաուն ենք մենք բեռնային աղ-վեսները վաճառում և գնում ենք այնքան անդամթերք, ինչքան մեզ պետք է:

Բոլորը քննում են վորսի խնդիրը և վորոշում են Ծ տեղում խրճիթ կառուցել և խնդրել Պետաուն՝ թակարդներ և հրացան-ներ բերել:

Քննվում է յեղջերվային տնտեսության խնդիրը: Խոսում են այն մասին, թե ինչպես պետք է վերջ տալ յեղջերուների հիվանդությունը և սատկելուն, ինչպես արդարացի բաշխել արոտավայրերը:

Յրվում են նեններն իրենց վրանները, և յուրաքանչյուրն ինքն իրեն մտածում է— հիմա խորհրդային իշխանության ո-րոք ապրելը չատ լավ է:

ԳԻՇԱՏԻՉ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ՖԱԿՏՈՐԻԱՆԵՐ

Ցարական իշխանության որով տունդրայի Ժողովուրդները մուլ էյին և անապատական:

Տունդրա յեկող վաճառականները հեշտությամբ խաբում էյին տունդրայի անասման տարածությունների մեջ մենակ ընկած քոչվորին:

Վաճառականները բերում էյին տունդրայի բնակիչների հա-մար վոչ միայն անհրաժեշտ ապրանքներ— վորսորդական պի-տույքներ, ալյուր, աղ, լուցիլի, այլև ողի: Նրանք հարբեցնում

էյին տունդրայի բնակիչներին, չնչին գներով գնում էյին յեղ-ջերուների հոտեր և թանգարժեք մորթի ու հարստացած վերա-դառնում:

Իսկ մուլ, անոգնական քոչվորները տարեցտարի աղքատ-նում էյին: Խորհրդային իշխանությունը քեց տունդրայի գիշա-տիչ վաճառականներին: Ամբողջ տունդրայում բացվեցին բազ-մաթիվ պետական առևտրական դրասենյակներ— ֆակտորիաներ: Այստեղ կատարվում է մորթեղենի գնում և բնակիչների կարիք-ների համար անհրաժեշտ ապրանքների վաճառք:

Նենների ամառային կայանից վոչ հեռու տեղավորվել է ֆակտորիան:

Յերկու մեծ ամբար լցված են զանազան ապրանքներով: Մե-կի մեջ պարկեր են, լցված ալյուրով, ձափարով և աղով: Մյու-սի մեջ՝ վառոդ, մանրադնդակ, կապար, յուղ, թեյ, շաքար,



Նենները վերադարձել են ֆակտորիայից

կանֆետներ: Ամաններ ել շատ կան: Կան չորեր, դրբեր, պլա-կատներ:

Փակտորիայում մեծ կենդանություն է: Մեկը մյուսի հե-

տեղից դալիս են մորթեղեն հանձնողները: Վորսն առատ է—ապ-
րանքները բերում են, հա բերում:

Սեղանների, պատուհանների, ուղղակի հատակի վրա—ամեն
տեղ թափված են բեհուային աղվեսի մորթիներ:

Աշխատողներն ուժասպառ են լինում: Վոմանք զննում են
մորթին, մյուսները հաշվում են, յերրորդներն ել տալիս են
մթերքներ ու ապրանքներ:

Մորթեղենը հանձնելուց հետո, նենները թեյ են խմում և
սպասում, վոր հաշիվներն ստանան: Ստանալով անհրաժեշտ
ապրանքներն ու մթերքները և սահնակի վրա տեղավորելով՝
նենները տուն են վերադառնում:

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Տունդրայում կուլտուրական մեծ աշխատանք է կատար-
վում քոչվորների հետ այն տեղերում, վորտեղ նրանք ձմեռում
են: Այնտեղ հիմնվում են կուլտուրականներ. նրանցից յուրաքան-
չյուրում կառուցում են դպրոց, հիվանդանոց, դաղիւկայան,
կուլտուրայի տուն, խանութ:

Տունդրայի հարյուրավոր բնակիչներ վոտքով, յեղջերունե-
րի կամ շների սահնակներով դալիս են կուլտուրականները:

Կազմակերպվում են նաև կարմիր վրաններ: Յեղջերուներով
և շներով քոչում են տեղից—տեղ ուսուցիչն ու բուժակը, իսկ
նրանց հետ՝ և կինոն, դաղիոն, դրաղարանը, դեղատունը:
Կարմիր վրանները թափանցում են տունդրայի ամենախուշ
անկյունները, տեղավորվում են տեղից—տեղ և տարածում
խորհրդային կուլտուրայի տարրերը:

Տունդրայի յերեխաները սովորում են դպրոցներում:

Առաջ տունդրայի քոչվոր ժողովուրդները սեփական դիր-
չունեյին: Այժմ հրատարակված են այբբենարաններ նենների և
չուտրավետլանների լեզուներով:


Մեծ նշանակություն ունեն այն դպրոցները, վորոնց կից կան
հանրակացարաններ: Նրանք քոչվորների յերեխաներին վարժեց-
նում են կուլտուրական կյանքի:

ԻՆՉՊԵՍ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՂՋԵՐՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Յեղջերվապահությունը տունդրայի տնտեսության հիմնա-
կան ճյուղն է: Յեղջերուն վոչ միայն սպասարկում է քոչվորին.
նրա միսը զնում է պահածոների դործարանը, մորթին կարևոր
հումք է արդյունաբերության համար: Մինչդեռ անցյալում յեղ-
ջերունները սաստիկ տառապում էյին տունդրայի դաժան բնու-
թյունից:

Նրանց հոտերը նվազում էյին սառուկից, սաստիկ ձյունա-
բուքերից և կերի սպակասությունից, դայլերի հարձակումից,
տուժում էյին խայթող միջատներից՝ բուռներից, մոկերներից,
մոծակներից, կոտորվում էյին տարափոխիկ վարակիչ հիվան-
դություններից:



Յեղջերվապահական խորհանտեսություն

Խորհրդային իշխանությունն ամեն միջոց դործ է զնում,
վորպեսզի բարձրացնի տունդրայի յեղջերվապահությունը:
Հիմնվել են յեղջերվաբուծական կայաններ, վորտեղ մասնա-
գետներն ուսումնասիրում են յեղջերուն, ամբողջ տունդրայով
ցրված են բազմաթիվ անասնաբուժական կետեր, վորտեղ յեղ-

չերուններին բուժում են և նախադահլանական սրահումներ են կատարում:

Կազմակերպված են յեղջերվադահլան խորհրդատեսություններ: Շատ յեղջերվադահլան համախմբված են կոլտնտեսությունների մեջ: Նրանց միջև արդարացիորեն բաշխված են յադեկային արտադրանքները:

ՄՈՐԹԵՂԵՆԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Տունդրայում շատ մեծ նշանակություն ունի մուշտակամորթ դաղանների, մանավանդ բեռնային աղվեսների վորսը:

Շատ յերկրներում մորթեղենը քիչ է: Նրանք մեր մորթիներն ուրախությամբ են գնում: Մորթեղենից խորհրդային Միությունն ստանում է վոսկի, վորով մենք արտասահմանում գնում ենք մի քանի տեսակ մեքենաներ մեր զործարանների և ֆաբրիկաների համար: Մեր խնդիրն է զարգացնել մուշտակամորթ դաղանների վորսը և մեծացնել մորթու արտահանումն ուրիշ յերկրներ:

Տունդրայում կազմակերպված են վորսորդական արտիկներ: Հիմնված են դաղանարուծական ֆիրմաներ, վորտեղ տունդրայի ալեկի արժեքավոր դաղանները բազմացվում են, ինչպես ընտանի կենդանիները:

ՏՈՒՆԴՐԱՅԻ ՌԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆ ՌԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ

Տունդրայի յերկրային ընդերքը դեռ քիչ է ուսումնասիրված: Բայց արդեն այժմ ել պարզ է, վոր տունդրան խՍՀՄ-ի սոցիալիստական տնտեսության համար շատ կարևոր ոգտակար հանածոներ կարող է տալ: Ամենից լավ ուսումնասիրված են Կոլա թերակղզու տունդրայի ոգտակար հանածոները:

Անտառային ճահիճների և լճերի մեջ բարձրանում են այնքան ել վոչ բարձր խիթի լեռները: Ներքևում աճում է սոճու անտառ, ալեկի բարձրում հանդիպում են յեղևնին և կեչին, իսկ հետո լեռնային տունդրայի մամուռները և քարաքոսերը:

Քարտեղի վրա ցույց ալե՛ք խիթի լեռները Կոլա թերակղզում:

Ամայի և անմարդաբնակ էյին այս տեղերը մի քանի տարի առաջ:

Գիտնականներն ամբողջ չորս տարի աշխատում էյին այստեղ: Նրանք հետադոտեցին խիթի լեռների հանածո հարստությունները: Շատ արժեքավոր ոգտակար հանածոներ դտան նրանք մամուռներով ու քարաքոսերով ծածկված վայրերն, անմարդաբնակ ժայռերի մեջ: Առանձնապես մեծ արժեք ունեցավ խիթի ապատիտը, վորից շատ լավ պարարտանյութ է ստացվում հողի համար:

Անցավ մի քանի տարի, և խիթի լեռնային տունդրան կենդանացավ:

Ապատիտի հանքերում դիչեր-ցերեկ աշխատանքը յեռում է Բանվորների թիվը հաղարի յե հասնում: Խուլ դղողում են և արձադանքում պայթյունները: Սուլում են չոգեքարչերի չչակները: Աշխատում են հորատիչ մեքենաները:

Լեռների թեք լանջերի միջև, վճիտ լճի ափին նոր քաղաքը վուվեց:

Քաղաքն աճեց ընկ. Կիրովի անասան եներդիտյի և բուլեհիկյան անհողդողե կամքի շնորհիվ և նրա անուսով ել կոչվեց Կիրովսկ:


Քարտեղի վրա դտե՛ք Կիրովսկ քաղաքը:

Կիրովսկ քաղաքի հիմնադրությունից քիչ ժամանակ է անցել, բայց այնտեղ այժմ արդեն կան մի քանի ֆաբրիկաներ և զործարաններ, քարե մեծ շենքեր, հիվանդանոցներ և բուժարաններ, դպրոցներ, ալումբներ, դրաղարաններ և մեծ հնչուն կինո:

Կիրովսկի փողոցով անցնում են ավտոճորիկներ և ավտոբուսներ:

Նրա մեջ ապրում է մի քանի տասնյակ հաղար մարդ: Քաղաքից վոչ հեռու շինված է ելեկտրակայան, վոր ելեկտրական հոսանք է տալիս քաղաքին և հանքերին:

Այսպես փոխվեց խիթի լեռնային տունդրան: Ներկայումս շինարարությունը ծալալվում է նաև տունդրայի ուրիշ շատ տեղերում:



Կիրովսկ քաղաքը

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Տունդրայի բնակիչները հաճախ սովի եյին մատնվում։ Նրանց կերակուրը միատեսակ էր— ձուկ, յեղջերվի միս և ծովային զաղանների միս։ Միայն խորհրդային իշխանության որոշ սկսեցին տունդրա ներմուծել ալյուր, աղ։ Նրանք չգիտեին, թե ինչ բան է բանջարեղենը։ Ձկային վոչ արտեր, վոչ բանջարանոցներ։

Մի՞թե սառած հողի, ճահճի վրա կարող են հացահատիկներ և բանջարեղեն աճել— այսպես եյին մտածում բոլորը։ Փորձեր կատարեցին, և դարձվեց, վոր կարող են։

Այժմ Կոլա թերակղզում հիմնված է մի փորձնական գյու-

ղատնտեսական կայան, վորն աճեցնում է վոչ միայն կարտոֆիլ ու կաղամբ, այլև յեղակ։ Փորձակայանն ապացուցեց, վոր տունդրայում կարելի յե դրադվել բանջարաբուծությամբ, գյուղատնտեսությամբ։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՍՊԱՐՀՆԵՐԸ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Նայեցե՛ք քարտեզին. յերկաթուղին կտրում է տունդրան միայն արևմտյան մասում— Կիրովյան յերկաթգիծն է այդ։

Տունդրայում ել ուրիշ յերկաթուղի չկա։

Հաղորդակցությունը տունդրայի տարբեր կետերի միջև զլխավորապես յեղջերուներով ու շներով է կատարվում։

Տունդրայի համար կարևոր նշանակություն ունի գետային և ողային հաղորդակցությունը։

Բեկռային ծովերի ափին մի քանի խոշոր քաղաքներ— ծովային նավահանգիստներ կան։ Դրանց միջոցով առևտուր է կատարվում զանազան պետութայինների հետ։

Դրանցից ամենակարևորն է Մուրմանսկը։ Նա ամբողջ տարին չի սառչում, վորովհետև նրա մոտով տաք հոսանք է անցնում։

Վարժապույտներ.— Ուրվաղծային քարտեզի վրա տունդրայի շուրջը մտախառնվ գծեցե՛ք։

Նշեցե՛ք նրա վրա տունդրան կտրող զլխավոր գետերը։

Ուրվաղծային քարտեզի վրա նշեցե՛ք, թե վո՛րտեղ են ապրում նենները, լոպարները, լուորավետանները։

Նշեցե՛ք Կիրովսկը և Հյուսիսային կարևոր նավահանգիստ Մուրմանսկը։

Գտե՛ք, թե վո՛ր կողմից է մտնում Բարենցի ծովը Գոլֆսթրիմ տաք հոսանքը։


Արտագայում աշխատեմք.— Կազմեցե՛ք մի ալբոմ «Տունդրայի դուռին» թեմայով։

3. ՏԱՅԳԱՅԻ ԳՈՏԻ

Տունդրայից հարավ ամբողջ ԽՍՀՄ-ի վրայով նրա արևմրտյան սահմանից մինչև Խաղաղ ովկիանոսը տարածվում են փչատերև անտառներ— տայգան։ Տունդրայի և անտառների

միջև վոչ մի տեղ վորոշ սահման չկա: Տունդրան աստիճանա-
բար փոխվում է անտառների:

Սկզբում տունդրայում յերևում են աճանձին վտիտ ցած-
լիկ ծառեր՝ չորացած դադաթներով: Այդ անտառատունդրան է:
Ավելի դեպի հարավ ծառերը դառնում են ավելի խոշոր, ավելի
բուսեղ: Նրանց թիվն աճում է: Վերջապես, տունդրան անհետա-
նում է և տեղի տալիս համատարած անտառներին:



Անտառատունդրա

Տայգան բունում է շատ ավելի մեծ տարածություն, քան
թե տունդրան: Տասնութ այնպիսի պետություն, ինչպիսին
Ֆրանսիան է, կարող եյին տեղավորվել տայգայի գոտում:

Ինտենս զառնեցի բարեկի վրա ցույց տվե՛ք անտառատունդրան,
տայգան և խառն անտառները:

ՏԱՅԳԱՅԻՑ ՎԵՐԵՎ ՅԵՎ ՏԱՅԳԱՅՈՒՄ

Ստվածանկը բարձրացավ Կրասնոյարսկ քաղաքից և Յենի-
սեյ գետի վրայով թռավ դեպի հյուսիս:

Դու՛ք Յենիսեյ գետի վրա Կրասնոյարսկ քաղաքը:

Ներքևում սեխն եր տալիս փշատերև անտառը:


Տայգան տարածվում եր դեպի ամեն կողմ— դեպի հյուսիս,
հարավ, արեւելք և արեւմուտք:

Միայն դետի արծաթափայլ ժապավենն եր կտրում այդ
անտառները՝ մերթ դալարվելով, մերթ ուղղվելով:

Տեղ-տեղ դետի մոտ, խիտ անտառների մեջ սեղմված
պատսպարվել են դյուղեր և յերբեմն-յերբեմն ծխում եյին
անտառադորժարանները:

Մոտ հազար կիլոմետր թռանք Յենիսեյի վրայով, և մեր
շուրջը դեպի ամեն կողմ ձգվում եր անսահման տայգան:

Յերբ սավառնակն իջավ, յես մի նեղ, հազիվ նկատելի արա-
հետով մտա տայգան: Դեռ մի կիլոմետր չանցած՝ յես ընկա
անանցանելի թավուտի մեջ: Միապաղաղ պատի պես ամեն կող-
մից շրջապատեցին ինձ բրդոտ մայրիկները, բարձր կուռնիները



Տայգայում:

և յեղևնինները: Չնայելով, վոր որն արևոտ եր, անտառի մեջ
այնքան խավար եր, վոր կարծես գիշերը վրա յե հասնում:

Աճեն տեղ կուտակված էյին արմատախիլ յեղած ծառեր,
չոր-չոր փայտեր, քարակոշտեր, և այս բոլորը խիտ կերպով
պատած էյին մամուռ և քարաքոսերով: Մեռելային լուսթյուն
եր:

Յես վախեցա մոլորվել և շտապեցի դեպի սավառնակը:

ՏԱՅԳԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ.— Նայեցե՛ք ԽՍՀՄ-ի Ֆիզիկական քար-
տեղին:

Տայգայի բռնած տարածության մեծ մասը քարտեղի վրա
ներկված է կանաչ գույնով— այդ դաշտավայրեր են: Համարյա
մեջտեղում այդ դաշտավայրերը կտրվում են Ուրալյան լեռնե-
րով: Յենիսեյ գետից սկսվում է Միջին Սիբիրական բարձրա-
վանդակը: Զանազան ուղղությամբ նա կտրուվում է լեռներով:

ԿԼԻՄԱՆ.— Տայգայի գոտին գտնվում է տունդրայից հա-
րավ: Արեգակն այստեղ ամառն ավելի յե բարձրանում և ավե-
լի յե տաքացնում, քան տունդրայում: Գետինը հալվում է
ավելի մեծ խորությամբ:

Զմեռը տայգայում յերկարատե ու ցուրտ է, բայց ավելի
կարճ է, քան թե տունդրայում (6—8 ամիս):

Տայգայի կլիման նրա տարբեր մասերում միատեսակ չէ:

Տայգայի արևմտյան (յեվրոպական) մասում կլիման ավելի
մեղմ է: Տայգայի այս մասն ավելի մոտ է Ատլանտյան տաք
ովկիանոսին: Տայգայի ասիական մասն ավելի դաժան կլիմա
ունի: Ատլանտյան օվկիանոսի կողմից այստեղ չեն հասնում
տաք և խոնավ քամիներ, իսկ Հյուսիսային ավերը վողովում
են բևեռային ցուրտ ծովերով:

Զմեռն այստեղ հաճախ լինում են 40—50 աստիճան սառնա-
մանիքներ: Իսկ Վերխայանսկ քաղաքում սառնամանիքները հաս-
նում են մինչև 70 աստիճանի— այս ամենացուրտ տեղն է ամբողջ
յերկրագնդի վրա («ցրտության բևեռ»): Այսպիսի սառնամա-
նիքների ժամանակ ջերմաչափի սնդիկը սառչում է, յերկաթը

դառնում է փխրուն, ծառերը ճալթյունով ճաքում են, թռչուն-
ները թռչելիս սառչում են ու ընկնում գետին:

Գարտեղի վրա դառե՛ք Վերխայանսկ քաղաքը:

ԳԵՏԵՐԸ.— Տայգան կտրում են մեծ ու ջրառատ գետեր:
Նրանք սկսվում են հեռավոր հարավում, մեծ մասամբ լեռնե-
րից, անցնում են տայգայի և տունդրայի միջով ու թափվում
բևեռային ցուրտ ծովերը: Գետերի հովիտներում տարածվում են
հրաշալի վողովով մարդագետիններ:

Գարտեղի վրա դառե՛ք Հյուսիսային Դվինա, Պեչորա, Ուր, Յենիսեյ և Լե-
նա գետերը:

ԲՈՒՍԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.— Տայգայի տարբեր մասերում նրա
մակերևույթը և կլիման միատեսակ չեն, միատեսակ չեն և բու-
սականությունը:

Յեվրոպական տայգան բաղկացած է սոճու և յեղեղնու ծա-
ռերից: Յերբեմն պատահում են կեչի և կաղամախի: Ասիական
տայգայում, վորտեղ կլիման ավելի խիստ է, ուրիշ ծառեր են
աճում, այն է՝ մայրի, խեցուռ փիճի, կուեմի:

Մուժ է տայգան, նրա փշատերե խիտ ծառերի միջով քիչ
լույս է թափանցում: Այստեղ միշտ կիսախավար է, ֆայց և
խոնավ: Փշատերե ծառերի մուժ ծածկոցի տակ լավ աճում են
միայն մամուռներ, քարաքոսեր և սունկեր: Փշատերե անտառի
մեջ հողը միշտ ծածկված է լինում փուշ-տերեկներով:

Շատ տեղ տայգան անանցանելի յե. ամենուրեք ընկած են
ծառեր, կուտակված են քարակոշտեր, հաճախ պատահում են
ճահիճներ:

Մռայլ է ու լուռ տայգան: Միայն փոթորկի ժամանակ խուլ
աղմուկը լցնում է տայգան, յերբեմն այդ աղմուկը փոխվում է
վռնոցի, և այդ ժամանակ կարծես կատաղած ու անհանգստա-
ցած դադան է վռնում:

Տայգան նոսրանում ու յետ է քաշվում միայն այնտեղ,
վորտեղ գետեր են հոսում, կամ մեծ ճահիճներ են տարածվում,
վորտեղ քաղաքներ և դուռեր են կառուցվում:

ՀՈՂԵՐԸ.— Տայգայում հողը ծածկված է մամուռի և թափված փուշ-տերեւների ծածկոցով: Այս ծածկոցը լավ է պահպանում խոնավութունը: Զուրը ծածկոցի միջով անընդհատ ծրծրում է զեպից ցած և հողից հեռացնում է սննդարար նյութերը: Տայգայի հողերը սակավ արգավանդ են: Դրանք կոչվում են պաղգուլային հողեր:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇՆԱՐ ՀԸ.— Տայգայի կենդանական աշխարհը հարուստ է ու բազմազան: Թռչուններից տայգայում մշտապես ապրում են՝ ցախափորը, մայրեհավը և սալամբը: Նրանք կերակրվում են տերեւներով և հատապտուղներով, ձմեռը՝ սերմերով և բողբոջներով: Տայգայի մշտական բնակիչ է նաև կտցահարը: Իր սուր ճանկերով նա պինդ կտչում է ծառերի կեղևին, սուր կտցով ծակում կեղևը և այնտեղից ճիճուներ հանում:

Անտառային խոշոր կենդանիներից այստեղ ապրում է իշալ-ծյալը: Նա ամառը կերակրվում է խոտով, խիստ ձմեռը կրծոտում է թփերը և ծառերի ճյուղերը:

Հեշտությամբ ծառից-ծառ է ցատկում սկյուռը: Նրան այդ բանում ոգնում է իր յերկար ու բրդոտ սուշը: Սկյուռը կերակրվում է փշատերեւ ծառերի սերմերով և բողբոջներով:

Տայգայում շատ զիշատիչներ կան:

Գիշերները թռչուններին ու սկյուռներին վորսում են կգաֆիսը, ժանտաֆիսը, սամուշը:

Համարյա առանց աղմուկի թռչում են բվերն ու բվեմները: Մանր կենդանիներին ու թռչուններին վորսում է աղվեսը: Ծառերի վրայից կենդանիների վրա յե հարձակվում լուսանը:

Անտառի ծայրամասում ապրում են գայլերը: Զմեռը նրանք վոհմակներ են կազմում և հարձակում դործում նույնիսկ շատ խոշոր կենդանիների վրա:

Անտառի թափուտում ապրում է գարշ արջը: Նա կերակրվում է բույսերով, հատապտուղներով և կենդանիներով: Զմեռն անց է կացնում վարջում կիսաքուն վիճակում:

Առաջագրություն.— Պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին. ինչո՞վ է տարբերվում տայգայի կլիման տունդրայի կլիմայից: Ի՞նչ տարբերություն կա արևմտյան և արևելյան տայգայի կլիմայի միջև: Ի՞նչով է տարբերվում

արևելյան տայգայի բուսականությունն արևմտյան տայգայի բուսականությունից: Ի՞նչ կենդանիներ են ապրում տայգայում և ինչո՞վ են նրանք տարբերվում տունդրայի կենդանիներից:

ՏԱՅԳԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տայգայի դոտում ապրում են եվեմկները (առաջ նրանց անվանում էյին տունդուսներ), յակուսները, կարկները, կոմիները, ոռուսները:

Եվեմկներն զբաղվում են վորսորդությամբ, յեղջերվապահությամբ և ձկնորսությամբ:

Յակուսները, կարեյները, կոմիները և ոռուսները նստակյաց են և զբաղվում են մեծ մասամբ մուշտակամորթ դադանների վորսով, անտառարհեստագործությամբ և գյուղատնտեսությամբ:

Գետերն ու գետակներն առաջ միակ ճանապարհներն էյին անտառի խորքերում:

Գետերով մարդը թափանցում էր տայգան՝ կացինն ու հրացանը ձեռքին: Գետակների ափերին, բարձրագիթ թմբերի վրա, մուլթ անտառների մեջ մարդիկ հիմնում էյին գյուղեր, կտրատելով և այրելով շրջակայքի անտառները վարելահողերի համար:

Բնակավայրերն, անտառի խորքերն են թափանցում այնտեղ, վորտեղ անտառի և դանազան ոգտակար հանածոների շահագործման տեղերն են:

Այժմ արդեն բավական շատ քաղաքներ կան տայգայում: Համարյա բոլոր քաղաքները տեղավորված են յերկաթուղիների կամ գետերի մոտերքում:

Վարժություն.— Գտե՛ք քարտեզի վրա ԵՂ 164, թե յեվրոպական տայգայում վ՛՛րտեղ են ապրում կարեյները և կոմիները, ափական տայգայի վ՛՛ր մասերում են ապրում յակուսները և եվեմկները, տայգայի վ՛՛ր մասերում են ապրում ոռուսները:

ԻՆՉՊԵՍ Ե ԼԱՎԱՆՈՒՄ ՏԱՅԳԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ

Յարական ժամանակ եվենկները և մյուս ժողովուրդները, վորոնք տալոյալով վորսորդությամբ եյին զբաղվում, կտրված եյին կուլտուրական կենտրոններից և իրենց ամբողջ կյանքն անց եյին կացնում դաժան բնության դեմ պայքարելով: Վատ զինված՝ նրանք իրենց յեղջերունների հետ թափառում եյին տալոյալով, վորոնք մուշտակամորթ զազաններ: Մորթեղենը չնչին գներով տալիս եյին կեղեքիչ վաճառականներին: Նրանք ամբողջապես կախում ունեյին այդ վաճառականներից:

Խորհրդայնացումից հետո տալոյալի ժողովուրդները, ինչպես և տունգուսյի ժողովուրդների կյանքն սկսեց արագորեն փոխվել: Կեղեքիչ վաճառականների փոխարեն յեկան Փակտոբիաները: Հիմնվում են հաստատուն բնակավայրեր, կուլտուրականներ, տալոյալ յե ներմուծվում մեծ քանակությամբ զանազան սպորանքներ:

Տալոյալի քոչվորների և վորսորդների մի մասը դեռ մինչև հեղափոխությունն սկսեց անցնել նստակյաց կյանքի և զբաղվել յերկրագործությամբ: Բայց նրանց տնտեսությունը շատ արքստ էր և նրանք հաճախ սովի եյին մատնվում:

Խորհրդային իշխանությունը վճռականորեն սկսեց վերակառուցել նրանց տնտեսությունը:

ԵՎԵՆԿՆԵՐԸ ՎՈՐՍՈՐԴՆԵՐ ԵՆ


Հենց վոր տալոյան ծածկվում է ձյունով, վրա յե հասնում սառնամանիքը, սկսվում է վորսը— եվենկների անտառային յեռուն աշխատանքը: Մի քանի օր շարունակ նրանք վորս են տնում իրենց կայանի շրջակայքում: Յերբ բոլոր սկյուռներին կոտորում են, անցնում են տալոյալի խորքը:

Տալոյալի մեջ կորած մի գետակի ափին փովել են եվենկների վրանները: Ծուխը քուլա-քուլա բարձրանում է վրաններից: Քիչ հեռու արածում են յեղջերունները:

Վրանից դուրս յեկավ վորսորդը:

Գնում է նա տալոյալում գետակից գետակ, զազաթից զա-

զաթ՝ աչքերը սրած, ախանջները լարած: Նա լավ գիտե, թե վորտեղ է թաղնվում սրաքիթ աղվեսը, տեսնում է, թե ուր գնաց իոթրիկ խորամանկ կնգումը, լսում է, թե վորտեղ է ցատկում տնտիկ սկյուռը... Սպիտակ ձյան վրա նա կարդում է



Եվենկը վորս անելիս

անհասկանալի, հաղիվ յերեսացող նշաններ: Վորսորդի հետ դընում է նրա շունը: Յերբեմն շունը կանգ է առնում վորեւե ծառի մոտ: Ընդհատ-ընդհատ հաջում է և ճանկերով կեղևը ճանկառտում:

Վորսորդը նստում է, հրացանն ուղղում կրակում: Գնում առաջ: Գոտուց մի սկյուռ ևս կախվեց:

ՅԵՐԵԿՎԱ ՎՈՐՍՈՐԴՆ ԱՅՍՈՐ ԲԱՆՎՈՐ Ե ԴԱՌՆՈՒՄ

Զմեռվա վերջն է: Ժամանակն է տալոյալից դնալ գետափը ձուկ վորսալու: Մի մառախլապատ առավոտ եվենկ Պյոտր Միբան իր վորդու հետ ուղևորվեց դեպի Յենիսեյ գետը: Կես օրվա ճանապարհից քիչ եր մնացել անցնելու:

Ծանոթ առուներ, ճահիճներ, ծառեր... Բայց այս ի՞նչ պատահեց յեղջերուններին: Նրանք կանգ են առնում, այս ու այն կողմն են ընկնում, համառում են, առաջ չեն դնում:

«Յերեւի արջի բներ կան դետափին», — մտածում է Միրան՝ քշելով վեր-վեր թուջող յեղջերուներին:

Հանկարծ յեղջերուները կանդ առան: Տայգայում լավեց ինչ վոր սարսափելի վոռնոց՝ «ու-ղու-ղու-ո՛ւ»:

Կելզան՝ Միրայի վորդին, հրացանը վերցրեց, չվացրեց չա- նը և մտավ տայգա: «Այդ ի՞նչ չար վորդի յե, պետք է տես- ներ», — մտածում էր Կելզան:

Նա յեկավ այն տեղը, վորտեղ անցյալ տարի կանդ ելին առել, և չճանաչեց այդ տեղը:

Գետի վրա մեկը մյուսի հետևից, կանգնած են փայտե լաս- տեր: Յերկաթե ճանկերը բռնում են դերանը, նետում վեր, և դերանները մեկը մյուսի հետևից թաղնվում են չողենալների ահռելի յերախներում: Մարդիկ ծառերը տապալում են, դետի- նը վորում և տներ են շինում: Գետափին արդեն շինել են մի մեծ տուն, վորի մեջ կարող է հարյուր վրան տեղավորվել:

Կելզան հոր հետ տայգա չվերադարձավ: Նա մնաց դորձա- դանում աշխատելու:

Յերեկվա քոչվորը բանլոր դարձավ:

Յերեք տարուց հետո այդտեղ բարձրացավ մի նոր քաղաք — Եղարկա:

ՅԱԿՈՒՏՆԵՐՆ ԱՆԱՍՆԱՊԱՀ ՈՒ ՀՈՂԱԳՈՐԾ ԵՆ

Լենա գետի միջին և ստորին հոսանքների յերկու կողմե- րում բնդարձակ տարածութան վրա ապրում են յակուտները:

Այս վայրը կտրված է լեռնաշղթաներով (տես Փիզդիկական քարտեզը), ծածկված է անտառներով ու ճահիճներով: Ամենա- ցուրտ ձմեռներն ամբողջ աշխարհում լինում են այստեղ: Բնակ- չութունը շատ նոսր է: Յակուտներն զբաղվում են անասնա- պահութամբ և մասամբ ել հողագործութամբ ու վորսորդու- թյամբ:

Գետահովիտներում, լեռներում, անանցանելի անտառների մեջ իրարից հեռու ցրված են յակուտների բնակավայրերը: Շրջակայքում արածում են անասունները՝ կովերը, ձիերը: Կա- նայք խնամում են անասուններին: Տղամարդիկ խոտ են հա- րում: Ամառը պետք է շատ աշխատել: Հյուսիսային ամառը

կարճատև է, պետք է խոտի պաշար հավաքել յերկարատև և խիստ ձմեռվա համար:

Յերկաթուղուց և խճուղուց հեռու յակուտական փոքրիկ գյուղերում դեռ մնացել են յակուտական հին վրանները: Նրանք շինվում ելին փայտերից և դրսից ձևվում կավով: Տանիքը շինվում էր ձողերից: Յուրտի մեջտեղը դրված էր ոջախը ծխելու յղով:

Կոթկալով տնտեսությունների դարգացման հետ արագորեն լավանում է յակուտների կյանքը: Շինվում են նոր տներ, հիմ- նըվում են դպրոցներ, հիվանդանոցներ, ախումբներ և կուրսու- րական ուրիշ հիմնարկներ:

Զարգացնում են անասունների ալիքի կաթնատու ցեղեր: Յերեան են գալիս խոտ հարող մեքենաներ: Կաղմակերպվում են խորհրդային տնտեսություններ, վորտեղ յակուտները սովորում են, թե ինչպես պետք է ճիշտ կերպով պահել և իմանալ անա- սուններին:

Յակուտիայի հարավային մասում սկսել է ուժեղ կերպով զարգանալ յերկրագործութունը: Մինչև Հոկտեմբերյան հեղա- փոխությունը միայն հարստներն ելին դաշտերը ցանում: Զբա- վորները վոչ վարելահող ունեյին, վոչ ել դորձիքներ: Հացը յերեք չեր բավականանում: Զբաղվորներն ալյուրի հետ ծառի փեղե ելին խառնում:

Այժմ գյուղատնտեսությունն արագորեն բարելավվում է: Խորհրդային տնտեսություններում ստանում են ցրտին դիմա- ցող հացահատիկների տեսակներ: Դաշտերում յերեացին տրակ- տորներ: Այժմ յակուտ գյուղացին յեվա բավարար քանակու- թյամբ հաց է ուտում, իսկ բանջարեղենը դարձել է նրա սովորական ուտելիքը:


Արագորեն զարգանում է նաև բանջարաբուծութունը: Նույ- նիսկ վերխոյանսկ քաղաքում բանջարեղեն են մշակում:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ-ում տայգան շատ մեծ տարածություն է բռնում: Անտառի անչափ մեծ տարածություն վոչ մի պետություն

յունի ամբողջ աշխարհում: Մեր անտառը միշտ զբաղվել է ոտա-
րերկրյա վաճառականների ուշադրությամբ:

Շատ փայտ ինքներս ենք դործածում, շատ արտահանում
ենք ուրիշ յերկրներ և ստացած վոսկով աշխտեղ զնում ենք
մեզ համար անհրաժեշտ մեքենաներ:



Անտառահատում

Յարական փայտարդյունաբերող վաճառականները զիշա-
տիչների պես վոչնչացնում եյին անտառի ընդարձակ տարածու-
թյուններ: Նրանք միայն շահույթի մասին եյին մտածում:
Անտառը կտրատում եյին այնպիսի տեղերում, վորտեղից փայտը
հեշտ եր տեղափոխել, այն ե՝ դեռափերին, տալլայի ծայրա-
մասերում, այսինքն՝ հենց այն տեղերում, վորտեղ պետք եր
պահպանել անտառը: Իսպառ կտրատելով, վոչնչացնելով անտա-
ռը՝ նրանք բոլորովին չեյին մտածում այն վերականգնելու մա-
սին: Աշխատանքներն անտառում կատարվում եյին ամենահա-
տարակ ձևով:


Փայտամթերման վրա աշխատող մարդկանց մասին արդյու-
նաբերող վաճառականները իհարկե չեյին ել մտածում:

Խորհրդային Միության անտառային տնտեսությունը կա-
ռուցվում է սոցիալիստական հիմունքներով: Կազմակերպված

են անտառային արդյունաբերական տնտեսություններ: Նախկին
ձմեռային վորջերի փոխարեն, վորտեղ ապրում եյին անտառ-
հատները, այժմ փայտամթերման վայրերում շինված են լուստ-
վոր հանրակացարաններ և տներ: Բանվորներն աշխատում են
բրիգադաներով:

Ձեռքի սղոցի փոխարեն այ-
ժմ ավելի հաճախ են դործա-
դրվում մեխանիկական սղոց-
ներ: Փայտը դուրս են բերում
անտառից վոչ թե ձիերով, այլ
տրակտորներով:

Անց են կացվում նոր ճանա-
պարհներ, շինվում են հատուկ
սառցե ճանապարհներ, վորոնց
վրայով հեշտությամբ սահում
են դերանների ծանր բեռ ունե-
ցող սահակները, մաքրում են
դեռային ճանապարհները, վո-
րոնցով փայտ են լողարկում:



Անտառանյութի տեղափոխումը գետով


Այնտեղ, վորտեղ առաջ վոչ մի մարդ չկար, այժմ աճում են
փայտահատների համար ամբողջ բնակավայրեր, խանութներով,
դպրոցով և հիվանդանոցով:

Փայտը շինանյութ է հանդիսանում: Փայտը հումույթ է մի
շարք արտադրությունների համար: Փայտից պատրաստում են
թուղթ և զանազան քիմիական նյութեր:

Այդ հումքն ավելի ձեռնտու է վերամշակության յենթար-
կել տեղում, քան թե անմշակ ձևով տեղափոխել զանազան տե-
ղեր և այդ փոխադրության վրա ծախսեր անել:

Ձեռնտու է նույնպես ոտար յերկրների վաճառել պատրաս-

տի շինանյութեր և մշակման յենթարկված փայտի նյութեր, քան թե հում, անմշակ փայտ:



Թղթի գործարան տալգայում

Յեւ ահա մութ, անանցանելի տալգայում կառուցվում են և արդեն աշխատում են սղոյարաններ, թղթի ֆաբրիկաներ և քիմիական գործարաններ:

ՄՈՐԹԵՂԵՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ճարական ժամանակներում վորսորդներն անխնա կոտորում էին զազաններին՝ վոչնչացնելով տալգայի մուշտակեղենի հարստությունը:

Թանգարժեք զազանների քանակը հետզհետե քչանում էր:

Մուշտակեղենի հարստությունը կորստից ազատելու և մորթեղենի արդյունաբերությունը բարձրացնելու համար, խորհրդային իշխանությունը հիմնում է մուշտակամորթ զազանների արդելավայրեր: Այդ արդելավայրերում բոլորովին արդելված և

զազանի վորսը: Այդ արվում է այն նպատակով, վոր մուշտակամորթ զազանները բաղմանան:

Հիմնվում են նույնպես զազանաբուծական ֆերմաներ, վորտեղ պահվում են ամենահազվագյուտ զազանները՝ սամույրներ, կզաքիսները, կնգումները, սեղարչնադույն աղվեսները: Ընտրվում են առանձնապես արժեք ունեցող ցեղեր: Նրանց լավ խնամում են և կանոնավոր կերակրում: Նրանց վրա կատարում են գիտական գիտողություններ:

Կաղմակերպված են շատ տեղերում վորսորդական կոլեկտիվ տնտեսություններ:

ՏԱՅԳԱՅԻ ՀԱՆԱԾՈ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տալգայի ողտակար հանածոները մինչև վերջին ժամանակներս քիչ էին ուսումնասիրված:

Վերջին տարիների հետազոտությունները ցույց տվին, վոր տալգայի ընդերքում շատ հարստություններ են թաղանթված՝ վոսկի, քարածուխ, աղ, գրաֆիտ, նավթ:

Շատ մեծ նշանակություն ունի Կուզնեցկի ավազանի քարածուխը: Կուզնեցկի ավազանը գտնվում է Նովոսիբիրսկից դեպի հարավ-արևելք: Այստեղ չավազանց շատ առաջնակարգ ածուխ է գտնվում:


Վերջին տարիներս մեծ չափերի յե հասել Կուզնեցկի ածուխի արդյունաբերությունը: Կուզնեցկի ավազանի ածուխը մեծ նշանակություն ունի արդյունաբերությունյան զարգացման համար:

Առաջադրություն.— ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտե՛ք, թե վորտեղ են տալգամած հետևյալ ողտակար հանածոները՝ Կուզնեցկի ավազանի (Նովոսիբիրսկից դեպի հարավ-արևելք) քարածուխը, նավթը (Պեչորայի վտակի) վրա և Ուրալյան լեռների արևմտյան լանջում), վոսկին (Լենա գետի և Նրա Ալդան վտակի վրա):

ԲԵՐԵՋՆԻԿԻ

Ուրալից արևմուտք, Կամայի ձախ ափին, գետնի տակ փրկվում է զանազան աղերի չերտ, վորի հաստությունը հասնում է 500 մետրի: Աղերի վորոշ տեսակը գործ էածվում կերակրի

մեջ—այդ կերակրի աղն է։ Մյուսները հրաշալի պարարտա-
նյութեր են վարելահողերի համար—դրանք կալիումի աղերն
են։ Աղերի այդ հարուստ շերտերից վոչ հեռու գտնվում են
քարածխի և ֆոսֆորիտների շերտեր։ Այդ հսկայական հարու-



Բերեզնիկի

սությունները մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հե-
ղափոխությունը չեյին ոգտադործվում։ Ֆարական կառավարու-
թյունը, մեծ մասամբ, չգիտեր անդամ նրանց դոյության մա-
սին։

Այժմ այստեղ կառուցված է ամբողջ աշխարհի խոշորագույն
քիմիական կոմբինատ Բերեզնիկին։ Սա բաղկացած է մի քանի
խոշոր գործարաններից, վորոնք տեղական հումքից մշակում են
զանազան պարարտանյութեր։ Յերեկոները տասնյակ կիլոմետր
հեռավորությունից կարելի յե տեսնել հրացուլը կոմբինատի բազ-
մաթիվ շենքերի վրա, վորոնք հեղեղված են ելեկտրական լույ-
սով։

Այստեղից կամա գետով պարարտանյութեր են տեղափոխ-

վում ԽՍՀՄ-ի զանազան վայրերը, կոլեկտիվ և Խորհրդային
անտեսությունների անծայրածիր դաշտերը։

Քարտեզի վրա ցույց տվե՞ք Բերեզնիկին։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՅԳԱՅՈՒՄ

Անտառի չահագործումը և մուշտակեղենի արդյունաբերու-
թյունը կազմում են տայդայի դոտու բնակչության հիմնական
զբաղմունքը և տնտեսության հիմնական ճյուղերը։

Բայց տայդայի բնակչությունը զանազան սննդամթերքների
կարիք ունի։ Նրան պետք են հաց, բանջարեղեն, կաթնեղեն, միս։
Այս բոլորը հեռվից բերելը դժվար է և ձեռնտու չէ։ Անհրա-
ժեշտ է, վոր անդամթերքներից, ինչ վոր հնարավոր է, տեղն
ու տեղն արտադրվի։ Տայդայի բնական պայմանները դյուղա-
տնտեսությամբ զբաղվելու համար նպաստավոր չեն։ Այստեղ
հողերն արգավանդ չեն, լինում են ցուրտ դարձներ և վաղա-
հաս սառնամանիքներ։ Սակայն փորձերը ցույց տվին, վոր
այստեղ կարող են լավ դարգանալ և՛ յերկրագործությունը, և՛
անասնապահությունը։

Այստեղ կարող են հասունանալ դյուղատնտեսական բույսե-
րից շատերը, վորոնք մինչև վերջին ժամանակներս աճում եյին
միայն ավելի հարավ ընկած վայրերում։

Մշակվում են այդ բույսերի ցրտադիմացկուն տեսակներ։
Կաթնատու անասունները կարող են ավելի առատ կաթ
տալ, յեթե նրանց լավ խնամեն և ընտրեն ցրտին դիմացող տե-
սակներ։

Խորհրդային իշխանությունը վճռականորեն ձեռնարկեց
տայդայի դոտու դյուղատնտեսության բարձրացման գործին։

Կազմակերպվեցին խորհրդային և կոլեկտիվ տնտեսություն-
ներ։ Խորհրդային տնտեսությունները փորձով ցույց են տալիս,
թե ինչպես պետք է վարել յերկրագործությունը, բանջարաբու-
ծությունը, ինչպես ճիշտ խնամել անասուններին։

Խորհրդային իշխանությունն առանձնապես մեծ ուշադրու-


Թյուն դարձրեց տալգայի գոտում կաթնատու անասուններին
ընդամասն վրա, վորովհետև այստեղ գետերի հովիտներում
լավ մարգագետիններ կան:

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՏԱՅԳԱՅՈՒՄ

Անանցանելի տալգայում կառուցվում են դուռեր և քա-
ղաքներ:

Կամա գետի մոտ, քիմիական կոմբինատի կողքին աճեց Բե-
րեգնիկի մեծ քաղաքը:

Հին, մոռացված Յակուտսկը, ուր ցարիզմի ժամանակ աջ-
տորվում էյին հեղափոխականները, վերածվեց կուլտուրական
քաղաքի՝ ուսումնական հիմնարկներով, ախումբներով, թատ-
րոններով:



Քաղաքի կառուցումը յակուտական տալգայում

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏԱՅԳԱՅՈՒՄ

Տալգայի միջով յերեք խոշոր յերկաթուղի յե անցնում:

Մի գիծն անցնում է տալգայի հարավային ծայրամասով—
Լենինգրադ—Վոլոգդա—Պերմ—Սվերդլովսկ—Նովոսիբիրսկ—

Իրկուտսկ—Վլադիվոստոկ: Մյուս յերկու գիծը տալգան լայն-
քով են կտրում՝ 1) Լենինգրադ—Մուրմանսկ և 2) Վոլոգդա—
Սերանդելսկ:

Քարտեզի վրա ցույց տվե՛ք այդ յերկաթուղիները:

Տալգայի անտեսության զարգացման համար մեծ նշանա-
կություն ունեն գետային և ողային ճանապարհները և Հյուսի-
սային ծովային ճանապարհը: Ներանցով կտրելի յե դուրս բերել
տալգայի բնական հարստությունները և ներմուծել տալգա ինչ
անհրաժեշտ է:

Բայց միայն ջրային ճանապարհները բավական չեն: Անհրա-
ժեշտ են նաև լավ ալտոմոբիլային ճանապարհներ հենց տալ-
գայի մեջ: Յեվ այժմ այդպիսի ճանապարհներ չինվում են: Մի
քանի տեղերում նրանք արդեն ձգվում են հարյուրավոր կիլոմե-
տր յերկաթուղյամբ:

Փայտն արտասահման և փոխադրվում հետևյալ ծովային
նավահանգիստներով. Լենինգրադ, Արխանգելսկ, Մուրմանսկ,
Իդարկա:

ՍՍՍԼԻՆԻ ԱՆՎԱՆ ՍՊԻՏԱԿ-ԲԱԼԹԻԿՈՎՅԱՆ ԶՐԱՆՅԻ

Մեծ հարստություններ են թաղնված տալգայի հյուսիս-
արևմտյան մասում, Ֆինլանդիայի սահմանի մոտ: Հրաշալի ան-
տառները տալիս են արժեքավոր վայտ և մուշտակեղեն: Ող-
տակար հանածոների մեջ կան յերկաթի և պղնձի հանքեր, վոս-
կի, սլարաբրտանյութեր՝ դաշտերի համար: Առատությամբ զրա-
նվում են ալյուրի գիմացիուն շինանյութեր, ինչպիսին դրա-
նիտն է: Արագահոս գետերն ու ջրվեժները կաբող են շատ ե-
ներգիտ տալ: Բայց ցարախան ժամանակներում այս մի վայրե-
նի, մոռացված յերկրամաս էր: Այստեղ վոչ յերկաթուղիներ
կային, վոչ ել հաղորդակցության հարմար ճանապարհներ:

Քարտեզի վրա գտե՛ք տալգայի հյուսիս-արևմտյան մասը:

Դեռ վաղուց հայտնի յեր, վոր կարելի յե տալգայի հյու-
սիս-արևմտյան մասի գետերի և լճերի միջոցով միացնել իրար
հետ յերկու ծով՝ Բալթիկ և Սպիտակ ծովերը:


Յարական ժամանակ շատ էյին խոսում ու դբում այդ մա-
սին, բայց ծովերն ալյուրես ել մնում էյին չմիացած:

Աշխարհագրություն IV դաս.—3

Այն, ինչ չարեց ցարական կառավարութիւնը, անսովոր արագութեամբ իրագործեց խորհրդային իշխանութիւնը. 20 ամսվա ընթացքում շինվեց աշխարհում ամենամեծ՝ Ստալինի անվան Սպիտակ-Բալթիկ ծովյան ջրանցքը, վերի յերկարութիւնը 200 կիլոմետրից ավելի յե:

Այդ ջրանցքն Ոսկեգայի լիճը միացնում է Սպիտակ ծովի հետ: Նրանով կարելի յե 5—6 օրում Լենինգրադից հասնել Սպիտակ ծով: Առաջ աշխարհի ճանապարհորդութեան համար մօտ 17 օր եր պետք, վերովհետեւ պետք եր պտտվել Յելրոպայի հյուսիսային ափերի շուրջը:

Սպիտակ-Բալթիկ ծովյան ջրանցքը մեծ նշանակութիւն ունի ամբողջ խորհրդային Միութեան համար:



Բալթիկ ծովից դեպի Սպիտակ ծովը տանող ճանապարհի սխեման


Այդ ջրանցքով հյուսիսից մեր Միութեան զանազան վայրերն են ուղարկվում՝ փայտ, ձուկ, պարարտանյութեր, շինանյութեր, իսկ դեպի հյուսիս փոխադրվում են՝ հաց, նավթ, աղ, լայն դորժամութեան զանազան սպորանքներ:

Ջրանցքի յերկայնքով կառուցվում են ելեկտրական կայաններ, ֆարրիկաներ և դորժարաններ: Ելեկտրական պայծառ

շուշով շուտով հեղեղված կլինի այստեղ տայգան: Բազմաթիվ ֆարրիկաներում և գործարաններում պտրաստվում են տախտակներ, ֆաներներ, թուղթ, փայտի թափթիւղներինց՝ քացախ, սպիրտ: Անտառների անցյալում անանցանելի թափուտներով անց են կացվում խճուղիներ, շուտով կսլանան ելեկտրական գնացքներ:

Չորացված ճահիճներում հացահատիկները հասկ են դցել, կերախոտերը կանաչին են տալիս:

Յեւ այնտեղ, վորտեղ գեուհա քիչ առաջ թափառում եր «անտառների րրդոտ տերը» — արջը, այժմ աճում են մեծ գյուղեր ու քաղաքներ:



Տայգան Սպիտակ-Բալթիկ ծովյան ջրանցքի մօտ

ԱՐԻԱՆԳԵԼՍԿ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏԸ

Գարտեղի վրա դուե՛ք Արխանգելսկի նավահանգիստը:

Յածրագիր ճահճոտ ափերի միջև փուլել է Հյուսիսային Դվինայի լայն գետաբերանը: Յածրից սողում են յերկնակամարի վրայով մուլթ ամպերը, մռայլ են յերևում Դվինայի թուխ ալիւնները:


Բայց այդ ափերի կյանքն ուրախացնում է մարդուն: Ծխում

էն փայտապրոցման գործարանների ծխնիները: Վոր կողմն ել նայում ես — փայտի անվերջ պահեստներ: Իրար վրա դարսված են հաստ գերաններ, սղոցած տախտակները թեթև տանիքների տակ իրար վրա դարսված են բարձր կիտվածքներով:

Վերամբարձ մեքենաները ջրից դանդաղորեն հանում են, բարձրացնում և ապա կանոնավոր կերպով իրար վրա դարսում, ամբողջ ծառեր, վորոնք բերվել են լաստերով գետերի միջով:

Վազում են ելեկտրաքարշի վագոնները, սուր սուլում են սղոցարանի սուլիչները, չչում են շողենավերը: Հարյուրավոր բանվորներ, տալրակներն ու սղոցները մեջքներին, լցնում են նավահանգիստը: Հարյուրավոր ոտար շողենավեր դալիս են Արխանգելսկ տախտակ բարձելու: Նրանց բարձր կայմերն ու գույնգույն շրջակները ծածկել են գետը:

Այդ շողենավերը մեր փայտը տեղափոխում են աշխարհի բոլոր մասերը:



Սղոցագործարան

Անցնում են մեր խորհրդային ձկնորսանավերը, մարդատար շողենավերը, վորոնք բանվորներ են տեղափոխում:

Բայց դրանք կորչում են փայտանյութի մասսայի մեջ: Ասենուրեք փայտե տախտակներն ու գերանները բռնել են Դվի-

նայի ափերը, փայտը բարձր կիտվածքով դարսված և ոտարերկրյա նավերի վրա: Նավահանգիստներում բարձում են գերաններ և տախտակներ: Սղոցարանի մոտ գերաններով և ծածկված նաև գետը, վորտեղից թեք վրաքաշով հանում են դրանք և դործարան տանում:

ԻԳԱՐԿԱՆ ԲԵՎԵՌԱՅԻՆ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏ

Գարտեղի վրա գտե՛ք Իգարկա նավահանգիստը:

Յենիսեյի աջ ափին վերջին տարիներս աճեց նոր նավահանգիստ իգարկան:

Դեռևս քիչ ժամանակ առաջ Իգարկայի կառուցողներն առանց խարույկների և վրանների մոտ կանգնած պահապանների չեյին կարողանում քնել. զիչերը միշտ կարելի չեր սպասել, վոր արջերը կհարձակվեն:


Նույն ժամանակ քաղաքի առաջին բնակիչները կտրված էյին ամբողջ աշխարհից, սննդամթերքների մեծ նեղություն էյին կրում, համառորեն պոյքարում էյին տայդայի և բեկոային ցրտերի դեմ:

Յերկու տարվա մեջ բեկոային չրջաններից դեպի հյուսիս առաջացավ արդյունաբերական մի նոր քաղաք և նավահանգիստ: Փայտի համար այստեղ դալիս են ոտար շողենավեր: Բարձումը կատարվում է համարյա անընդհատ՝ գիշեր-ցերեկ:

Ծխում են գործարանային ծխնելույզները: Այստեղ յերեք սղոցարան փայտ են սղոցում՝ Յեվրոպա և Ամերիկա տրտահանելու համար: Նրանց կողքին մի քանի ուրիշ գործարաններ պատրաստում են Փաներա և փայտանյութի մասսա, վորից կարելի չե պատրաստել թուղթ և արհեստական մետաքս: Աշխատում են պահածոների գործարանները:

Քաղաքի ղեկաց գտնվող կղզու վրա տրակտորներով հող են մշակում: Բանջարանոցներում աճում են կարտոֆիլ, կաղամբ, սոխ և ուրիշ բանջարեղեններ: Մարդադեղիններում արածում են լավ կաթնատու անասուններ:

Քաղաքի մեջ կան շատ տներ, լայն փողոցներ, սյուներ՝ ելեկտրական լարերով: Աշխատում է ելեկտրոկայանը: Խոտում



Իզարկա նավահանգիստը

և ուղիտն: Կառուցված և կինո: Բացված են դպրոցներ, ահումբներ: Ահումբներում կադմակերպվում են դասախոսութիւններ, զեկուցումներ, յերեկույթներ:

Վարժաւթլումներ.— Ուրվագծային քարտեզի վրա նշեցե՛ք տալլայի դռտին: Դրեցե՛ք տալլայի գետերի անունները: Ուրվագծային քարտեզի վրա նշեցե՛ք Վերխոյանսկ, Յակուտսկ, Բերեզնիկի, Արխանգելսկ, Իզարկա քաղաքները:


Արտադասյան աշխատանք.— Կադմեցե՛ք ալրոմ՝ «Տալլայի դռտի» թեմայով:

4. ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏԻ

Խառն անտառների դռտին գտնվում և տալլայից գետի հալարով—արևմուտք:

Տալլայի և խառն անտառների սահմանն անցնում և մոտավորապէս Լենինգրադ—Կադան գծով: Հարավում սահմանն անցնում և Կադանից մինչև Կիև:

Քարտեզի վրա դռե՛ք խառն անտառների դռտին:



Խառն անտառների դռտում

ՍԱՎԱՌՆԱԿԻ ՎՐԱՅԻՑ

Այս հոդվածը կարդալիս հետեցե՛ք ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզին:

Մալաունակը մի կողմ թողեց Վիշնի Վոլոչոկ քաղաքը և բռնեց Մոսկովայի ուղղութիւնը:

Ամեն ուղղութիւնը տարածվում են անտառներ: Նրանք հաճախ ընդհատվում են կտրտած անտառատեղերով և ճահիճներով: Վայրը հարթ և, թեթևակի բլրապատ: Ներքևում նշմարվում են գետերի արծաթափայլ թելերը և բազմաթիվ գյուղեր՝ շրջապատված վարելահողերով և բանջարանոցներով:

Վորքան առաջ ենք դնում, այնքան ավելի հաճախ ենք հանդիպում կտրտված անտառատեղերի, վարելահողերն ավելի յեն ընդարձակվում, գյուղերն ավելի շուտ—շուտ են պատահում:

Յերեաց վուչի դմրուխտն մեծ դաշտ: Մեկը, մյուսը... Սրանք վուչի կուլեկով տնտեսութիւնների դաշտերն են:

Կալինին քաղաքի մոտ ընկած և տորֆի ճահիճների ընդար-

ձակ տարածութիւն: Ծխում են Կալինինի դործարանների ու Փարբիկաների ծխնելույնները:

Սալառնակը կտրում է Վոլգայի դալարիող փայտէն ժաղաղէնը, և դարձյալ ներքևում անտառների ծածկոյց, միայն ավելի նոսր, քան հյուսիսում: Յեւ նրանք այժմ բիզ-բիզ չեն կանգնած — նրանց ուղղադէմն ավելի նուրբ են: Այս անտառներում սաղարթաւոր ծառերն ավելի շատ են:

Դարձյալ մի հարյուր կիլոմետրից քիչ ավելի, և սալառնակը կլինի Մոսկվայում:

Մեկը մյուսի հետեւից արադորեն անցան դյուզեր, բանվորական նոր ավաններ: Յերեսցին դործարաններ և Փարբիկաներ:

Անտառներն ավելի ևս նոսրացան: Միայն առանձին չկտրուոված անտառի մնացորդներով կարելի չէ դաղափար կազմել, վոր մի ժամանակ այստեղ նույնպէս անտառ է յեղել:

Բնությունը նահանջել է մարդու կամքի առաջ, չինարարության առաջ:

Ահա և, վերջապէս, Մոսկվան... Հանդես է գալիս դործարանային ծխնելույնների անտառը և քարե շէնքերի զանգվածը:

ԻՆՉՊԵՍ Ե ՓՈԽՎԵԼ ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԻՔԸ

Հին ժամանակ խառն անտառների ամբողջ գոտին ծածկված էր անանցանելի մութ անտառներով:


Այս տեղերը հարմար էին մարդկային հին բնակատեղերի համար: Անտառը պաշտպանում էր թշնամիների հանկարծակի հարձակումներից: Դեպի ամեն կողմ ցրվող դետերը հաղորդակցության լավ ճանապարհներ էին անանցանելի անտառներում:

Մարդը կացինը ձեռքին հարձակվեց անտառի վրա: Նա կըտրեց ծառերը, մաքրեց բացուտը ցանքի և բնակարանի համար:

Մութ անտառները հեղհետե վոչնչանում էին, նորաբնում: Նրանց փոխարեն յերևան էին դալիս վարելահողեր, մարդադեմքներ, առաջ էին դալիս դյուզեր...

Անցան դարեր, և մարդկանց բազմաթիվ սերունդների աշխատանքից խառն անտառների գոտին բոլորովին անճանաչելի դարձավ:

Անտառի ահալին տարածութիւններն անհետացան: Դա պահպանվեց միայն քիչ վայրերում: Զորացվել են հաղարավոր հեկտար ճահիճներ:



Փարբիկաներն ու դործարանները խառն անտառների գոտում

Անհետացած անտառների և չորացված ճահիճների փոխարեն առաջացան դյուզեր և քաղաքներ, դործարաններ և Փարբիկաներ, ամեն ուղղութեամբ տարածվեց յերկաթուղիների ցանցը:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութիւնից հետո ծավալվեց կոլեկտիվ և խորհրդային անտեսութիւնների չինարարութիւնը:

Աճեցին նոր հսկա դործարանների զանգվածները:

Անտառների ու այգիների կանաչի մեծ կառուցվել են նոր քաղաքներ: Վերակառուցվել ու ծառայարդիվ են հին քաղաքները:

ԽԱՌՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Գետակի ափին ապաստան է գտել մի փոքրիկ դյուղ:

Գյուղի շուրջը տարածվում են դաշտեր, խի նրանցից հետո՝ անտառներ... Ամառային շոգ օրերին անտառը հրապուրում է իր

խիտ կանաչով, խոտառնարով ստվեր և հով: Անտառի յեզրը ծածկվել է ջահել կեչիներով: Արևի ճառագայթներն անցնում են ճյուղերի միջով և պայծառ բծեր գցում խոտի խիտ, գույնզույն գորգի վրա: Կապտին են տալիս զանգակիկները, կարմրին և տալիս մեխակը, առվույտը: Տեղ-տեղ հրապուրիչ հայացքով նայում են մորու հատապուղները:

Յեզրից հեռու անտառն աստիճանաբար խտանում է, կեչիները քշանում են: Սրանց խեղդում են բարձր, մութ յեղենինները: Նրանց մեջ աճում են լորի, բարտու ծառեր: Սպիտակին են տալիս փունջներու խոշոր ծաղիկները: Ոտն ալևս ալևս խիտ ու ծաղիկներով խայտարակտ չէ: Հատապուղներ ալստեղ քիչ կան: Բայց դրանց փոխարեն պատահում են սունկեր: Հաճախ լսվում է, թե ինչպես է կտցահարն իր կտցով ծեծում հին յեղենու կեղևը: Յերբեմն ծառերի ճյուղերի մեջ յերևում է սկյուռի շեկ մուշտակը: Ճովողում են անտառային թռչունները:

Ահա մի մեծ բացուտ:

Շարքերով դարաված են կտրված փայտերը, իսկ նրանց մեջ ցցված են թարմ կոճղեր: Անտառն ալստեղ հենց այս ձմեռն են կտրատել, իսկ բացուտն արդեն ծածկվել է բարձր, հյութալի խոտով, կոճղերի չուրջը բռնել են մոռի թփերը:

Բացուտից հետո դարձյալ անտառ է, բայց ճահճոտ, խրուտ: Ամառն անհնարին է այնտեղ թափանցել:

ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Խառն անտառների գոտու մակերևույթը, ինչպես քարտեզից յերևում է, դաշտավայր է: Մեջտեղով, հյուսիսից դեպի հարավ, անցնում է Միջին Ռուսական բարձրությունը:

Հարթության մակերևույթը միանգամայն հարթ, ուղիղ չէ, այլ բլրոտ:

Գետերը. — Քարտեզից յերևում է, վոր խառն անտառների գոտու միջով հոսող գետերն սկիզբ են առնում Միջին Ռուսական բարձրությունից և հոսում տարբեր ուղղությամբ դեպի հետևյալ յերեք ծովերը՝ Բալթիկ, Սև և Կասպից:

Քարտեզի վրա դեմք Վոլգա, Դոն, Դնեպր գետերը: Ցույց տվե՛ք նրանց ամրող հոսանքը՝ ակունքից սկսած մինչև դետարերանը:

Խառն անտառների գոտու կլիման ավելի տաք է, քան տաք-դաշի կլիման: Արեմուտքից, Ատլանտյան տաք ովկիանոսի կողմից փչող քամիները բերում են տաքություն և մեղմացնում են ձմեռային սառնամանիքները: Ձմեռն ալստեղ տևում է մոտ 5 ամիս, բայց ավելի մեղմ է, քան թե տաքայում: Ամառն ավելի ամիս, բայց ավելի մեղմ է, քան թե տաքայում: Հաճախ անձրևներ են յերկարատև և և տաք, քան տաքայում: Հաճախ անձրևներ են յալիս: Անձրևներ բերում են Ատլանտյան ովկիանոսի կողմից փչող քամիները:

Հողերը պողոտային են, ինչպես և տաքայում: Բայց նրանք ալստեղ ավելի արդավանդ են:

Բուսականությունը և կենդանական աշխարհը. — Կլիմայի մեղմության շնորհիվ ալստեղ աճում են սաղարթավոր ծառերի զանազան տեսակներ՝ կեչի, կաղնի, քլսկի, հացի, լճրի: Փշա-տերև ու սաղարթավոր ծառերն աճում են մեկընդմեջ: Տորֆային ճահճներն բնագրծով տարածություն են բռնում:

Շատ առաջ ալստեղ դեմքում էլին մութ, անանցանելի անտառներ: Այժմ նրանք համարյա բոլորովին կտրված են: Մեծ տարածությամբ անտառներ մնացել են միայն ամենաարևմտյան մասում՝ Պոլեսայում:

Այնտեղ, վորտեղ անտառները պահպանվել են, ապրում են նույն անտառային դաղաններն ու թռչունները, ինչ վոր տաք-դաշում:

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏՈՒՄ

Նայեցե՛ք քարտեզին. խառն անտառների գոտում նշված է յերկու մեծ արդյունաբերական շրջան: Մեկը Լենինգրադի մոտ, իսկ մյուսը՝ Մոսկվա, Կալինին, Իվանովո, Գորկի քաղաքներ միջև:

Այս շրջաններում առաջ ևս ավելի շատ դործարաններ ու ֆաբրիկաներ կային, քան թե ուրիշ տեղերում: Բայց արդյու-


նաբերությունն այստեղ առանձնապես զարդացավ խորհրդային իշխանության օրոք:

Հիմնովին վերակառուցվեց Մոսկվայի և Լենինգրադի արդյունաբերությունը: Այստեղ կառուցվեցին և սարքավորվեցին բազմաթիվ խոշոր գործարաններ:

Այս գործարաններում սկսեցին առաջին անգամ պատրաստել զանազան բարդ մեքենաներ՝ ԽՍՀՄ-ի տարբեր վայրերում կառուցվող գործարաններն ու ելեկտրոկայանները սարքավորելու համար:

Աճեց ավտոմոբիլային գործարան-դիզանոյր Գորկի քաղաքում: Ընդարձակվեցին ու վերակառուցվեցին Մոսկվայի և չրջակայքի, Կալինինի և Իվանովոյի տեքստիլ գործարանները:

Խառն անտառներէ գոտում արդյունաբերությունը զարգանում և մեծ թափով: Շատ վառելիք և պետք, վորպեսզի նրա



«Նրանի ուտարը» ելեկտրոկայանը

բազմաթիվ գործարաններն ու ֆաբրիկաներն անընդհատ աշխատեն:

Սկսեցին արդյունահանել այն տորֆը, վորն այստեղ, անանցանելի ճահիճների մեջ, դարերով ընկած էր առանց չահագործման: Իսկ վորպեսզի այդ տորֆի չահագործումն ավելի ձեռնառու

լինի, սկսեցին ելեկտրոկայաններ շինել հենց տորֆային ճահիճներում: Արդեն կառուցված են և տորֆով աշխատում են յերկու մեծ ելեկտրոկայանը— Լենինի անվան Շատուրայի ելեկտրոկայանը, վոր Մոսկվայից 135 կիլոմետր դեպի արևելք և գտնվում, և «Կարմիր հոկտեմբերը»— Լենինգրադի մոտ:

ԼԵՆԻՆՅԱՆ ՇԱՏՈՒՐԱ

Ֆիզիկական քարտեզի վրա գտե՛ք Շատուրայի ելեկտրոկայանը:

Այնտեղ, վորտեղ այժմ կանգնած է Շատուրայի ելեկտրոկայանը, անհիշելի ժամանակներից ձգվում էյին մամուռի անանցանելի ճահիճներ:

Հաղարավոր հեկտար տարածությամբ փռվում էյին ճահճուհներ և վտիտ ցածրիկ անտառներ:

Ճահիճների մեջ գտնվող կղզիների վրա տեղ-տեղ պատըսպարվում էյին խոճուկ գյուղակներ:

Ճահիճները գյուղացիներին սղքատացնում և հիվանդացնում էյին: Մինչդեռ դրանք իրենց մեջ մեծ հարստություն էյին պարունակում— տորֆի հսկայական պաշարն էր այդ:

Յեկավ 1917 թ. Հոկտեմբերը: Բանվորներն իշխանությունն իրենց ձեռքն առան: Սկսվեց արյունահեղ պատերազմ սպիտակների դեմ: Գեներալները դրավեցին այն տեղերը, վորտեղ նավթ և ածուխ էր ստացվում: Մոսկվայի արդյունաբերական չրջանը մնաց առանց վառելիքի:

Գործարանների կրակարանները հանդուժում էյին: Բնակարանները մնացել էյին առանց տաքացնելու: Ելեկտրական լապտերներն ազոտ լույս էյին արձակում:

Ինչ գնով էլ լինե՛ր՝ վառելիք պետք է ճարեյին:

Հիշեցին Շատուրայի ճահիճները:

Վ. Ի. Լենինը կարգադրեց անմիջապես սկսել տորֆի մշակումը: Աշխատանքը յեռաց: Բանվորներն սկսեցին առուներ փորել, ճահճի ջուրն այդ առուներով հեռացնել, տորֆը կտրել:

Յեւ տորֆը յերկաթուղով փոխադրվեց Մոսկվա և արդյունաբերական այլ կենտրոններ:

Յորֆի արտահանութիւնը Շատուրայում հետզհետե ընդարձակւում էր: Բայց այդ տորֆը ձեռնտու չէր յերկաթուղով տեղափոխել— դրա համար շատ վազոններ էյին պետք:

Այն ժամանակ մի այսպիսի միտք ծագեց՝ ճահճի մոտ մեծ ելեկտրոկայան կառուցել և ելեկտրական հոսանքը լարերով ուղարկել ուր վոր պետք է:

Անցավ մի քանի տարի: Յեւ Շատուրայի ճահճների վրա աճեց տորֆով աշխատող ամենամեծ ելեկտրոկայանն ամբողջ աշխարհում:

Նոտ 20 տարի յե աշխատում է Շատուրայի ելեկտրոկայանը: Նրա կրակարաններում այրվում է Շատուրայի տորֆը: Շոգեմեքենաները շարժման մեջ են ղեռնում տուրբինները (թխավոր անիվներ): Աշխատում են ելեկտրական մեքենաները, և հոսանքը հաղորդալարերով սլանում է դեպի զանազան կողմեր տաանյակ և հարյուրավոր կիլոմետր:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սառն անտառների դոտում շատ հին ժամանակներից սկսած զբաղվում են դյուղատնտեսությամբ:

Այս դոտում հողերը փոքր ինչ ավելի արդավանդ են, քան տայրայում:

Կլիման ավելի մեղմ է, յերկրագործության համար ավելի հարմար:

Հին ժամանակներից սկսած այստեղ մշակում են գարի, վարսակ, հաճար, վուշ, կանեփ, կարտոֆիլ և ուրիշ բանջարեղեններ: Վերջերս շատ տեղերում սկսել են ցանել նաև ցորեն:

Բայց խառն անտառների դոտում դյուղատնտեսութիւնը յերբեք չի կարողացել հողալ նույնիսկ իր դյուղացու կարիքները: Հողը կարիք ուներ լավ մշակման և պարարտացման, խոկ ցարական կտտավարութիւնից և կալվածատերերից քայքայված դյու-

ղացիները, չէյին կարողանում հողը կանոնավոր մշակել և լավ պարարտացնել: Շատերն անասուններ և անհրաժեշտ յերկրագործական գործիքներ ու մեքենաներ չունէյին, և այդ բոլորի հետ միասին, դյուղացիները միշտ ճորտացած էյին կուլակներից ու կալվածատերերից:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութիւնից հետո դյուղացիներն ազատագրվեցին գիշատիչների լծից և համախմբվեցին կոլտնտեսութիւններում: Ստեղծվեցին մեքենամարակտորային կայաններ: Հողն սկսեցին լավ պարարտացնել և մշակել: Դաշտերի բերքատուութիւնն ուժեղ չափով բարձրացավ: Կոլտնտեսականներն սկսեցին ապրել ունեւոր կյանքով:

Սույոր արդյունաբերական քնակավայրերի շուրջը կազմակերպվեցին հզոր բանջարաբուծական տնտեսութիւններ և կաթնատնտեսութիւններ:

Գյուղատնտեսութիւնն արագ աճող քաղաքներին սկսեց աւելի շատ մթերքներ տալ, քան առաջ:

ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Սառն անտառների դոտում ապրում են գլխավորապես Բելոռուսներ և ռուսներ: Այստեղ են տեղափոխված Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնը (ԲՆՍՀ) և Ռուսաստանի Խորհրդային Փեղերատիվ Սոցիալիստական Հանրապետութիւնը (ՌՍՖՍՀ) գլխի մասը:

Քարեղէ վրա դաե՛ք ԲՆՍՀ և ՌՍՖՍՀ:

Աշխատավոր բելոռուսները ցարի ժամանակ ազատիկ կյանք էյին վարում: Բելոռուսական դյուղերը նոսր կերպով ցրված էյին ճահճների ու անտառների մեջ:

Անրերրի հողերը ցածր բերք էյին տալիս: Այստեղ շատ թույլ էր զարգացած արդյունաբերութիւնը: Բնակչութիւնը խավար էր ու անգրագետ: Սակավաթիվ դպրոցներում ուսուցանում էյին միայն ռուսերեն լեզվով:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութիւնից հետո աշխատավոր բելոռուսների կյանքը իրոտ բարելավվեց:

Բելոռուսիայում շատ մեծ ուշադրութիւն է դարձվում անանցանելի ճահճների դեմ պայքարելու գործի վրա, քանի վոր

դրանք դյուղատնտեսության գլխավոր չարիքն են հանդիսանում : Զորացվել են վիթխարի տարածությամբ ճահիճներ, վորոնց տեղքն այժմ նոր վարելահողեր և արոսներ են փռված :

Զորացված տորֆային ճահիճները վրա հիմնվել են ելեկտրոկայաններ, վորոնք այժմ եներգիա յեն տալիս դյուղատնտեսությանն ու արդյունաբերությանը :

Կառուցված են փայտի վերամշակման բաղմաթիվ գործարաններ :

Բելոռուսիայում արտդրեն զարգանում է նաև կուլտուրական կյանքը : Այնտեղ մտցված է ընդհանուր ուսուցում : Բելոռուսական լեզվով հրատարակվում են բազմաթիվ թերթեր ու ժուռնալներ : Ստեղծվել են մի քանի տասնյակ բարձրագույն բուսական հաստատություններ ու գիտահետազոտական ինստիտուտներ :

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Նայեցեք քարտեզին : Դուք տեսնում եք, վոր խառն անտառների դոտու վրայով ամեն կողմից դեպի Մոսկվա յեն ձգվում յերկաթուղիներ : Տասնմեկ յերկաթուղի Մոսկվայում միանալով իրար հետ՝ կաղմում են Մոսկվայի յերկաթուղային հանգույցը : Նրանք Մոսկվան, իսկ նրա միջոցով նաև մոտակա արդյունաբերական կենտրոնները, միացնում են Սոբհրդային Միության հեռավոր չրջանների հետ :

Սառն անտառների դոտու արդյունաբերական կենտրոններում արտադրած միլիոնավոր տոններով դանադան ապրանքներ այդ ճանապարհներով հոսում են դեպի Սոբհրդային Միության դանադան անկյունները : Այդ նույն ճանապարհներով հախառակ ուղղությամբ փոխադրվում են բազմազան հում նյութեր, ինչպես և վառելիք :

Քարտեզի միջոցով պարզեցե՛ք թե Մոսկվայից ապրանքները յերկաթուղով ռեք կարելի յե փոխադրել :

Բայց յերկաթուղիները քիչ են : Ճանապարհների մեջ ամենից եժանը ջրային ճանապարհն է :

Նայեցեք ԽՍՀՄ-ի քարտեզին : Սառն անտառները դոտում սկսվում է Յեվրոպայի ամենամեծ դետը՝ Վոլգան : Նա կաղմում է ջրային մի յերկար ճանապարհ : Ավելի քան $3\frac{1}{2}$ հազար կիլոմետր յերկարություն ունի այն :

Ձախ կողմից Վոլգայի մեջ թափվում են մեծ գետեր, կրտեղելով խիտ անտառները : Աջ կողմից Վոլգայի մեջ է թափվում Ոկա գետը Մոսկվա վտակով, վորի վրա գտնվում է Մոսկվա քաղաքը :

Վոլգան կարում է խառն անտառների համարյա ամբողջ գոտին, հոսում է Կալինին, Գորկի, Կազան քաղաքների մոտով և իր ջրերը տափաստանների միջով տանում է դեպի Կասպից ծովը :

Բայց Մոսկվա քաղաքը, վոր խառն անտառների դոտու ամենախոշոր արդյունաբերական կենտրոնն է և ամբողջ Սոբհրդային Միության մայրաքաղաքը, այդ մեծ ջրային ճանապարհից մի կողմ է մնում : Վոլգայի մեծ շողենավերը Մոսկվա սակավաջուր գետով չեն կարողանում մոտենալ Մոսկվա քաղաքին :

Մինչդեռ Վոլգան բավականին մոտ է հոսում, Մոսկվայից չատ մոտ :

Քարտեզի վրա ցույց տվե՛ք այն տեղը, վորտեղ Վոլգան ամենից շատ է մոտենում Մոսկվային :

Սոբհրդային կառավարությունը վորոչեց ջրային ճանապարհը մոտեցնել Մոսկվա քաղաքին :

Յեվ ահա Վոլգայի և Մոսկվայի միջև ջրանցքը փորված է, կառուցված են ամբարտակներ և ջրարգելակներ, ստեղծված են հսկայական լճեր, դրված են հզոր ջրհան կայաններ, վորոնք ջուրը մղում են :

Վոլգայի ջուրը թափվեց Մոսկվա գետի մեջ, և Մոսկվա գետը ջրառատ դարձավ :

Յեվ կարմիր մայրաքաղաքից անցան ջրային ընդարձակ ճանապարհները մեր հսկայական յերկրի տարբեր կողմերը՝ դեպի Կասպից, Բալթիկ և Մպիտակ ծովերը :

Ձրանցքում սուլեցին խոշոր շողենավերը : Նրանք Մոսկվա բերին և Մոսկվայից տարան միլիոնավոր տոնն դանադան բեռներ :

Վիթխարի խառն անտառներ են աճում Հեռավոր Արևելքում՝ Ամուր գետի և նրա վտակների ափերին։ Դրանք բոլորովին նման չեն ԽՍՀՄ Յեվրոպական մասում աճող անտառներին։ Սրանք խիտ, տեղ-տեղ բացարձակ անանցանելի անտառներ են։ Այստեղ աճում են՝ յեղենի, բոխի, կաղնի, հացենի, ընկուղենի, խցանածառ։ Թփերն ու լիանաները խիտ կերպով պարուրում են դարավոր ծառերի բները։

Անտառային թավուտներում ապրում են վաղբեր, վարալներ, յեղջերուներ և ուրիշ վայրի կենդանիներ։

Այստեղ շատ քարածուխ, յերկաթահանք, վոսիկ կա։

Հեռավոր Արևելքի խառն անտառների բնական հարստությունները վիթխարի չեն։

Սակայն այդ հարուստ յերկրամասը մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը համարյա անմարդաբնակ էր։

Այժմ այնտեղ յեռում և կյանքը։ Կառուցվում են Ֆարրիկաներ, զործարաններ, ստեղծվում են կոլտնտեսություններ և խորհանտեսություններ։

Կուսական անտառի տեղն աճում են քաղաքներ։

Այդպես ստեղծվեց Կոմսոմոլսկ քաղաքը—ԽՍՀՄ ամենայնորիտասարդ քաղաքներից մեկը։ Այդ քաղաքը կառուցեցին կոմյերիտականները, վորոնք յեկան այստեղ Խորհրդային Միության ղանապան քաղաքներից։

Վարժույթյուններ.— Ուրվազծային քարտեզի վրա նշեցե՛ք խառն անտառների դոտին։

Նշեցե՛ք Մինսկ, Լենինգրադ, Կաղան, Կիև, Մոսկվա, Գորկի, Կալինին, Իվանովո, Վլադիվոստոկ, Կոմսոմոլսկ քաղաքները։

Նշեցե՛ք այն տեղերը, վորտեղով անցկացված և Մոսկվա—Վոլգա ջրանցքը։

Արտադաշյան աշխատանք.— Կաղմեցե՛ք ալրոմ՝ «Խառն անտառների դոտին» թեմայով։

5. ԱՆՏԱՌԱՏԱՓԱՏՄԱՆԻ ՅԵՎ ՍԵՎԱՅՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՏՄԱՆՆԵՐԻ ԳՈՏԻ

Անտառներից հարավ հաղարավոր կիլոմետր տարածության վրա մի շերտով ձգվում են սևահողային տափաստանները։

Սրանք սկսվում են ԽՍՀՄ-ի արևմտյան սահմանի մոտ, անցնում են Միուխյան ամբողջ Յեվրոպական մասով և մտնում Ասիայի խորքերը։


Անտառները միանգամից չեն փոխվում տափաստանի։ Սկզբում անտառների մեջ յերևան են գալիս անտառազուրկ տեղեր—անտառները փոխվում են անտառատափաստանների։

Դեպի հարավ անտառազուրկ տարածությունները հետզհետե շատանում են, իսկ անտառները՝ քչանում։

Վերջապես անտառները բոլորովին անհետանում են և տեղի տալիս միասղաղադ տափաստանների։

ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասում սևահողային տափաստանները հասնում են մինչև Սև և Ազովի ծովերը։

Քարտեզի վրա դոտե՛ք անտառատափաստանի և սևահող տափաստանների դոտին։



Անտառատափաստան

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳՈՏՈՒՑ ԴԵՊԻ ՍԵՎԱՀՈՂ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԸ

Այս նկարագրությունը կարգալիս հետևեցե՛ք բնական գոտիների քարտեզին:

Մենք Մոսկվայից Ռոստով ենք գնում:

Մոսկվան իր դործարանային ծխնելույզների տնտեսով ու հաղարավոր քարե շենքերով մեր հետեն եմնացել:

Վազոնի պատուհանի առաջով սլանում են անտառներ, դաշտեր, մարդագետիկներ:

Տեղ-տեղ անտառը բոլորովին մոտենում է յերկաթուղուն:

Անցնում են մուգ-կանաչադույն յեղեկները, սպիտակաբույն կեղևները, կարմրադույն սոճիները, կաղամախիները, խիլ յեղերին՝ բազմապիսի թփուտներ ու ծաղիկներ:

Մի ժամանակ այստեղ բնդարձակ անտառներ են յեղել: Բայց հիմա այդ անտառները խիստ կտրտվել են:

Վորջան ավելի հարավ ես գնում, այնքան նվազում են անտառները:

Անցնում ենք Ոկա դետը: Այստեղ չըջակայքն ավելի բաց է:

Վորոնեժի մոտ անտառները բոլորովին չքանում են:

Շուրջ, վորջան աչքդ կտրի, անծայրածիր բաց տարածություններ են:

Տեղ-տեղ փոքրիկ, բայց սովորաբար խիտ անտառներ կան ձորերում ու գետերի մոտ կուչ յեկած:

Ամեն կողմ փռված է ցորենի անծայր ու անսահման արտերի արհեստյալ ծովը:

Տեղ-տեղ վառ վոսկեգույն բծերով յերևում են ծաղկող արևածաղկի դաշտեր և հասունացող ձմերուկներով բոստաններ:

Խիլ նրանց շուրջը դարձյալ նույն հարթ, տեղ-տեղ թեթև-վալի բլրոտ արտերի տարածություններն են:


Մինչև Ռոստով մեր գնացքն անցնում է հացահատիկների ծովի միջով: Յերևում է գործարան, հացի ելեվատոր, դյուղ...

Յեվ դարձյալ ամեն ինչ թաղվում է անծայր արտերի մեջ: Մի քանի տեղերում արդեն սկսվել է բերքահավաքը:

Սևահողային տափաստաններն այժմ համարյա ամբողջապես հերկված են և վերածված արտերի, այլիկների և բանջարանոցների:

Բոլորովին ուրիշ տեսք ունեյին նրանք մոտ 200 տարի առաջ: Այն ժամանակ չկային ցորենի վոսկեգոծ արտեր, չկային բոստաններ ու արևածաղկի դաշտեր, չկային նույնիսկ դյուղեր: Ընդարձակ տարածության վրա ձգվում էյին տափաստաններ, վորոնց դեռ մարդու ձեռքը չէր դիպել:

Ներկայումս խոսքն, դեռևս չհերկված տափաստան չատ քիչ տեղերում է մնացել:



Տափաստանում կոմրայններով հավաքում են հացահատիկը

ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Նայեցե՛ք ֆիզիկական քարտեզին. այն տարածությունը, վոր բռնված է սևահողային տափաստաններով, համարյա ամբողջապես կանաչ

դույն ունի: Սեահողային տափաստանները տարածված են հարթ դաշտավայրերի վրա:

Մի քանի տեղերում, որինակ, արևմտյան սահմանի մոտ, արևելքում՝ Վոլգա գետի և Ուրալյան լեռների մոտ, կանաչ դույնը փոխվում է դեղնավունի: Այդ նշանակում է, վոր տափաստանների մակերևույթն այստեղ բարձրանում է:

Դեղնավուն բիծ դտնվում է նաև Ազովի ծովից դեպի հյուսիս-արևելք: Սա սեահողային տափաստանների արևմտյան մասի ամենաբարձր տեղն է— Դոնեցի բլրաշարքը. այստեղ դրսևվում է ամբողջ աշխարհին հայտնի Դոնբասը:

Սեահողային տափաստանի հարթությունն ամեն ուղղությամբ կտրտված է ձորերով: Բայց աշխարհագրական քարտեզի վրա այդ չի յերևում, վորովհետև այդ քարտեզը շատ փոքր մասշտաբ ունի:

ԴԵՏԵՐԸ.— Տափաստանային հարթության արևմտյան մասով դեղեցիկ դալարումներով անցնում են մեծ գետերը՝ Դոնետս, Դոնեց, Դոնց վտակով, Կուրամ, Վոլգա, Ուրալ: Տափաստանային հարթությունն այստեղ թերված է հարավային ծովերի կողմը, և այդ պատճառով հիշված բոլոր գետերը հոսում են դեպի այդ ծովերը:

Ուրալից դեպի արևելք դանիոդ տափաստաններում գետեր քիչ կան: Համարյա բոլորն ել թափվում են Ուր դետը:

Քարտեզի վրա գտե՛ք հիշյալ գետերը: Իմացե՛ք, թե այդ գետերից յուրաքանչյուրը վո՛րտեղ է սկսվում և վո՛ր ծովն է թափվում:

ԿԼԻՄԱՆ.— Սեահողային տափաստանները գտնվում են ԽՍՀՄ-ի հարավային մասում: Այստեղ ավելի տաք է, քան թե Միություն ուրիշ շատ վայրերում: Սեահողային տափաստաններում ամառը շատ չուգ է լինում և յերկար՝ 4—5 ամիս: Նա սկսվում է արդեն մայիսին: Ամառն ողը չոր է լինում: Անձրևները շատ հազվադեպ են: Յերբեմն փչում են չոր և տաք քամիներ: Նրանք դալիս են Թուրանի դաշտավայրից:

Կարճատև աշնանը հետևում է ձմեռը: Ձմեռն այստեղ յերկարատև չէ և ավելի մեղմ է, քան թե անտառային դոտում, բայց սառնամանիքները յերբեմն հասնում են մինչև 20 աստիճանի: Հաճախ մոլեղնում են հյուսիս-արևելյան ցուրտ քամիներ:

ըր և ձյան մրրիկները (բուք), վորոնք ձյունով ծածկում են դյուղեր, ճանապարհներ, գնացքները կանգնեցնում են ճանապարհին:

Գարունը վաղ է դալիս և շուտ ել անցնում է: Ձյունոտ ձմեռվանից հետո հողի և ողի մեջ դարնանը շատ խոնավություն է դտնվում: Արեգակը տաքացնում է ողը և հողը: Կարճ ժամանակամիջոցում ամբողջ բնությունն արթնանում է:

Վորքան դեպի արևելք ենք գնում, սեահողային տափաստաններն այնքան ավելի շատ են հեռանում ծովից: Քամիներն ավելի ու ավելի քիչ խոնավություն են բերում: Կլիման ավելի ու ավելի յե չորանում: Ձմեռվա և ամառվա տարբերությունն ավելի զգալի յե դառնում:

ԽՈՊԱՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՈՒՍԱԿԱՆ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ.— Գարունը տարվա ամենալավ յեղանակն է տափաստանում:

Ձմեռային սառեցնող բուքերից ու փոթորիկներից հետո մարտին սկսվում է յեղանակը տաքանալ: Ձյունն արագությամբ հալվում է, և խոնավությամբ հաղեցած հողը ծածկվում է ծաղկող խոտերի խայտարղետ գորգով: Ամենց առաջ ծաղկում են ճմաղիկը, կակաչը: Նրանք անցյալ տարի իրենց սոխարմատների մեջ հավաքել են սննդարար նյութերի պաշար: Հետո յերևում են դանազան խոտեր:


Փափուկ խոտե գորգի մեջ խժվժում են բղեղներ, ծղրիղներ և ուրիշ միջատներ: Նրանք ստիպված չեն սնունդ վորոնելու: Այդ սնունդն առատորեն դտնվում է նրանց շուրջը— դրանք տափաստանի բույսերն են:

Հաճախ պատահում են գետնակյուռներ, արջամկներ և ուրիշ կրծողներ: Սրանք նույնպես բույսերով են կերակրվում, հետեվապես և նրանց համար առատ սնունդն արդեն պատրաստ է:

Հարավից այստեղ են գալիս հազարավոր տեսակ-տեսակ թռչուններ:

Ամբողջ ոըրը դարնանային ողը լցված է թռչունների աղմուկով:

Յեւ թռչունների ալդ ամբողջ բազմութիւնն ապրում է տափաստանի միջատների և բույսերի հաշիւին:



Փետրախոտ



Բարձրենյակ

Բայց ահա գալիս է ամառը, Արեն անխնա այրում է, շողն սկսվում է, հողը չորանում է: Գարնանային բույսերը ծաղկաթափ են լինում և թառամում: Նրանք արդեն կարողացան իրենց սոխարմատներում սննդի առատ պաշար հավաքել հաջորդ տարվա համար:

Նրանց այժմ փոխարինում են այնպիսի բույսեր, վորոնք կարողանում են տանել շոգը, չորը ցեղանակը

և խոնավութիւնը սակավութիւնը հողում:

Տափաստանը գարնան պէս ծածկված է հրաշալի գորգով, բայց այժմ արդեն ուրիշ գորգ է, վորն այնպէս վառ է, ինչպէս գարնան գորգը:

Ծաղիկները քիչ են, փարթամ աճել են փետրախոտը և բարձրենյակը— բարձր խոտեր՝ յերկար ու նեղ խողամաղի նըման տերևներով:


Տափաստանից չվում են գարնանն այստեղ յեկած թռչուն-

ները: Տափաստանում մնում են մեծ արոսները, արտուսները և տափաստանային արծիւները:

Գալիս է ամառվա յերկրորդ կեսը:

Արեն անտանելի այրում է:

Ողում մի կաթիլ խոնավութիւն չկա: Տափաստանն անճանաչելի յէ դառնում: Չորանում, վոչնչանում են այն բոլոր բույսերը, վորոնք հրաշալի ծաղկեցորդով ծածկում էին տափաստանը: Թառամեցին նրանց ծաղիկները, սերմերը հասունացան, և նրանք ավարտեցին իրենց կյանքի շրջանը:



Մեծ արոս

Մնացին միայն շողին ու յերաշտին ամենից լավ դիմացող բույսերը— փետրախոտը, բարձրենյակը և զանազան մոլախոտեր: Բայց սրանք էլ խանձվել են ու դեղնել: Այժմ, թվում է, տափաստանը մուգ-դեղնավուն գույն ունի:

Սա տափաստանի բուսականութեան վերջին հերթափոխութիւնն է: Թվում է, թէ տափաստանը մեռած է: Բայց ցերեկվա լուութիւնը խաբուսիկ է:

Մինչև արեւածաղը տափաստանում մեծ կենդանութիւն է տիրում:

Մերթ այստեղ, մերթ այնտեղ վեր են թռչում կախավների յերամները: Խոտերի միջից լավում է միջատների անվերջ յերաժշտութիւնը: Ամեն քայլափոխում աուում են դետնասկյուռները: Տափաստանի վրայով ճախրում է տափաստանային արծիւը՝ վորոնեղով իր վորսը:

Բայց ահա շոգը թուլանում է: Սկսում են փչել ցուրտ քամիները: Գալիս է աշունը— սերմերի ցրվելու ժամանակը: Քամու ուղղութեամբ գլորվում է և իր սերմերը ցրում յերմնապահ: Բոլորովին լուում են թռչուններն ու միջատները, պատրաստվում են ձմեռվան նաև կրծողները:


ՀՈՂԸ.— Հազարավոր կիրճետուր տարածութեան վրա ձգվող այս ամբողջ տափաստանը ծածկված է սևահողի հաստ շերտով:

Ամբողջ աշխարհում վոչ մի յերկիր արգավանդ սեահողի ալսպիտի ընդարձակ տարածութիւն չունի:

Դարեր շարունակ տարեցտարի հողը ծածկվում էր տափաստանային խիտ խոտերով: Ամեն տարի աճում, թառամում,



Գետնակիլու



Յժախ

ու վտում էյին այդ խոտերը: Այսպես շատ դարերի ընթացքում հողի մեջ բուսահող է հավաքվում, սեահողի հզոր շերտ է առաջանում:

Մեվսւղը.— Սեահողային տափաստանների հիմնական հարստութիւնն է:

Յեթն կորստաբեր յերաշտ չի լինում, ապա տափաստանը տալիս է հրաշալի բերք—փառահեղ խոտ, առատ հացահատիկներ և զանազան պտուղներ ու բանջարեղեն:

Առաջադրութիւններ.— Սեահողային տափաստանների կլիման համեմատեցե՛ք տայլայի կլիմայի հետ:

Համեմատեցե՛ք սեահողային տափաստանների բուսականութիւնը տայլայի բուսականութիւնի հետ:

Պատեցե՛ք, թե ինպես է տարվա ընթացքում փոփոխվում բուսականութիւնը սեահողային տափաստաններում. ինչո՞ւ յի նա փոխվում:

Սեահողային տափաստանների հողը համեմատեցե՛ք տայլայի հողի հետ: Ինչո՞ւ սեահողային տափաստանների հողի մեջ շատ բուսահող կա:

ԱՆՏԱՌԱՏԱՓԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՄԵՎՍԱՆՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ


Անտառատափաստանի և սեահողային տափաստանների դուրսը բնակչութիւնը խիտ է:

Այդ բնակչութիւն մի մասը հողագործութեամբ և դրաղվում:

Տափաստանի դյուղերը մեծ են, բայց հաճախ հեռից չեն յերևում, վորովհետև զանվում են թեք լանջերով ձորակներում, և կաշում են գետերին ու գետակներին: Այստեղ հեշտ է ջուր ստանալ:

Կալով կառուցված սղիտակ խրճիթները ձգվում են յերկար շարքերով:

Բնակչութիւն մյուս մասն աշխատում է գործարաններում զանազան ձեռնարկութիւններում և հիմնարկութիւններում:



Դյուղը տափաստանում

Այստեղ, ինչպես և խառն անտառների դուրսում, շատ կան մեծ քաղաքներ, գործարաններ և Փարրիկաներ: Ամեն ուղղութեամբ անցնում են յերկաթուղիներ:

Անտառատափաստանի և սեահողային տափաստանների դո-
տում գլխավորապես ուկրաինացիներ և ռուսներ են ապրում:

Վատ էլին ապրում բոլոր աշխատավորները ցարական Ռու-
սաստանում: Բայց ռուս աշխատավորներից ավելի ևս վատ ապ-
րում էլին աշխատավոր ուկրաինացիները: Նրանք իրավունք
չունեին նույնիսկ իրենց մայրենի լեզվով ազատորեն խոսելու:
Հիմնարկներում բոլորը պարտավոր էլին ռուսերեն խոսել:

Ուկրաինացի յերեխաները պարտավոր էլին ռուսական զըս-
րոցներում սովորել: Ուկրաինական լեզվով զրգեր համարյա բո-
լորովին դոյուլթյուն չունեցին:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ Հեղափոխությունից
հետո աշխատավոր ուկրաինացիների կյանքն արմատապես փոխ-
վեց:

Կազմվեց Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետության (ՌԽՍՀ): Արագորեն զարգանում է Ուկրաին-
այի տնտեսությունը և կուլտուրական կյանքը: Ուկրաինայի
տնտեսական և կուլտուրական շինարարությունը խոշոր նշանա-
կություն ունի ամբողջ Միության սոցիալիստական շինարա-
րության համար:


Անտառատափաստանի և սեահողային տափաստանների
գոտում է գտնվում նաև ՌԽՍՀ մի մասը:

Քարեղե վրա գտե՛ր Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հան-
րապետությունը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

Սեահողային տափաստանները ԽՍՀՄ-ի հացի չտեմարանն
են: Սեահողային տափաստանները— տասնյակ հազարավոր հեկ-
տար վարելահողեր, բոստաններ, այգիներ և բանջարանոց-
ներ են:

Սեահողային տափաստանների գլխավոր գյուղատնտեսական
կուլտուրաներն են՝



ցորենը, յեգիպտացորենը, բազուկը, արեածաղիկը, ծխախո-
տը, բամբակը:

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՎԱՐՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՀՈ-
ՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ ՄԻՆՉԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐ-
ՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ Հեղափոխու-
թյունը սեահողային տափաստանների ամենալավ և արդավանդ
հողերը խոշոր կալվածատերերին և կուլակներին էլին պատ-
կանում:

Միջակ և չքավոք գյուղացիներն ունեյին փոքրիկ հողաբա-
ժիններ, քիչ անասուն, հաճախ զուրկ էլին լինում ամենակա-
րելիոր յերկրագործական գործիքներից, չունեցին արոտավայրեր
և անասուններ ջրելու տեղեր: Այդ պատճառով էլ նրանք միշտ
ստրկական վիճակի մեջ էլին գտնվում կուլակների և կալվածա-
տերերի ձեռքին:

Մանր գյուղացիական տնտեսությունը տարվում էր՝ նախ-
նական ձևերով և քայքայվում էր:

ԻՆՉՊԵՍ Ե ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՒՄ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ
ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ

Սեահողային տափաստանների մանր գյուղատնտեսական տըն-
տեսությունները միավորվել—կուլտնտեսություններ են կազ-
մել: Շատ կուլտնտեսականներ հասել են անցյալում չտեսնված
բերքատվության:

Հիմնված են հարյուրավոր հացահատիկային և ուրիշ խորհ-
տեսեսություններ: Խորհանուհություններն իսկական դյուղա-
տեսեսական դործարաններ են: Խորհրդային տնտեսություննե-
րում և մրդջ աշխատանքը—վարը, ցանքը և բերքահավաքը—
մեքենաներով և կատարվում:

Ստեղծված են հարյուրավոր մեքենա-տրակտորային կա-
յաններ: Մեքենա-տրակտորային կայանները և խորհրդային
տնտեսություններն իրենց տրակտորներով և որինակելի տնտե-
սությամբ ողնում են կոլտնտեսականներին՝ կոլեկտիվ տնտե-
սությունը կանոնավոր վարելու:

Շարունակ պայքար է մղվում յերաչտի և վնասատու կեն-
դանիների դեմ:

ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Քարտեզի վրա դտե՛ք Ողեստան:

Մենք գնում ենք տափաստանով, Ողեստայից 100 կիլոմետր
հեռու:

Ինչպե՛ս է փոխվել տափաստանը վերջին տարիներս:

Ամեն տեղ անց են կացրել նոր ճանապարհներ: Ճանա-
պարհների յերկու կողմը իրարից վորոչ հեռավորության վրա,
ձգվում են կանաչ, նեղ դուրեր: Դրանք թփերի տնկարաններն
են: Նրանք վարելահողերը պաշտպանում են քամուց, պահում
են ձյունը և խոնավությունը:

Ճանապարհին մենք շարունակ հանդիպում ենք բնական իր
ավտոմորիլների և տրակտորների: Տրակտորներն իրենց հետևից
քաշ են տալիս դուլթաններ և տափաններ, տեղափոխում են
բենդին և նավթ, փոխադրում են սայլակով բանվորներ: Ճանա-
պարհների յերկայնքով անցնում են մի քանի շարք հեռախոսա-
լարեր:

Հեռվում յերևում է մի ավան: Այդ մեքենատրակտորային
կայանն է: Շարքերով կանգնած են աղյուսից չինած յերկար
չենքեր—ղարափներ: Նրանց մեջ ձմեռը դտնվում են հարյու-

րավոր տրակտորներ, կոմբայններ, կալսող մեքենաներ և տրակ-
տորին կցվող գործիքներ: Նրանցից դենը դտնվում են տներ՝
կայանի տրակտորիստների, բանվորների և ծառայողների համար:
Մեջտեղը հաշարանը և ակումբն է: Մենք կայան չենք մտնում:
Վյժժ այնտեղ դատարկ է: Մենք գնում ենք հարևան կոլեկտիվ
տնտեսության դաշտերը, վորտեղ այժմ աշխատում են կայանի
տրակտորները և մեքենաները:

Արդեն հեռվից տեսնում ենք փոշու ամպեր և լսում ենք
մեքենաների աղմուկ: Մոտենում ենք աշխատողներին: Դաշտում
կալսում են:

Աշխատում են յերեք կալսող մեքենա, վորոնք շարժման
մեջ են դրվում տրակտորների միջոցով:

Այստեղ են կոլեկտիվ տնտեսության համարյա բոլոր հա-
սակավոր աղամարդիկ և կանայք: Կալսող մեքենաների շուրջը
մարդիկ խումբ—խումբ՝ աշխատում են: Վոմանք բարձրացել են
դեղի գլուխը և խուրձերը ջանդում են ու դցում մեքենայի մեջ:
Մյուսները պարկերը պահում են մեքենայի տակ, վորտեղից
թեթև շաչյունով թափվում են մաքրված և քամհարված ցորենի
հատիկները: Ուրիշներն անվերջ շարքով պարկերը տեղափո-
խում են կալի մյուս ծայրը: Այստեղ հատիկները տեսակավո-
րում են:

Կալսող մեքենաների հսկայական ցնցիչ մասերով անընդհատ
թափվում է հարդը: Կանայք հարդը հեռացնում են մեքենայից:
Տղամարդիկ ճարպկորեն ընդունում են այդ հարդը և դաբսում
քիչ հեռու կանգնած մամուլի վրա: Մի րոպեից հետո հարդը
մամուլից դուրս է նետվում մեծ, վոսկեղույն հակերի ձևով:

Ժամանակ առ ժամանակ մոտենում են բնական իր ավտոմո-
րիլները, բարձում հացահատիկով լցված պարկերը և տանում
դեպի ելեվատորը:

Աշխատանքը կատարվում է այնպես, ինչպես Փարբիկայում:
Ծանոթանալով կոլեկտիվ տնտեսության կալսելու աշխա-
տանքներին՝ մենք ուղևորվում ենք դեպի ելեվատորը:

Մինչև ելեվատորը 5 կիլոմետր է, և այս ամբողջ տարածությունը վրա իրար հետևից ձգվում են հացահատիկով բարձած ավտոմոբիլներ և սայլեր:

ՊԱՅԳԱՐ ՅԵՐԱՇՏԻ ԴԵՄ

Ֆարական Ռուսաստանի սևահողային տափաստաններում յերաշտից համարյա ամեն տարի տասնյակ հազարավոր հեկտար բերք էր փչանում:

Տափաստանների արևելյան մասում բերքը փչանում էր չոր և տաք քամիներից: Դրանից ցորենի հասիկները թռչնում և չորանում էյին: Կախվում էյին ձմերուկների և սեխերի տերևներն ու սերմնարդրոջները, կարծես յեռացող ջուր էյին ածել նրանց վրա. թռչնում և ծառերից գետին էյին ընկնում պտուղները:

Խորհրդային իշխանությունը վճռական պայքար է մղում գյուղատնտեսություն այլ սարսափելի չարիքի դեմ:

Տարածվում են յերաշտադիմացիկուն կուլտուրաներ, այսինքն բույսեր, վորոնք յերաշտին լավ են դիմանում:

Պայքար է մղվում հողի այնպիսի վարի համար, վորը կը պահպանի խոնավությունը հողի մեջ:

Պայքար է մղվում մոլախոտերի դեմ, վորոնք մեծ քանակությամբ խոնավություն են վերցնում հողից և այսպիսով չորացնում հողը:

Ձանաղան միջոցներ են դործադրվում ձյունը դաշտում կուտակելու համար:

Ավելի չորային տեղերում կիրառում են վոռողում— անց են կացնում ջրանցքներ, վորոնցով ջուր են բերում մոտակա գետերից կամ ուրիշ ջրամբարներից:

Անջրդի յեն ստորին Ձավոթյայի հողերը: Տափաստանային հազվագեղ պետերն ամառը ցամաքում են: Հաճախակի լինում են յերաշտներ և վոշու մրրիկներ:

Ջուրը սակավ է, և արգավանդ հողերը չնչին բերք են տալիս: Անձրեաղուրի տարիները հողի բերքը բոլորովին փչանում է և արտերը մնում են խանձված, ամալի:

Միլիոնավոր հեկտար արգավանդ հողեր կորչում են անողուտ, մինչդեռ նրանք կարող էյին միլիոնավոր ցեղաներ ցորեն տալ: Միայն ջուր է պետք:

«Ձավոթյայի տափաստանները ԽՍՀՄ-ի աշխատավորներին հաց պետք է տան»,— այսպես և վորոշել կոմունիստական կուսակցությունը:

Յեվ ահա տափաստանային գետակների լայնքով կառուցում են ամբարտակներ, պահում են և հավաքում դարնանային, նույնպես և անձրեային ջրերը: Կառուցում են ջրհան կայաններ, վորոնք ջուր են հանում վոլգայից: Ջրանցքներ են փորում: Այդ ջրանցքներով կհոսի ջուրը և կլցվի Ձավոթյայի դաշտերը:

Ստորին Ձավոթյայի հողերն սկսում են առատ բերք տալ:

Շուտով բոլորովին կփոխվի ստորին Ձավոթյայի աշխարհագրական քարտեզը—«գետերն» ու «գետակները» կկորեն Ձավոթյայի դանաղան ուղղությամբ, «լճեր» և «լճակներ» կբերվան:

ՈՂՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սևահողային տափաստանների գոտին միայն արգավանդ հողերով չի հարուստ: Նրա ընդերքում թաղնված են նաև կարելի որդաակար հանածոներ—մանավանդ շատ քարածուխ և յերկաթահանք կա:

Քարածխի հսկայական կուտակներ են գտնվում Դոնեցի բլրաշարում:


Դոնի Դոնեցի բլրաշարը քարեզի վրա:

Այս ամբողջ տարածությունը, վորտեղ քարածուխ է գտնվում, կոչվում է Դոնեցի բարածխային ավազան կամ Դոնբաս:

Դոնբասից դեպի արևմուտք, Դոնեցիի մյուս կողմը, Կրիվոյ-Ռոգ քաղաքի մոտ, ինչպես և Ղրիմի թերակղզու վրա, Կերչ քաղաքի մոտ, գտնվում են յերկաքահանքի մեծ պաշարներ:

Ղրիմի թերակղզում ստացվում է նաև աղ։
Գարտեղի վրա դռեք յերկաթահանքի արդյունահանման այստեղ նշված
քեղերը։ Գտեք Կրիվոյ-Ռոգը և Կերչը։

Դոնբասը, Կրիվոյ-Ռոգը և Կերչը խոշոր արդյունաբերական
շրջաններ են։



Մակեյվկայի գործարանը

Այստեղ ամեն տեղ ձգվել են ածխահորեր, յերկաթի հան-
քահորեր և մետաղագործական գործարաններ։

ԴՈՆԲԱՍՆ ԱՌԱՋ ՅԵՎ ՀԻՄՍ.

Դոնբասը միշտ այնպես չի յեղել, ինչպես այժմ է։


Հին ժամանակ այստեղ տարածվում էյին անմարդաբնակ,
ամառն արևից խանձվող տափաստաններ։

Միայն վոչխարի հոտեր էյին արածում այստեղ, իսկ տեղ-
տեղ ել պատահում էյին հաղահատիկի արտեր։

Յեվ յերկրի ընդերքում անողուտ ընկած էյին քարածխի
հսկայական պաշարներ։

Բայց ահա անցյալ դարի կեսին սկսեցին յերկաթուղիներ
չինել, արդյունաբերությունն սկսեց արագորեն զարգանալ։ Վա-
ռելիք և յերկաթ եր պետք։ Կապիտալիստները շուտով իմացան
Դոնբասի քարածխի և հանքային հարստությունների մասին։

Սկսեցին Դոնբասում հողեր դնել, ածխահորեր ու մետալուրգիա-
կան գործարաններ շինել։ Տասնյակ հազարներով աղքատացած
գյուղացիներ յեկան այստեղ և դարձան հանքափորեր և մե-
տալուրգիական գործարանների բանվորներ։ Աճեցին գործարա-
նային շենքեր։ Ձանազան տեղերում վառվեցին հնոցներ։ Ամեն
ուղղությամբ ձգվեցին յերկաթուղիներ։ Նրանց վրայով սկսեցին
շարժվել հանքով և ածխով բարձած դնացքներ։ Խղճուկ խրճիթ-
ների և դետնափոր տների ամբողջ քաղաքներ շրջապատեցին
հանքահորերն ու գործարանները։ Նրանց մեջ ապրում էյին
բանվորները։



Աշխատանք ածխահանքում ցարիզմի ժամանակ։ Մուժ, ցածրիկ հանքա-
հորում, հաճախ մեղքի վրա պառկած, կտորում եր բանվորը քարածուխը։
Սահակների վրա բարձած քարածուխը հեղ ու ցածրիկ միջանցքներով քաշում
եր նա դեպի վազոնետիաները։ Նիհարիկ միերը քարածուխով բարձած վազո-
նետիաները փոխադրում էյին դեպի վերամբարձ վանդակը։

Որական 18 ժամ նրանք աշխատում էյին խոնավ հորե-
րում։ Ամբողջ աշխատանքը կատարում էյին ձեռքով։ Գլունդն ու
թին բանվորների միակ գործիքներն էյին։ Իրենց ծանր աշխա-
տանքի համար հանքափորներն ստանում էյին կոպեկներ, իսկ
կապիտալիստ տերերը նրանց աշխատանքով հարստանում էյին։


Այժմ հին Դոնբասն անճանաչելի յե դարձել։ Նրա նախկին
կապիտալիստ տերերից հետք անգամ չի մնացել։ Դոնբասի
բնական հարստությունները, հանքահորերն ու գործարանները
դարձել են Խորհրդային Միության սեփականությունը։

Կառուցվել են տասնյակներով նոր ածխահորեր և մետա-
լուրգիական գործարաններ։

Բոլորովին նոր ձևով և կազմակերպված նաև աշխատանքը հանքահորերում: Հանքահորերն են իջեցրել մեծ քանակությամբ հատող մեքենաներ:

Սժխի հանույթը մեքենաներով և կատարվում: Հանքափոր-ներն աշխատում են վոչ թե անհատ-անհատ, այլ բրիգադներով:

Հանքափոր Ալեքսեյ Ստախանովը կարողացավ այնպես դնել իր բրիգադի աշխատանքը, Վոր մի հերթափոխության ժամանակ կտրեց 102 տոնն ածուխ՝ նորմայով ընդունված 7 տոննի վո-խարեն: Հետագայում հանքափոր-ստախանովականների սոցիա-լիստական մրցությունն այդ ռեկորդն ավելացրեց մի քանի ան-գամ:



Աշխատանքն ածխահանքում այժմ: Ելեկտրականությամբ լուսավորված մեծ շտրնայում աշխատում և բրիգադը: Ածխահատ մեքենայով հատում են ածխի շերտը: Մեխանիկական բուրդիով ծակում են: Դնում են պայթու-ցիկ նյութեր: Պայթեցնում են շերտը: Թիկերով քարածուխը թափում են թեք խողովակի մեջ: Քարածուխը սահում և, լցվում վազոնետիկաները: Ե-լեկտրաքարը փոխադրում և վազոնետիկաները վերաբարձի վանդակի մոտ:

Փոխվել և Դոնբասի բանվորների կյանքը: Նրանց համար լուսավոր, առողջ տներ են կառուցվել: Այսին տեղ ճաշարան-

ներ, ֆարրիկ-խոհանոցներ, մանկապարտեզներ, մսուրներ են: Տները չրջապատված են ծառերով և այգիներով: Այն են կաց-վում ջրմուղներ, կոյուղի, բաղնիքներ են շինվում:

ԴԵՊԻ ԵՆԿԿՏՐԱԿԱՆ ԿԱՅԱՆԸ (ԴՆԵՊՐՈԳԵՍ)

Քարանդի վրա ցույց տվե՛ք Դնեպրոգեսը:

Հսկայական քանակությամբ եներդիա յե պետք Դոնբասի և Կրիվորոժեյի հանքահորերում և գործարաններում հազարա-վոր մեքենաներ շարժելու համար: Այլևի ևս չատ եներդիա պետք կլինի այն ժամանակ, յերբ գործի կղրվեն նոր գործա-րանները և հանքահորերը, վորոնք այժմ կառուցվում են կամ վորոշված և կառուցել:

Այդ քան եներդիա վո՞րտեղից պետք և վերցնել:

Մոտակայքում հենց բնության մեջ բուրդովին ձրի եներ-դիայի ահադին սլաշարներ յերևան հանվեցին: Դնեպրի հոսող ջրի եներդիան և այդ:

Այստեղ գոռում-գոչումով, սահանքից-սահանք անցնելով, քարերի միջով անհիշելի ժամանակներից հոսում և Դնեպրը: Մեծ աշխատանք կարող եյին կատարել նրա ջրերը, յեթե ստի-պենք, վոր այդ ջրերը մեծ բարձրությունից մի տեղ թափվեն:

Կառավարության հանձնարարությամբ ինժեներները մի քա-նի տարի գրադված եյին այն հարցով, թե ինչպես կարելի յե ոգտադործել Դնեպրի ջրերը, և վերջը յեկան այն յեղրակացու-թյան, վոր պետք և Դնեպրի վրա կառուցել բարձր պատվար և հիզրո-եկեկորուկայան:

Հինգ տարի հազարավոր բանվորներ և ինժեներներ համառ-կով եյին մղում Դնեպրի դեմ:

Մեծ դժվարություններ հաղթահարվեցին պատվարը շինե-լիս:


Ստիպված եյին մաս-մաս գետի առաջն առնել վոյտե պատ-նեններով, նրանց միջից ջուրը դուրս քաշել և աշխատել այս-պիսի պատենների մեջ, շարունակ յերկյուղ կրելով, վոր ջրի

Հիմնականում հեղեղները ներս կխուժեն և կլողնչացնեն թե ամբողջ աշխատանքը և թե աշխատողներին:

Դնեպրի առաջն առան մեծ պատվարով և այդ պատվարի մոտ կառուցեցին հիդրո-էլեկտրական կայան:

Դնեպրը դեմ առավ պատվարին և անցավ յերկաթե լայն խողովակների մեջ, վորանդ դրված էյին էլեկտրական կայանի տուրբինները:

Ձուրն ահռելի ուժով ներս խուժեց յերկաթե խողովակների մեջ, զարկեց տուրբինի թևերին և սլտտեց նրանց: Ելեկտրական մեքենաներն սկսեցին աշխատել և էլեկտրական հոսանքը էլեկտրական չափերի միջոցով գնաց դեպի ամեն կողմ:



Դնեպրոգես

Դնեպրոգեսի էլեկտրական հոսանքը 18 միլիոն հատակավոր մարդու աշխատանք կկատարի: Դնեպրոգեսը չի սահմանափակվի միայն նրանով, վոր շարժման մեջ կդնի Դոնրասի և Կրիվո-րոտյեյի հանքահորերի և գործարանների մեքենաները: Դնեպրի մոտ աճեցին նոր գործարաններ՝ թուջածուլական, պողպատաձուլական, ալյումինի, մեքենաշինական, քիմիական: Նրանք նույնպես Դնեպրոգեսի միջոցով են աշխատում:

Ձրի տակ ծածկվեցին Դնեպրի ահավոր սահանքները: Դնեպրըն իր ամբողջ յերկայնքով նավարկելի դարձավ:

Դնեպրից կփորեն ջրանցքներ դեպի Դնեպրի ափերի անջուր և արևակեղ տափաստանները: Այդ ջրանցքներով ջուրը բաց

կթողնեն, և մեռած տափաստանները կկենդանան ու ահագին բերք կտան:

Աշխատում է Դնեպրոգեսը—լրիվ հոսանքն անցնում է խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները, և կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների դաշտերում աշխատում են էլեկտրական գուլթաններ:

Վարժաբյուներ.— Ուրվադային քարտեզի վրա սեահողային տափաստանների գոտին չբնակեցնե՞ք:

Ուրվագծային քարտեզի վրա դրեցե՞ք այն գետերի անունները, վորոնք կտրում են սեահողային տափաստանները:

Քարտեզի վրա նշեցե՞ք Դոնրասը, Կրիվոյ-Ռոդ և Կերչ քաղաքները:

Քարտեզի վրա նշեցե՞ք Դնեպրոգեսը:

6. ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԳՈՏԻ

Կառույց ծովից դեպի հյուսիս Վոլգայի ստորին հոսանքի յերկու կողմերով և ապա դեպի արևելք մինչև Ջինաստանի սահմանը, տարածվում է չոր տափաստանների գոտին:

Քարտեզի վրա գտե՞ք չոր տափաստանները:

ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

(Համապարհորդի նամակից)

Յերկու ամիս մնացի չոր տափաստաններում: Իմ շուրջը, վորքան աչքս կտրում եր, ձգվում եր անսահման, միապաղաղ հարթություն: Տափաստանը յերկար չմնաց իր դարնանային գույնզույն գարդարանքի մեջ: Շուտ թառամեցին նրա վառ ծաղիկները, և առաջին չոր ամառային օրերը չորացրին կանաչ խոտերը: Միայն բարձվեցին ու մոլախոտերը կարողացան գիմանալ արևի կիզող ճառագայթներին: Տափաստանն ստացել եր դեղին-գորշ գույն և ծածկվել եր փոշով: Ուժեղ քամիներից փոշու ամբողջ սյուներ բարձրանում էյին դեպի վեր և շարժվում այս ու այն կողմ:

Կենդանիները թաղնվել էյին շողից: Միայն մողեսներն էյին նշմարվում բարավենյակի ցողունների մեջ:

Յերբեմն ամպերը կուտակվում էյին, կայծակը փայլատա-
կում եր, ամպը գոռում, նույնիսկ սկսում էյին թափվել անձ-
րեւի առաջին խոշոր կաթիլները: Բայց քամու հորձանքը ցրում
եր ամպերը, և տափաստանն առաջվա պես մնում եր չոր, փո-
շտ:


Այստեղ-այնտեղ տափաստանում յերևում էյին աղուտների
սպիտակ բծեր: Աղը բարակ կեղևով ծածկում եր գետինը, և
թվում եր, թե ձյուն ե յեկել:

Տեղ-տեղ արևի տակ փայլվում էյին աղի լճերը:

Հեռվում յերևում էյին դաղախների յուրտերը, իսկ նրանց
չուրջը՝ ձիերի յերամակներ և վոչխարների հոտեր: Մեկ-մեկ ել
յերևում էյին հետախուզողների սպիտակ վրաններ և հորատման
վիշկաներ:

ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Նայեցե՛ք քարտեզին.
չոր տափաստանի մակերևույթն ամեն տեղ միատեսակ չե: Չոր



Չոր տափաստանում

տափաստանների արևմտյան կեսը ցածրադիր հարթություն ե,
վորը ցածրանում ե դեպի Կասպից ծովը: Արևելյան կեսը
բարձրադիր հարթություն ե, վորի վրա բարձրանում են
այնքան ել վոչ բարձր լեռներ:

Չոր տափաստանների հարթությունները մի ժամանակ ծո-
վի հատակ էյին: Այդ մասին վկայում են բաղմամբիվ աղի լճե-
րը, աղուտները և գետնի մեջ պատահող խեցիները:

ԿԼԻՄԱՆ.— Չոր տափաստաններում ամառն ավելի տաք ե և
չոր, քան թե սևահողային տափաստաններում: Ատլանտյան
ովկիանոսի տաք և խոնավ քամիները համարյա չեն կարողա-
նում հասնել այստեղ, և այդ պատճառով ամառները համարյա
թե անձրև չի դալիս: Հաճախ փչում են չոր և տաք քամիներ:
Շոգից գետինը չորանում ե և ճաքճքում:

Չմեռն այստեղ, ինչպես և սևահողային տափաստաններում
կարճատև ե, բայց ավելի խիտ ե: Չմեռը հաճախ ձյան մրրիկ,
բուր ե լինում: Չմեռվա վերջը յերբեմն սառուկ ե լինում ամ-
բողջ տափաստանը՝ ծածկվում ե սառցի բարակ շերտով:

ԳԵՏԵՐԸ.— Չոր տափաստաններում գետեր քիչ կան: Նրան-
ցից ամենախոշորներն են՝ Վոլգայի ստորին հոսանքը, Ուրալը
և Եմբան:

Ամառը գետերը սաստիկ բարակում են: Ամառվա վերջը,
նույնիսկ այնպիսի մեծ գետում, ինչպես Ուրալն ե, նավարկու-
թյունը բավական դժվարանում ե: Իսկ մանր գետերը բոլորովին
ցամաքում են: Չոր տափաստանների գետերի մեծ մասը ծով չի
հասնում, կորչում ե ավազուտների մեջ կամ թափվում ե փոք-
րիկ լճերը:

Քարտեզի վրա դեռ՛ք հիշած գետերը:

ԲՈՒՍՍԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.— Չոր տափաստանների բուսակա-
նությունը, ինչպես և սևահողային տափաստաններինը, դար-
նասը, ամռանը և աշնանը փոխվում ե:

Բայց այստեղ գլխավորապես այնպիսի բույսեր են աճում,
վորոնք յերաչափն դիմանում են:

Վաղ դարնանը, հենց վոր ձյունը հալվում ե և հողը խո-
նավություն ե ծծում, արագորեն աճում են սոխարմատ բույ-
սերը՝ կարմիր ու դեղին կակաչները, ճնճաղիկները: Կարճ ժա-

Քանակով չոր տափաստանները ծածկվում են նաև կանաչ խոտերով:

Բայց չուտով անցնում է դարունը և դալիս է չոր ու տաք ամառը: Կակաջները թառամում են, խոտերը չորանում: Նրանց

փոխարինում են չորասեր բույսեր՝ ալևոր հոտավետ բադվեն-
լակները: Նրանք ծածկված են
մազմզուկներով և այդ պատ-
ճառով խոնավություն քիչ են գո-
լորշիացնում: Բազմամում են
նաև ուղիքի փուռ—փշոտ խոտը և
զանազան մալխոսեր, վորոնք
նույնպես դիմանում են յերաշ-
տին:



Աղաբույս

Բադվենյակ


Չոր տափաստանների բույսերն ունեն յերկար արմատներ, վորոնք խորանում են գետնի մեջ և այնտեղից ծծում խոնավու-
թյուն:

Նրանք գտնվում են իրարից հեռու: Նրանց արանքում յե-
րեվում է խանձված, չողից ճաքճքված գետիկներ: Այնտեղ, վոր-
տեղ հողի մեջ շատ աղ կա, պատահում են առանձին բույսեր—
աղաբույսեր:

ՀՈՂԸ.— Յերկարատե, չոգ, չոր ամառվա և նոսր բուսա-
կանության պատճառով հողի մեջ չի կարող այնքան շատ բու-
սահող գոյանալ, ինչպես սևահողային տափաստաններում: Չոր
տափաստաններում հողը մեծ մասամբ գորշ է լինում և փոքր
քանակությամբ բուսահող է պարունակում: Պատահում են նաև

աղուտային հողեր: Սրանք տողարված են մեծ քանակությամբ
աղերով:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ.— Չոր տափաստաններում խոչոր
կենդանիներ քիչ կան: Պատահում են արաղավաղ սայգակներ:
Ջուր և սնունդ վորոնեքիս նրանք մեծ տարածություններ են
անցնում: Միայն ա-
րաղ վազքն է նրանց
փրկում գայլերից:
Չոր տափաստաննե-
րում, ինչպես և սևա-
հող տափաստաննե-
րում շատ կան կրծող-
ներ — գեցնապառու և
այլն: Այստեղ շատ
կա մողեսներ և ոճեր,
խակ միջատներից՝ ծրդ-
րիկներ և մարեխներ:



Սայգակ

Չոր տափաստանների կենդանիների մեծ մասը խանձված
տափաստանի գույն ունի, և այդ պատճառով նրանք տափաս-
տանի վրա հազիվ են նկատվում:

Առաջադրություններ.— Չոր տափաստանների կլիման համեմատեցե՛ք սևա-
հողային տափաստանների կլիմայի հետ:

Պատմեցե՛ք՝ ինչպես և փոխվում չոր տափաստանների բուսականու-
թյունը զարնանից մինչև աշուն:

Չոր տափաստանների հողերը համեմատեցե՛ք սևահողային տափաստան-
ների հողերի հետ: Ինչո՞ւ չոր տափաստաններում քիչ բուսահող կա:

Պատմեցե՛ք՝ ի՞նչ առանձնահատկություններ ունեն չոր տափաստանների
բույսերն ու կենդանիները:

ԶՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

Լայնարձակ չոր տափաստաններում հին ժամանակներից փսած ապրում են դադախներ և կալմիկներ:

Ե՛լ 164-ի քարտեզի վրա դեմ'ք, Թե նրանք վտակել են ապրում:

Նրանք զբաղվում են այստեղ դլխավորապես անասնապահությամբ— պահում են վոչխարների, ձիերի և ուղտերի մեծ հոտեր: Զոր տափաստանների բուսականութունն աղքատ է, բայց կարող է կերակրել այնպիսի սակավակեր կենդանիների մեծ հոտեր, ինչպիսին վոչխարը և ուղտն են:

Մինչև վերջերս զաղախները և կալմիկները քոչում էին մի արոտատեղից մի ուրիշը: Ընտրում էին մի վտակ հարմար տեղ անասուններն արածացնելու համար, կանգնեցնում էին թաղիքի յուրեքը, և ապրում էին, մինչև վոր անասունները կուտային կվերջացնային խոտը:

Զմեռային բնակարանները նրանք չինում էին կավից, վորի հետ գոմաղը էին խառնում: Այժմ զաղախների և կալմիկների մեծ մասը նստակյաց կյանքի յե անցել:


ԿԱԼՄԻԿԱԿԱՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութունը կալմիկական տափաստաններն անապատային էին: Հազվադեպ միայն պատահում էին քոչվորներ, վորոնք իրենց հոտերով տեղափոխվում էին նոր արոտավայրեր:

Հիմա տափաստանների մեջ աճել է Նլխատա քաղաքը—կալմիկիայի մայրաքաղաքը: Ճածրավայրում սպիտակին են տալիս բետոնի պատշգամբներով և լայն լուսամուկներով մեծ շենքերը, կանաչին են տալիս այգիները, չողչողում է արևի տակ ջուրը:

Նլխատա տանող ճանապարհով սլանում են ավտոմոբիլները: Նրանք դնում են խոտերի հսկայական դեղերի մոտով, վորոնք մթերված են անասունների համար՝ ձմեռային կերակրելու թյան գեպը: Ահա Նլխատայից մի քանի կիլոմետր հեռու կոլտնտեսության ավանն է: Կավե տնակներ, գոմեր, այգիներ: Կողքին

ձգվել է կոլտնտեսային դաշտը: Մի քանի տարի առաջ այդ հողի վրա առաջին անգամ մուտք դործեց տրակտորը: Հերկեց խոպանը: Վայրի տափաստանը վերածվեց վարելահողի: Հեռվում բառաչում են կովերը, մայրում են վոչխարները: Այդ հովիվներն են հոտը քչում դեպի ավանը:



Նլխատա քաղաքի ընդհանուր տեսքը

Ավանի մոտ՝ կուրդանի վրա տեղավորվել է չրջիկ թատրոնը: Ծնչառությունը պահած՝ կալմիկները նայում են անցյալում չտեսնված տեսարանին: Մոտացվել են տափաստաններում ցրված վանքերը, վորտեղ վանականները խորհրդավոր և անհասկանալի ծիսակատարություններով քոչվորների աչքերը թող էին վիշում, խաբում նրանց:

ԻՆԶՊԵՍ ԵՐ ԱՊՐՈՒՄ ԶՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆԶԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Զոր տափաստանների հսկայական տարածությունները կարող են կերակրել հարյուրավոր միլիոն անասուններ:

Բայց յեղանակն այստեղ հաճախ անբարենպաստ է: Յերաշտից խոտը խանձվում է: Սակավաձյուն ձմեռներին սառուկ է լինում: Գետինը ծածկվում է սառցի այնպիսի հաստ շերտով, վորը չեն կարող կոտրատել նույնիսկ ձիու սմբակները: Այն ժամանակ սկսվում էր «ջուտը»— սննդի սրահասությունից անասունների մասսայորեն կոտորվելը: Բացի այդ անասունները

Հաճախ հիվանդանուժ եյին խնայատուժ, սիրելիատուժ և ուրիշ հիվանդություններուժ:

Խաւար, հետամնաց քոչվորներն ամբողջապէս կախում ունեյին բնությունից:

Նրանք վոչ մի միջոց չեյին դործադրում մասսայական առանամահի առաջն առնելու համար:

Անասունները հիվանդանալու ժամանակ նրանք դիմում եյին կախարդին, մորի բժշկությունն ավելի ևս տարածում եր հիվանդությունը և անասնամահը:

Չոր տափաստանում դժվար ե ջուր ճարել: Պետք ե խոր ջրհորներ փորել: Տափաստանի ամենալավ ջրհորները պատկանում եյին բայերին (հարուստներին):

Բայերն ողտւում եյին չքավորների տղիտությունից: Կերի ամեն մի նոր պակասությունը, անասնամահը նրանց նոր հարբատություններ եյին բերում — ավելի շատ չքավորներ եյին նրանց բառարակը դառնում:

Յարական կառավարությունը հոգ չեր տանում տափաստանի քոչվորների տնտեսության մասին:

Ընդհակառակը, նա քայքայում եր չոր տափաստանների բնակչությանը: Նա խլում եր տափաստանային քոչվորներից արոտատեղերն ու վարելահողերը և տալիս եր ռուս վերաբնակիչներին:

ԻՆՉ Ե ԱՐԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ՔՈՉՎՈՐՆԵՐԻ ԿՑԱՆՔԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՅԵՎ ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խորհրդային իշխանությունը վերակառուցել ե քոչվորների տնտեսությունն ու կյանքը: Նա ամենից առաջ սկսեց անասունների քանակն ավելացնելու պայքարից, վորովհետեւ դրանից եր կախված քոչվորների ամբողջ բարեկեցությունը:

Բայց չի կարելի բարձրացնել տնտեսությունը, յերբ մշտապէս մի տեղից մյուսն են քոչում: Այդ պատճառով ել Խոր-

հրդային իշխանությունն ամեն կերպ դյուրացնում ե քոչվորների նստադրաց դառնալու դործը:

Կաղնակերպված են ընկերություններ՝ խտր միասին հարելու, ցանկու համար, կառուցվել են համայնական դոմեր, փորված են հանրային ջրհորներ, լճակներ: Բացվել են անասնարուժական կետեր: Յեւ ահա նախկին քոչվորների մեծ մասն այժմ սկսել ե սուրբել նստակցաց կյանքով:

Վաղախների և կալմիկների կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար կառուցվել են բաղմաթիվ դպրոցներ, գրադարաններ, կինոթատրոններ և հիվանդանոցներ:

Չոր տափաստանները հողադործության համար քիչ են նպաստաւոր, բայց վոտոգման և յերաշտադիմացկուն բույսերի ընտրության դեպքում նրանք հացահատիկի և կերախոտերի լավ բերք կարող են տալ: Յեւ ահա չոր տափաստաններում ստեղծվում և ամրապնդվում ե հողադործությունը:

Անասնապահական տնտեսությունը կանոնաւոր վարելու դեպքում տափաստանային տարածությունները հսկայական քանակությամբ միս կարող են տալ:

Յեւ ահա չոր տափաստաններում ծաղալում ե վոչխարաբուծական խորհտնտեսությունների շինարարությունը: Զարգանում ե նաեւ ձիաբուծությունը: Այժմ արդեն բաղմաթիվ անասնարուժական խորհտնտեսություններ և կոլտնտեսություններ կան այնտեղ:

ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ


Հանածոների ահադին հարստություն մինչև վերջին ժամանակներս անողուտ ընկած եր չոր տափաստանների ընդերքում:

Անապատային տափաստանները կենդանություն առան այնտեղ, վորտեղ սոցիալիստական տնտեսության կառուցողների համառ աշխատանքի շնորհիվ բացվեց տափաստանների ընդերքը:

Կարագանդայի Խանգալի շրջանի հեղեղով յերկրի մակերևույթի վրա թափվում ե սև, պսպղուն ածուխը: Կապից ծովի յեղերին նավթահորերից գիշեր-ցերեկ խողովակների միջով հոսում ե եմբայի և Բաղվի նավթը: Բայխաշ լճի մոտ կա-

ռուցված և աշխարհում ամենախոշոր պղնձաձուլական գործարանը:

Գարսեզի վրա գտեք Կարադանդան, Եմբայի և Բազլի նավթահանքերը և Բալխաշ լճի ափին՝ պղնձահանքերի տեղը:



Չոր տափաստանում գործարան և կառուցվում

Բայց այդ միայն սկիզբն է: Պղնձի, ցինկի, կապարի հանքերի և ուրիշ արժեքավոր հանածոների ահադին պաշարներ են հայտարարված չոր տափաստանների ընդերքում:

Այսպես աստիճանաբար փոխվում են չոր տափաստանները, դրա հետ փոխվում և է բնակչության կյանքը:

Բոչվոր զապախները դառնում են կառուցողներ, հանքավորների, նավթահանքային բանվորներ, հեռանում են քոչվորությունից և սկսում են ապրել արդյունաբերական բանվորների կույտորական կյանքով:

ՆԱՎԹ ԾՈՎԻ ՀԱՏԱԿԻՑ.— Կասպից ծովի ձկնորսները վաղուց նկատել են, որ Բազու քաղաքից վոչ հեռու ջուրը չողում է ծիածանի բոլոր գույներով:

Սկսեցին հետազոտել ծովի ափերն ու հատակը:

Պարզվեց, վոր բավական խոր, ծովի հատակի տակ գտնվում են նավթով հարուստ հողաշերտեր:

Որոհրդային իշխանությունը վորոշեց ծովից խել այդ նավթը:


Ծովի մեջ կանգնեցրին մի հաստ քարե պատ— դամբա: Այդ պատով անջատեցին ծովի մի մասը և հողով լցրին դա:

Ֆամաքեցրած ծովի հատակի վրա կառուցեցին հարյուրավոր նավթային վիշկաներ և սկսեցին նավթ հանել:

Շուտով այստեղ նավթի ուժեղ շատրվան խիկեց: Շատրվանը փակեցին և խողովակներով նավթն սկսեց հոսել ուղղակի դեպի նավթի բաքերը:

Բանվորները և ինժեներները մեծ քանակությամբ նավթ խիկեցին բնությունից սոցիալիստական տնտեսության համար:

Այժմ նավթի վիշկաների անտառ է կանգնած այնտեղ, վորտեղ մի քանի տարի առաջ ծովի հատակ էր:



ԶԿՆՈՐՍԱՐԱՆՆԵՐ

Չոր տափաստանների զոնայի արեմոյան մասը դռնվում և Կասպից ծովի ափերին, Վոլգա գետի ստորին հոսանքի յերկայնքով և Ուրալ գետի ափագանում:

Այստեղ ձկան մեծ հարստություններ կան: Այստեղ վոր-

տում են մեծ քանակությամբ թանգարտեր ձուլի: Դա սպառվում է վոչ միայն ամբողջ Միջերկրյունում, այլև արտահանվում է արտասահման:

Քարտեզի վրա ցույց տվե՛ք դոտու այդ մասը:

Վոլգայի գետաբերանում գտնվում է Աստրախան քաղաքը:

Դա ձկնորսության ամենակարևոր կենտրոնն է: Ծովափի մոտ կանխած են հարյուրավոր ձկնորսական առաքատավոր նավեր: Ձկնորսական սեզոնում գլխեր-ցերեկ նավերից ձուլի են դատարկում:

Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխություն Աստրախանում ձկնորսների աշխատանքով հարստանում էյին խոշոր վաճառականները:

Նոր Աստրախանում տասնյակ հաղարներով ձկնորս կոլտընտեսականներ կան: Նրանցից շատերը նախկին քոչվոր կալմիկներ են:

Այժմ այստեղ կառուցված են սրահածոների մեծ դործարաններ, սառնարաններ, դործարաններ, վորտեղ շինվում են ձկնորսական նավեր:

Քարտեզի վրա գտե՛ք Աստրախան քաղաքը:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԶՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը միայն մեկ յերկաթուղի յեր կապում էր տափաստանները:

Նա Զկալով քաղաքից դնում էր դեպի հարավ-արևելք՝ Տալքենտ քաղաքի ուղղությամբ:

Քարտեզի վրա ցույց տվե՛ք այդ յերկաթուղին:

Զոր տափաստանների ընդարձակ տարածության մեծ մասը բոլորովին կտրված էր ԽՍՀՄ-ի կուլտուրական կենտրոններից:


Ուղտը տեղափոխության միակ միջոցն էր այդ տափաստաններում: Վերջին տարիները Խորհրդային իշխանությունը կառուցեց մի յերկար յերկաթուղի, վոր կտրում է չոր տափաստանների արևելյան մասը— դա Թուրքեստան-Սիբիրյան (Թուրքսիբ) ճանապարհն է: Այս ճանապարհի շնորհիվ արագորեն դարգանում է յերկրի անտեսությունը:

Վարժուքյուններ.— Ուրվագծային քարտեզի վրա չոր տափաստանների դոտին շրջագծեցե՛ք: Նշեցե՛ք գլխավոր ուղտակար հանածոների հանութավայրերը: Նշեցե՛ք այն տեղերը, վորտեղ ապրում են զաղախները և կալմիկները:

Նշեցե՛ք Կարադանդա, Աստրախան քաղաքները:

Ի ուրջնաան—Սիբիրյան յերկաթուղին գծեցե՛ք և վրան գրեցե՛ք անունը:

Որս.աղալում աշխատանք.— Կաղմեցե՛ք ալրոմ՝ ՀՅՈր. տափաստանները դոտի՝ Թեմայով:



Թուրքեստան-Սիբիրյան յերկաթուղու քարտեզը

7. ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԳՈՏԻ

Կապից ծովից արևելք, չոր տափաստանների գոտուց հարավ գտնվում է անապատների գոտին:


Հարավից և հարավ-արևելքից անապատների գոտին շրջապատված է լեռներով:

Քարտեզի վրա գտե՛ք անապատների գոտին:

ԱՆԱՊԱՏՈՎ

(Համապարհորդի պատմվածք)

Սորուն ավազի դեղնավուն բլուրներ եյին յերևում ամեն կողմ: Յերբեմն թվում էր, թե չուրջէ տարածվում է անծայրածիր ծով՝ քարացած ալիքներով:



Անապատում

Տեղ-տեղ ավազաթմբերը ծածկված էյին ինչ-վոր մանր ծառերով և թփերով, վորոնց վրա տերև չէկար: Նոսր աճում էյին կոշտ և փշոտ խոտեր:

Արևը ծաղեւուն պես շողն սկսվում էր: Կեսորին ավաղն այնքան էր տաքանում, վոր բոբիկ վոռքերով անհնարին էր քայլել: Նույնիսկ տափաստանի շողին սովոր ձիերը հրաժարվում էյին կերից և թմրել, կանդենլ էյին՝ խեղդիչ, այրող շոգից ուժասպառ լինելով: Ըստ յերևույթին միայն ուղտերն էյին, վոր շոգից չէյին տառապում:

Առավոտյան ժամը 10-ին մոտ բարձրանում էր չոր, այրող քամի: Նա քշում էր չիկացած ավազի ամբողջ ամպեր:

Ավազե վարադուրով ծածկվում էր արևի յերեսը: Հեռվում զննելիք չէր յերևում:

Շիկացած ավաղն անխնա ծեծում էր մեր յերեսներն ու ձեռքերը, լցվում էր աչքերը, ալանջները և կաշվի մեջ քոր էր առաջացնում: Չէր կարելի բերան բանալ, վոր առամներիս տակ ավաղը չկրճտար:

Յերևույթան դեմ արևը, վորպես ծանր չիկացած գունդ, թաղնվում էր հորիզոնի տակ և կարմիր լույսով հեղեղում անապատը:

Քարավանը վեց ուր էր, ինչ ճանապարհ էր դիմում: Ծանր ճանապարհից և սննդի պակասությունից նույնիսկ ուղտերը հոգնեցին: Նրանք դնում էյին ընկճված, հազիվ փոխելով վոռքերը:

Ճանապարհին հանդիպեցինք ջրհորի: Բայց նրա մեջ այնքան քիչ ջուր կար, վոր նույնիսկ քարավանի խմելուն չբավականացավ:

Լուրջ վտանգ էր սպառնում:

Քարավանին ուղեկցող թուրքմեններից մեկը ցանկություն հայտնեց գնալ առաջ և գննել ճանապարհը:

Յերևույթան վերադարձավ նա և հեռը բերեց թարմ յեղեղի մի ճյուղ:

Բոլորն զգացին, վոր չուտով իրենց տանջանքները կլերջանան:

Հետևյալ ուր քարավանը հասավ Ամու-Դարյա գետը:

Այդ մի լայն ջրառատ գետ էր: Նրա ափերը ծածկված էյին ճոխ, կանաչ բուսականությամբ:

ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Հետևեցե՛ք քարտեզին: Անապատների գոտին դտնվում է Թուրանի ընդարձակ դաշտավայրում: Մի ժամանակ Թուրանի դաշտավայրը ծովի հատակ էր: Դեպի հարավ և հարավ-արևելք նա բարձրանում է, և հարավ-արևելյան ծայրամասում վերջանում բարձր լեռներով: Այստեղ դտնվում է Պամիր լեռնաշխարհը: Պամիրից դեպի հյուսիս-արևելք ձգվում էյին Տյան-Շանի լեռները:

ԿԼԻՄԱՆ.— ԽՍՀՄ-ի հեռավոր խորքերն է մտել անապատ-ները գոտին: Խոնավ քամիներն այստեղ չեն հասնում:

Անապատների դոտում ավելի չոր և և չոր, քան թե տա-
փաստաններում: Պատահում են և այնպիսի տեղեր, վերտեղ ա-
մառվա ընթացքում մի կաթիլ անձրև չի գալիս: Յերբեմն անձրև
գալիս է, բայց չիկացած ավազներին չդիպած՝ գոլորշիանում
է: Յերեկն սառնելի մեջ չողը հասնում է մինչև 50°:

Ավազը, քարերը, մետաղե առարկաներն այնքան են տաքա-
նում, վոր այրում են մարդու ձեռքերը: Յերկիւնքն այստեղ մեծ
մասամբ անամպ է լինում: Այդ պատճառով ել ամառային ցերեկ-
ները սաստիկ տաքացած առարկաները դիչերներն արագ սառչում
են: Անապատում ցերեկը լինում է չոր, խիստ դիչերը՝ զով:

Ամառը տևում է հինգ-վեց ամիս: Ձմեռն ընդհակառակը,
կարճ է և ցուրտ: Լինում են 20°-ի և նույնիսկ ավելի խիստ
սառնամանիքներ:

ԳԵՏԵՐԸ. — Շրջապատող լեռներից քիչ դեռեր չեն հասնում
դեպի թուրանի դաշտավայրը: Բայց նրանց մեծ մասը կորչում
է ավազների մեջ կամ ցամաքում է, ինչպես չոր տափաստաննե-
րում: Միայն յերկու մեծ դեռ են կտրում կարա-կում և կզլ-կում
անապատները և հասնում մինչև Արալյան ծովը: Դրանք են Ամու-
Դարյա և Սիր-Դարյա դեռերը: Յերկուսն ել սկսվում են բարձր
լեռների սառույցների տակից: Ամու-Դարյան սկիզբ է առնում
Պամիրի լեռներում, իսկ Սիր-Դարյան՝ Տյան-Շանի լեռներում:


Քարտեզի վրա դեռ'ք հիշած դեռերն ու անապատները:

Ամենաչոր ժամանակ, յերբ անապատների դոտու դեռերը
բարակում կամ ցամաքում են, Ամու-Դարյան և Սիր-Դարյան
դառնում են ջրառատ: Պատճառն այն է, վոր այդ ժամանակ
բարձր լեռների սառույցը հալվում է:

Անապատներում պատահում են նաև լճեր, բայց հաճախ ա-
ռանց ջրի: Նրանց միջի ջուրը գոլորշիացել է և փոսերի մեջ
մնացել է աղի չլացնող սպիտակ շերտը: Հեռվից այդ շերտը
ձյունի յե նմանում:

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. — Ավազոտ անապատներում ևս
կան բույսեր: Բայց նրանք այստեղ աճում են ավելի նոսր, քան
թե չոր տափաստաններում: Նրանք նույնպես կարողանում են
հեշտությամբ դիմանալ չորին և խոնավություն չլինելուն:

Ավազները չարունակ վտանդ են սպառնում անապատի բույ-
սերին: Բայց նրանցից շատերի սերմերն այնքան թեթև են, վոր
քամու ժամանակ նրանք ավազից առաջ են թռչում, և ավազ-



Սաքաուլ

ները չեն կարողանում նրանց
ծածկել հաստ շերտով: Շատ
թփեր բոլորովին տերե չու-
նեն. նրանց ճյուղերն ուղիղ
են և բարակ, այդ պատճառով
ավազը կարողանում է նրանց
միջով ազատորեն անցնել և
թփերի մոտ չի կուտակվում:

Ավազոտ անապատներում
պատահում են նաև ծառեր-
սախաուլներ:

Տարորինակ տեսք ունեն ա-
նապատի այդ ծառերը. նրանց
բները ծուռ ու մուռ են,

ծածկված բաղմաթիվ ձեղքվածքներով և ափսոսանքով: Տե-
րեվներն ունեն մանր թերթիկների ձև, իսկ ջաշել կանաչ ճյու-
ղերը սաքաուլի համար տերեների դեր են կատարում: Սաքա-
ուլի անտառը սառնել չի տալիս:

Մեծ դեռերի ավելին բոլորովին ուրիշ բուսականություն
է: Ավազներն այստեղ բույսերին վտանդ չեն սպառնում, բա-
վականաչավի խոնավություն կա: Արիերի յերկայնքով ձգվում են
խիտ յեղեղնուտներ և ծառերի թփուտներ:

ՀՈՂԸ. — Ավազոտ անապատներում հող չկա. տերեաղուրի
նոսր բուսականությունը բուսահող համարյա չի տալիս: Միայն
ցածրադիր տեղերում պատահում են սակավ բերքատու աղուտա-
յիմ հողեր:

Դետահողիտներում, ընդհակառակը, շատ արդավանդ հողեր
են պատահում: Նրանք առաջացել են այն տիղմից, վոր դեռն
ամեն տարի թողնում է փարարման ժամանակ:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ. — Առաջին հայացքից անապա-
տում կենդանիներ չկան: Բայց ուշադրությամբ դիտեցե՛ք ավա-
զը: Ահա կենդանություն առավ մի քարիկ, ապա յերկրորդը,
այնուհետև յերրորդը և անաղմուկ առաջ շարժվեցին: Բայց

դրանք քարերը չեն, այլ ավաղի մեջ թաղված մոդեսների զլուխներ:

Անապատներում, ինչպես և չոր տափաստաններում, մոռեսներ և ոճեր չատ կան: Վտանդի ժամանակ նրանք թաղվում են ավաղի մեջ: Մոդեսների մեջ պատահում են միևեկ յերկու մետր յերկարություն ունեցողներ:

Խոշոր կենդանիներից անապատի ծայրամասերում պատահում են անտիլոպներ, վորոնք զգուշ և շատ յերկչոտ կենդանիներ են: Մի փոքրիկ վտանդի դեպքում նրանք անհետանում են քամու արագությամբ:

Անապատի համարյա բոլոր կենդանիներն ունեն ղեղնավուն գույն և այդ պատճառով անապատի ավազների մեջ հաղիվ են նկատվում:

Մեծ գետերի ափերին, վորտեղ խիտ մացառուտներ կան, պատահում են վարազներ և վագրեր:

Անապատն արժեքավոր ընտանի կենդանու— ուղտի հայրենիքն է: Իր լայն կոշտուկներ ունեցող թաթերի շնորհիվ նա հեշտությամբ քայլում է ավազների մեջ, միևեկեռ ձիու վոտքերը խրվում են:

Ուղտը կարող է կերակրվել չոր, կոշտ և փչոտ խոտերով: Նա կարող է առանց սննդի և ջրի մի քանի օր ղլմանալ: Այդ ժամանակամիջոցում նա կարող է թե ճանապարհորդին և թե բեռը մի քանի հարյուր կիլոմետր փոխադրել:

Առաջադրություններ.— Անապատի կլիման համեմատեցե՛ք չոր տափաստանների կլիմայի հետ:

Պատմեցե՛ք ի՞նչ առանձնահատկություններ ունեն անապատների կենդանիներն ու բույսերը: Անապատային դոտու ի՞նչպիսի տեղերումն են դառնում արգավանդ հողերը:

ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

Անապատների դոտում ապրում են ուզրեկներ, քուրմեմններ և ղազախներ:

Քարտեզի վրա (եջ 164) ցույց տվե՛ք, թե վորտեղ են ապրում այդ ժողովուրդները:

Ավազոտ անապատների բնությունն աղքատիկ է: Բայց այնտեղ ևս բնակչություն կա: Նա զբաղվում է անասնապահությամբ: Վոչխարների մեծ հոտերը և ուղտերի խմբերը հովիվները քլում են մի աղքատիկ արոտատեղից մյուսը:

Անապատում հեռու—հեռու, նոսր կերպով ցրված են անասնապահների առելները:



Գաւերի վոռոգումը արիերով

Գետերի հովիտներում ջուրն առատ է, հողը՝ արգավանդ: Բուսականությունը հարուստ: Այս պատճառով ել հին ժամանակներից սկսած՝ մարդիկ հաճույքով բնակություն են հաստատել այդ տեղերում: Գետահովիտների բնակչությունը մեծաքանակ է: Նա զբաղվում է գլխավորապես յերկրագործությամբ— այդ գինեղ ե տնկում, մեծ քանակությամբ բամբակ է ցանում: Բամբակի ցանքերը հետզհետե ընդարձակվում են:

Անջուր հողերը վոռոգելու համար հին ժամանակներից սկսած գետերից ջրանցքներ (արխեր) են հանում:

ԹՈՒՐԻՄԵՆԱԿԱՆ ԱՌԻԼՈՒՄ

Մեր քարավանը գնում էր Կարա-Կում անապատով:

Քարտեզի վրա գտե՛ք Կարա-Կումը:


Մեր շուրջը ձգվում էյին անվերջ միապաղաղ ավազե բլուրներ: Նրանք ծածկված էյին խանձված բուսականության մնացորդներով: Տեղ-տեղ պատահում էյին սաքսաուլի մացառուտներ:

Հանկարծ ավազե բլուրներից մեկի հետևը բացվեց մեկ և կես հեռավոր յերկարություն և լայնություն ունեցող հարթ տարածություն: Նրա վրա շարքով կանգնած էյին 26 թուրքմենական ծածկասայլ: Քիչ հեռու ջրհորների մոտ ջուր էյին տալիս ուղտի ձագերին և դառներին:

Մի թուրքմենական առւլ էր այդ:

Մենք կանդ առանք հանգստանալու և յերկու ուր անցկացրինք այստեղ:

Ամառ էր, անապատի բնակիչների համար տարվա ամենածանր յեղանակը: Անտանելի չոգը հանդիստ չեր տալիս վոչ



Վոչխարները Կարա-Կում անապատում

ցերեկը, վոչ էլ գիշերը: Վրաններում կյանքը համարյա մեռած էր: Շրջակայքի ամբողջ բուսականությունը խանձվել էր, և հովիվները հոտերի հետ քաշվել էյին հեռավոր արոտատեղեր, ուրիշ ջրհորների մոտ:

Յերկու ուրից հետո մեր քարավանը հասավ հեռացող հոտին:

Շրջանցելով ավազաթումբը՝ մենք հանկարծ հեռվից նկատեցինք ինչ-վոր շարժում: Վոչխարների հոտն էր այդ:

Գնում էյին վոչխարները՝ իրենց կճղակներով քանդելով կարակումյան փոշենման ավաղը: Նրանք հագարից ավելի էյին Արևի տակ փայլում էյին նրանց սև, մոխրագույն և դարչնագույն մորթիները: Հոտի կողքերով և հետևից վազում էյին մեծ պահապան չները: Իսկ առջևից գնում էր հովիվը՝ յերկար, ծայրը կեռ դավազանը ձեռքին:

Ծանր է և պատասխանատու թուրքմենական հովիվի աշխատանքը: Ամբողջ ուրը քայլում է նա անապատում, արևի կիզող ճառագայթների տակ: Աղքատ է անապատի բուսականությունը, և նա ամեն ուր ստիպված է ահադին տարածություն անցնել, վորպեսզի հոտը կերակրի: Յերբեմն փչում է այրող բորանը և հոտը ծածկում է ավաղով: Լավ է, յեթե այդ յերկար չի տևում: Բայց պատահում են և այնպիսի դեպքեր, յերբ բորանից հարյուրավոր վոչխարներ են սատկում:

Թուրքմեններն ամեն տարի միլիոնավոր թանգարժեք կարակումյան վոչխարներ են տալիս պետությունը:


ԱՐԳԱՎԱՆԴԻ ՀՈՎՏՈՒՄ

Մերկ անապատում յերկար ճանապարհորդելուց հետո մենք ավտոմոբիլով մտանք Փերգամի հովիտը: Նա գտնվում է Տաքենտ քաղաքից դեպի հարավ-արևելք, Սիր-Դարյա գետի հոսանքի յերկայնքով:


Քարտեզի վրա գտե՛ք Փերգամի հովիտը:

Վայրը միանգամից փոխվեց: Անցնում էյինք պտղատու խոտայրիների, կանաչ արտերի մոտով: Հաճախ պատահում էյինք եղով կամ վոտքով գնացող մարդկանց:

Սակայն անապատի մոտիկությունն իրեն դեռևս զգալ էր



տալիս: Մերթ աջ, մերթ ձախ կողմում յերևում էյին մերկ տեղեր:



Ֆերգանի հովտում

Տեղ-տեղ դաշտերը ծածկված էյին ավազներով, վոր քամին լերել եր անապատից:



Բայց շուտով անապատի վերջին հետքերը կորան: Ավտո-

մոբիլը սլացավ այգիների և արտերի համատարած կանաչի միջով:

Ամեն քայլափոխում մենք ստիպված էյինք լինում անցնել վոռոգման ջրանցքների վրայով:

Ամենուրեք ցրված էյին ուղղեկների դյուղերը:

Սպիտակին էյին տալիս նրանց կավե փոքրիկ տներն իրենց տափակ տանիքներով: Բակերը շրջապատված էյին կավե բարձր պատերով: Տների մոտ կանաչին էյին տալիս պտղատու այգի-



Բամբակի չանաքը մեքենայով

Ները, հոտավետ հյութալի սեխերի բոստանները և խաղողի այգիները:

Ֆերրեմն նկատվում էյին կապույտ առվույտի, չառ սակավ բրնձի ցանքեր: Յեվ այս բոլորը թաղված եր բամբակի ընդարձակ արտերի մեջ:

Ֆերզանի հովտում առատ արև, ջերմություն և լույս կա, հողն եւ լավ վռուղված է ջրանցքներով: Բամբակն այստեղ մեծ բերք է տալիս:

Ֆերզանի հովտը բամբակի մշակութայն ամենադիտավոր վայրերից մեկն է խորհրդային Միության մեջ: Ուղբեկական կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները խորհրդային Միության ամեն տարի միլիոնավոր կիլոգրամ բարձր տեսակի բամբակ են տալիս:

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱՊՐՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՁԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Յարական կառավարությունը ղեկի ուժով զբաղեց անապատների գոտում զանազան հողերը:

Անապատային գոտու ժողովուրդները մոտ 70 տարի ապրեցին ցարական ղեկավարների իշխանության տակ:

Անապատների ժողովուրդներից խլում էին լավագույն հողերը, չնչին զենքով հավաքում էին բամբակը և անասունները և ստիպում էին մեծամեծ հարկեր վճարել:

Ամեն տեղ կանգնած էին ռուսական զորքեր:

Անապատների գոտու աշխատավորներն ապրում էին կըրկնակի լճի տակ— թե՛ ցարական ղեկավարների և թե՛ սեփական խանների (թագավորների), բայերի (հարուստների) և մոլլաների (տերտերների):

Ջուրն անապատների գոտու բնակչության կյանքի համար միշտ հսկայական նշանակություն է ունեցել:

Բայց այդ ջուրը պատկանում էր խաներին և բայերին: Վերջին շատ էր ջուրը, այնքան մեծ էր և իշխանությունը:

Ջրի համար խաները շարունակ կոլում էին իրար հետ: Այս կոլիվների ժամանակ վոչնչանում էին ամբողջ ծաղկած քաղաքներ և ծածկվում անապատի ավազներով: Ջրանցքներ չինելու համար ընում, բերում էին տասնյակ հազարներով աշխատավորներ:

Անապատների գոտու ժողովուրդները մութ և անահավատ էին: Գյուղատնտեսությունը վարում էին նախնական ձևերով:

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ՔՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ ԱՆԱՊԱՏԱԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՅԱՆՔՐ

Անապատային գոտում շատ արդավանդ հողեր իրենց կորչում էին ջրի պակասության պատճառով: Այդ պատճառով էլ խորհրդային իշխանություն ամենից առաջ ուշադրություն դարձրեց վռուղման վրա:

Սկսեցին նորոգել քայքայված ջրանցքները և պատվարները և դիմացկուն նյութերից՝ ցեմենտից ու յերկաթից կառուցեցին նորերը: Սկսեցին ջուրը մղել վոչ թե շերեփաթի ունեցող անիվներով, այլ մեքենաների միջոցով:

Բայերից խլեցին հողերը: Ջուրը դադարեց մասնավոր սեփականություն լինելուց: Այժմ բոլորն էլ առանց վորեն վճարի ուղարկում են ջրից: Դա հավասարապես բաշխվում է վարելահողերի և այգիների վրա:

Վռուղման ջրանցքների ցանցն ավելի ու ավելի մեծանում է: Անապատն ավելի ու ավելի յե հետ քաչվում, հեռանում, աղատելով նոր արդավանդ հողեր ցանքերի համար:

Բայց տնտեսության դարդացման համար նեղեք են հաղորդակցության լավ ճանապարհներ, վորոնք անապատների գոտում առաջ դրյալություն չունեին:

Սկսել են անցկացնել ամուր խճուղիներ:

Անապատների գոտու տնտեսության համար կարևոր նշանակություն ունի նաև մի քանի տարի առաջ կառուցված թուրքեստան-Միրիդյան յերկաթուղին: Այդ ճանապարհով հացի մեծ պաշարներ են փոխադրվում սեահողային տափաստաններից անապատների գոտին:

Դրա շնորհիվ ահադին տարածությամբ արդավանդ հողեր են աղատվել արժեքավոր բամբակի ցանքի համար:

Գյուղատնտեսությունը վերակառուցվում է:

Այնտեղ, վորտեղ գյուղացիները ջուկ-ջուկ իրենց նախնական պործիքներով վորիփում էին դեռինը, այժմ հաղարավոր տրակտորներ մշակում են կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները բամբակի դաշտերը:

Կոլեկտիվ տնտեսություններ են կաղմում նաև քոչվոր վոչ-

խառապահները, ստեղծվում են վոլխարարութեան մեծ խորհրդային անտեսութիւններ:

Անապատի ընդարձակ հողամասերում ցանում են կերի խոտեր, և քոչվորներն սկսում են նստակյաց կյանքի անցնել: Անապատային դոտում առաջին անգամ սկսեցին կառուցվել դործարաններ և ֆարրիկաներ:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութիւնն անապատային դոտում ապրող ժողովուրդների համար կուլտուրական շինարարութեան լայն ճանապարհ բացեց:

Անապատների դոտում կաղմվեցին հետեյալ խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնները— Թուրքմենականը՝ Աշխաբադ մայրաքաղաքով և Ուզբեկականը՝ Տաշքենտ մայրաքաղաքով:

Քարտեզի վրա դտե՛ք այդ հանրապետութիւնները և նրանց մայրաքաղաքները:

Հաղարավոր դպրոցներ ուսում են տալիս թուրքմենների և ուզբեկների յերեխաներին՝ իրենց մայրենի լեզվով: Տասնյակ բարձրագույն դպրոցներ յերիտասարդ զաւնակից հանրապետութիւններին իրենց զիտնականներն ու ինժեներներն են տալիս: Կառուցվում են ակումբներ, դրադարաններ, կինո, թատրոններ:

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԳՈՏՈՒՄ

Արադորեն զարգանում և թուրանի զաւտավայրում արդյունաբերութիւնը:

Կառուցվել են բամբակադուլիչ, մետաքսի, մանածադործական ֆարրիկաներ, գյուղատնտեսական մեքենաների դործարաններ, ելեկտրոկայաններ:

Կասպից ծովի ափին զարգանում և ձկնորսական արդյունաբերութիւնը:

Հենց այստեղ ել գտնված և նավթ:

Մեր հարստութիւնները յերեւան բերվեցին Կասպից ծովի

Կարա-Բողազ-Գյոլ ծոցի մոտ: Այստեղ ստացվում են զանազան աղեր:

Կարա-Կում անապատի կենտրոնում գտնված են ծծմբի մեծ պաշարներ:

Աճում են քաղաքները: Յերեկվա քոչվորները բանվորներ են դառնում:

Վարժուրդներ.— Կոնտուրային քարտեզի վրա նշեցե՛ք՝ Արալյան ծովը, Արալյան ծովը թափող գետերը, Կարա-Բողազ-Գյոլ ծոցը, Կարա-Կում անապատը, ինչպես և Տաշքենտ ու Աշխաբադ քաղաքները:

Քարտեզի վրա հետազոտեցե՛ք ողտակար հանածոների վայրերն անապատների դոտում և նշեցե՛ք ուրվաղծային քարտեզի վրա:

Արտադասյան աշխատանք.— Կաղմեցե՛ք ալրում «Անապատների դոտ» թեմայով:

8. ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԳՈՏԻ

Խորհրդային Միութեան մեջ կան նաև այնպիսի վայրեր, վորտեղ ձմեռը ձյունը չի նստում և սաստիկ սառնամանիքներ չեն լինում:

ԱՅԴ ԽՍՀՄ-Ի ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԳՈՏԻՆ Ե:

Թեպետ այդ դոտին մեծ տարածութիւն չի բռնում, բայց չատ արժեքավոր և մեր Միութեան համար:

Մերձարեւմտարձային դոտուն են պատկանում Ղրիմի հարավային ծովափը յեվ Կովկասի Սեվծովյան յեզերքը: Յերկուն ևլ գտնվում են յերբեք չսառչող Սև ծովի ափերին:

ՂՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾՈՎԱՓԸ

Քարտեզի վրա դտե՛ք Ղրիմ թերակղզին: Գտե՛՛ք Ղրիմի հարավային ծովափը:


Ձեր առաջ Ղրիմի հարավային ծովափի մի անկյունն և: Ծով: Լեռներ ու ժայռեր: Լեռնալանջին կպել և գյուղը:

Գյուղի առաջ տարածվում և պարկը: Այնտեղ բացթիւյա աճում են մեզ մոտ սենյակում աճող բույսերը— հոտավետ դափնի, վարդազույն ծաղիկներով զարդարված ոլեանդրը, աճում

են նաև մուգ-կանաչ մազնուլիաներն իրենց խոշոր, սպիտակ ծաղիկներով: Ծաղկաթմբերը ծածկված են բազմաթիվ վառ ծաղիկներով:

Պարկի ծառերի մեջ աչքի յեն ընկնում վայելչակազմ, մուգ-կանաչ կիպարիսները՝ իրենց օրաժայր դազաթններով:

Պարկին կից այգիներում աճում են հարավային պտուղներ՝ դեղձ, ծիրան:



Ամառային օր է: Փայլում է վառ արևը և նրա ճառագայթները տակ ծովը խաղում է կանաչ, կապույտ և մուգ-կապույտ գույներով: Ծովի ալիքները հարձակվում են ծովեզերքի վրա և ազմուկով զարկվում ժայռերին ու ցրիվ գալիս:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ԿԼԻՄԱՆ. — Ղրիմի հարավային ծովափը Ղրիմի լեռներով պաշտպանվում է հյուսիսային ցուրտ քամիներից:

Ամառը ծովափին շոգ և չոր է լինում: Նա տևում է մոտ հինգ ամիս: Անձրևներն այստեղ այնքան քիչ են գալիս, վոր սովորաբար ջրի կարիք է զգացվում: Ձմեռը կարճատև է և մեղմ: Ձմեռը հաճախ մառախուղներ են լինում: Հաճախ անձ-

րեվներ են գալիս: Ծովը կատաղի փոթորիկներից ալեկոծվում է: Մեկ-մեկ ծովափին ձյուն է գալիս, բայց արագ հալվում է:

Գարունը կարճատև է և չուտ է գալիս. արդեն մարտին ծաղկում են այգու բույսերը: Ղրիմի հարավային ծովափին ամենալավ ժամանակն ոգոսոսո, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներն են: Այս ամիսներին արևն այնպես խիստ չի այրում, ինչպես ամառը: Լինում է պարզ և տաք յեղանակ:

Վերջան դեպի լեռները բարձրանանք, այնքան կլիման փոխվում է: Նույնիսկ ամառը լեռներում դով է: Այնտեղ հաճախ անձրևներ են գալիս այն ժամանակ, յերբ ծովափին շոգ և չոր է լինում:

ԳԵՏԵՐԸ. — Ղրիմի հարավային ծովափին դեռեր քիչ կան: Նրանք սկսվում են լեռներում: Գարնանը՝ ձյունը հալվելու ժամանակ, իսկ ամառը՝ սարերում առաջացող հեղեղներից հետո, դեռերը վարարում են և արիերից դուրս գալիս: Նրանց մեծ մասն ամառը ցամաքում է:

ԲՈՒՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ. — Ղրիմի հարավային ծովափին մշտադալար բույսեր չաւ կան: Նրանց տերեւները կոշտ են և ծածկված հաստ մաշկով: Այսպիսի բույսերը վոչ սոմառային շոգից են վախենում, վոչ ել ձմեռային ցրտերից: Մշտադալար բույսերն ամբողջ տարին պահպանում են իրենց սաղարթը: Այդպիսի բույսերից է բաղեղը, վոր փաթաթվում է ծառերին: Նա իր հատուկ ճանկերի միջոցով բարձրանում է ծառերի դա-
զաթները և իր կոշտ, մուգ-կանաչ տերեւներով ամբողջովին ծածկում նրանց:

Բայց Ղրիմի հարավային ծովափին վայրի բուսականություն քիչ կա: Բույսերի մեծ մասն աճեցրել են մարդիկ: Այստեղ հաջողությամբ աճում են մանալանդ մի քանի մշտադալար բույսեր, վորոնք բերվել են ուրիշ մերձարևադարձային շրջաններից, դրանցից աչքի յեն ընկնում դափնի, վոր հոտավետ և կոշտ տերեւներ ունի, վորոնք դործ են ածվում կերակրի մեջ վորպես համեմունք, ճիքեմու ծառ, վորի պտուղներից ընտիր յուղ է ստացվում, կիպարիս—բրդաձև փշատերեւ ծառեր, վորոնք ծառայում են վորպես դարգարանք: Այգիներում հաճախ աճեցնում են ոլեանդրներ և մագնոլիաներ:

Խոտաբույսերը ծովափին փոխվում են տարվա յեղանակ-

ների համեմատ: Վաղ դարնանն արեւից տաքացող լանջերին ծաղկում են ձնծաղիկներ և մանուշակներ: Այնուհետեւ վառ կանաչով ու ծաղիկներով ծածկվում է ամբողջ ծովափը: Սմառվա չողերին կանաչ խոտերը դեղնում, չորանում են: Նրանց փոխարեն դուրս են գալիս նոսր, կոշտ խոտեր, վորոնք ծածկված են լինում փչերով: Այժմ խիստ աչքի յեն ընկնում մերկացած հողամասերը, քարերի և խճերի կույտերը:

Միայն այնտեղ, վորտեղ դեռակ է հոսում կամ առու յե քչքչում, ամբողջ տարին խոտեր և վառ ծաղիկներ են լինում:

Բարձրանալով լեռները՝ մենք տեսնում ենք, վոր յեղանակը հետզհետե զոլանում է և հաճախ անձրևներ են գալիս: Փոխվում է և բուսականութունը: Լեռնալանջերին սկզբում յերեւում են կենտ-կենտ Ղրիմի սոճիներ, այնուհետեւ՝ սոճու ամբողջ անտառներ:

Սվե՛լի բարձրում, վորտեղ չառ անձրևներ են գալիս, յերեւում են նաեւ սաղարթավոր ծառեր՝ կաղնի, հացի, հաճարի և չառ քփուտներ:

Ղրիմի լեռների մի քանի տեղերում դեռ պահպանվել են յերկու հարյուր տարվա հաճարի անտառներ:

Ղրիմի լեռների դադաթները տալիս են: Նրանք ծածկված են լեռնային մարգագետինների կանաչ դորդով:

Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութունը Ղրիմի անտառներն անխնա վոջնացվում էյին: Մինչդեռ անտառները լեռնալանջերում պահում են անձրիի ջրերը, պահպանում են դետերն ու առուները ցամաքելուց: Այժմ Ղրիմում անտառները պահպանվում են կտրելուց և հրդեհներից:

ԿԵՆԴԱՆՍԻԱՆ ԱՇԽԱՐՀԸ.— Ղրիմի կենդանական աշխարհն աղքատ է, նա խիստ վոջնացման է յենթարկվել մարդու ձեռքով: Այստեղ չառ մոդեսներ ու ոճեր կան, բայց հեշտ չի նրանց



Բաղեղ

նկատել: Նրանց դուրսը նման է չրջապատող այն ժայռերի և քարերի դուրսին, վորոնց վրա նրանք տաքանում են: Մարդու մոտենալու ժամանակ նրանք վայրկենապես թաղնվում են ճեղքերում:

Տաք արեւ որերին ողը լցված է լինում խոշոր միջատների զիլ բզրոցով: Ամբողջ որը լսվում են այդ ձայները ծառերի վրայից: Թվում է, թե ամեն մի ճյուղ, ամեն մի տերեւ հընչում, ձայն է տալիս:

Սարերի վրա պատահում են և ուրիշ կենդանիներ: Յերբեմն պատահում են յեղջերուներ և վայրի այծեր: Անմատչելի ժայռերում բուռն են դրել արծիվները:

ՂՐԻՄԻ ԾՈՎԱՓԻ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

Ղրիմի հիմնական բնակչութունը քաքարներն են: Նրանք դրազվում են այդեղործությամբ:

Թաթարական դյուղերը ցրված են գետահովտներում և Ղրիմի լեռների լանջերին: Այստեղ ամեն ինչ քարից է՝ տները, դռները, փողոցները, բակի պատերը:


Թաթարական դյուղում փոքրիկ տները— «սակլյաները»— դասավորված են աստիճաններով: Տան հետեւի պատը յերբեմն հենց ինքը՝ ժայռն է կաղնում: Մնացած պատերը չինված են քարից և կավից: Կտուրները տալիս են, հողից չինված: Կտուրների վրա քնում են և միլը չորացնում: Կտուրը քիչ բարձրը դանվող տան համար ծառայում է վորպես բակ և փողոց: Գյուղի ծայրը դուրս գալու համար պետք է մի կտուրից մյուսն անցնել քարե նեղ սանդուխտներով:

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ՂՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾՈՎԱՓԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՅԱՆԲԸ

Արեւ որերի չառութունը հնարավորություն է տալիս, վոր Ղրիմի ծովափին արժեքավոր կուտուրական բույսեր աճեցվեն:

Այդիններում հասունանում են դեղձ, ծիրան, նուշ, ձիթապտուղ: Ընդարձակ տարածութուններ բուսված են խաղողի այգիներով և թանդարժեք տեխնիկական բույսերով:

Վորպեղի այդ բույսերը չող ժամանակ չչորանան, վրոտ-
դելու համար ջուր ե պետք: Այնտեղ, վրոտեղ ծովափին ջուր
կա, իրար հետեից շարվում են պողատու և խաղողի այգիները
պարկերը: Վրոտեղ ջուր չկա, այնտեղ չող ժամանակ ամեն ինչ
թառամում և վոնջանում ե:



Թաթարական դուղ

Ջուրը ծովափին մեծ հարստություն ե:

Ջրավոր թաթարները խորհրդայնացումից առաջ շատ վատ
եյին ապրում: Ղրիմի հարավային ծովափի ամենալավ հողերը
պատկանում եյին կալվածատերերին և ցարական պալատական-
ներին: Այստեղ եր դոնվում նաև հենց իրեն՝ թաղավորի կալ-
վածքը:

Ջրավորները թանկ եյին վճարում հողի և ջրի համար: Նը-
րանք մշտական կարիքի մեջ եյին և կախում ունեյին հարուստ-
ներից:

Ջրավոր թաթարները համարյա բոլորն անգրագետ եյին:

Ղրիմի ծովափի աշխատավորներն այժմ նոր կյանքով են
ապրում: Հողերը, խաղողի և մրդի այգիները դարձել են սո-


ցիալիստական սեփականություն: Անահատական տնտեսության
փոխարեն ամեն տեղ կազմակերպված են կոլտնտեսություններ,
վորոնք պաշարում են տնտեսության բարձրացման և կոլտն-
տեսականների կյանքի բարելավման համար:

Բացված են տասնյակներով դպրոցներ, վրոտեղ զասավան-
դում են թաթարական լեզվով: Բացված են շատ գրադարաններ
և դասընթացներ հասակավորների համար:

ՂՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾՈՎԱՓԻ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԸ

Խաղողը ծովափի կարևոր բույսերից մեկն ե:

Շատ կուեկտիվ և խորհրդային տնտեսություններ գրաղ-
վում են գլխավորապես խաղողի շահությունից:



Խաղողի բերքահավաք

Նկարի վրա ցույց ե տրված խաղողի բերքահավաքը խոր-
հրդային տնտեսություններից մեկում: Խաղողի այգին փոփել և
լեռան հարավային լանջին. այստեղ շատ արևոտ ե, և խաղողի
փաղցր տեսակները շուտ են հասունանում: Արագ ե կատարվում
խաղողի քաղը: Հասած վողկույնները պետք ե ժամանակին

կորել: Տասնյակներով բանվորներ զբաղված են խաղողի քաշով: Խաղողով լցված կողովները դարձնում են բնականորեն ամրորված վրա: Լավ խճուղու վրայով խաղողը տեղափոխվում են խորհրդային տնտեսությունն պահեստները: Այստեղից խաղողի մի մասը կուղարկվում սանատորիաները հիվանդների և հանգստացողների համար: Մի մասը կտեղափոխեն հյուսիս՝ հեռավոր խորհրդային քաղաքները, մի մասից էլ գինի կպատրաստեն:

ՂՐԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԱՌՈՂՋԱՐԱՆՆ Ե

Չոր և տաք կլիման, ծովային մաքուր ողջ, խաղողը և մերգերը շատ հիվանդների յեն զբաղված գեպի Ղրիմի հարավային ծովափը: Ղրիմի ողտակար և մանավանդ թօքերի հիվանդություն ունեցողների համար:

Մինչ հեղափոխությունը Ղրիմի հարավային ծովափին բնությունն առողջարար ուժերն աշխատավորներին մատչելի չէին: Դրանցից ոգտվում էյին միայն նրանք, ովքեր ապրում էյին ուրիշի աշխատանքով:

Խորհրդային իշխանությունը Ղրիմի հարավային ափն առողջավայր դարձրեց շատ հարյուր հազարավոր աշխատավորների համար: Յարի և պալատականների պալատներն ու հարուստների ամառանոցներն այժմ վեր են ածվել աշխատավորների համար հանգստի տների և սանատորիաների: Յարական պալատներից ամենալավն այժմ կոլտնտեսականների համար սանատորիայի յեն վերածվել:

ԿՈՎԿԱՍԻ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵԶԵՐՔԸ

Կովկասի Սևվծովյան յեզերքը գտնվում է Ղրիմի ծովափից գեպի արևելք:

Քարտեզի վրա ցույց տվեք Կովկասի Սևվծովյան յեզերքը:

Նկարում ցույց է տրված Կովկասի Սևվծովյան յեզերքը նոյն յեմբեր ամսին:


Ծովափը հեղեղված է արևով: Ոգն այնքան տաք է, վոր մարդիկ ման են դալիս թեթև հագուստով, իսկ վորմանք լողանում են ծովում: Ծովափնյա դառիվայրի վրա տնկված են մանդարինի և նարնջի ծառերի այգիներ:

Վոսկեզույն նարինջներն ու մանդարիններն արգեն հասել են

և պարզ յերևում են տերեւների մոռգ կանաչի մեջ: Շուտով կսկսվի բերքահավաքը, և ստացված բերքը կուղարկվի ԽՍՀՄ-ի զանազան քաղաքները:

Այդին ողտակում է մի հրաշալի խճուղի: Մլանում է ամրամորիլը, վորի մեջ նստած են հիվանդներ: Նրանք գնում են սարի լանջին տեղավորված սանատորիան: Սանատորիայի առաջ պարկ կա: Սանատորիայի հետևը յերևում են դետի հովիտը և դետի վրայի կամուրջը: Այստեղ աճում են թանկարժեք կուլտուրական բույսեր: Մշակված հողամասերը չրջապատված են անտառներով: Խիտ և գծվարանցանելի անտառները ծածկում են ծովեզերքը և լեռնալանջերը:

Ծովեզերքը գեղեցիկ թեքվածքներով անցնում է հեռուները:



Ափերի մոտ ծվում է տաք, յերբեք չսառչող ծովը: Ծովեզերքի վրա բարձրանում են լեռներ, վորոնք պաշտպանում են այդ ծովեզերքը հյուսիսային ցուրտ քամիներից: Լեռների առանձին դադաթները ծածկված են ձյունով:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ.— Յեթե նայեք քարտեզին, կտեսնեք, վոր Կովկասի Սևվծովյան ափերն ամեն տեղ նույն լայնությունը չունեն:

Հյուսիս-արևմտյան մասում Կովկասյան լեռները համարյա
բնդհուպ հասնում են մինչև ծովեզերքը։ Դեպի հարավ-արևելք
լեռները հեռանում են ծովից։ Այստեղ գետահովտի յերկայնքով
ստացվում է մի ցածրադիր հարթություն, վոր կոչվում է
Կովսիդյան դաշտավայր։

Ամբողջ ծովեզերքը դարձած է դեպի տաք ծովի կողմը։
Նրա վրա բարձրանում են Կովկասյան լեռները։ Սրանք 2—3
սնդամ բարձր են Ղրիմի լեռներից։ Սրանց շատ դաշտերը
ծածկված են հավերժական ձյունով և սառույցներով։

ԿլիմԱՆ.— Ծովեզերքի կլիման խոնավ մերձարևմտարձա-
յին է։ Ծովի կողմից փչող արևմտյան քամիները դեպի ծովա-
փն են բերում մեծ քանակությամբ խոնավություն։ Այս խո-
նավությունն առատորեն թափվում է լեռնալանջերում։

Կովկասյան ծովեզերքին նույնպես, ինչպես Ղրիմի հարա-
վային ծովափերին, ձմեռը ձյունոտ և ցուրտ չի լինում։ Ամառը
նույնպես յերկարատև է և շոգ։ Բայց տեղումներն այստեղ
ավելի առատ են, քան թե Ղրիմում։ Անձրևները գալիս են ամ-
բողջ տարին։ Շատ անձրևներ լինում են մանավանդ աշնանը և
ձմռանը։ Յերբմե մեկ օրվա մեջ այստեղ այնքան անձրև է գա-
լիս, վորքան ՈՍՀ Միության ուրիշ տեղերում մի տարվա մեջ։
Բաթումի չրջակայքն ամբողջ Միության ամենաանձրևոտ վայ-
րն է։

ԳԵՏԵՐԸ.— Կովկասյան լեռներից շատ գետեր են հոսում
դեպի ծովափը։ Նրանց մեծ մասը հոսում է լեռների ձյունի և
սառույցների տալից։ Նրանք կատաղորեն ցած են հոսում լեռնե-
րից՝ իրենց հետ տանելով մեծ քանակությամբ քարեր, ավաղ
և տիղմ։ Հարթության վրա նրանց հոսանքը դանդաղում է, և
ջրերը թողնում են այստեղ սարերից բերած քարերը, ավաղը և
տիղմը։ Ամառը լեռներում յեկող կատաղի անձրևներից գետերը
վարարում են և ավերից դուրս գալով՝ ծածկում ցածրադիր
տեղերը։

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.— ՈՍՀՄ-ում վոչ մի տեղ այնպիսի
փարթամ բուսականություն չկա, ինչպես մեր յերկրի այս տաք
և խոնավ անկյունում։ Թե ծովափը և թե լեռնալանջերը ծածկ-
ված են անտառների ամբողջական կանաչ զանգվածներով։ Ծո-

մլաինյա բնակչությունը շարունակ պայքարում է այս կատաղի
բուսականության դեմ։ Աչքաթող արած վարելահողը 1—2
տարվա մեջ ծածկվում է յերկու մետր բարձրությոն ունեցող
ձարխոտով կամ հինդ-վեց մետր բարձրությոն ունեցող անտա-
ռով։

Ծովաինյա անտառները բաղկացած են բազմազան ծառե-
րից։ Նրանց մեջ պատահում են նաև պտղատու ծառեր՝ տան-
ձենի, սալորենի, խաղողի վարք։ Քիչ չեն նաև մշտադալար
բույսերը՝ դափնին, դափնակեռասենին։ Ծառերը փաթաթված են
պատառուկներով։ Դրանցից վոմանք ունեն սուր-սուր փշեր։
Այսպիսի խճճված անտառների միջով առանց կացնի կամ լավ
դաշույնի չարժվել չի կարելի— առհն մի շարժում անելիս
փշերը բռնում են մարդու շորերը և խրվում մարմնի մեջ։ Ոչստ
ու դժվարանցանելի յեն մանավանդ Կովսիդայի դաշտավայրի
ճիսահեղեղված անտառները։ Անտառը յետ է քաշվում միայն
այնտեղ, վորտեղ ճահճուտներ են տարածվել։ Ծովափի ճահճ-
ներում հեշտ կերպով կարելի յե հիվանդանալ Կովկասյան հյու-
ժիչ տենդով։

Դեպի վեր, լեռնալանջերում կլիման և բուսականությունը
փոխվում են։ Անտառներում անհետանում են մշտադալար բույ-
սերը և լիանաները (պատառուկները)։ Յերևում են ծառերի ու-
ղիչ տեսակներ։ Ավելի բարձր գալիս են լեռնային մարդադեղին-
ները, իսկ հետո՝ հավերժական ձյունը և սառույցը։

ՀՈՂԸ.— Անդրկովկասի Սևծովյան յեզերքին պատահում են
առանձին տեսակի կարմիր հողեր՝ կարմրահողեր։ Դրանք ամե-
նալավ հողերն են այնպիսի թանգարժեք բույսերի համար, ինչ-
պես թեյը, կիտրոնը, նարինջը և մանդարինն են։


ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇՆԱՐ ՀԸ.— Կովսիդայի կիսահեղեղված ան-
տառներում շատ կան մոծակներ—տենդացավ տարածողներ—
միլիոնավոր դուրտեր։ Յերեկոները թռչում են չղջիկները։

Ծովափի ավելի բարձր վայրերում շատ կան վանազան մի-
ջատներ, մոդեսներ և ոճեր։

Սևծովյան յեզերքի մոտի լեռներում պահպանվել են բազ-
մաթիվ խոշոր կենդանիներ։ Առաջ թագավորը և իր մերձավոր-
ները գալիս էյին այստեղ վորսի։ Այժմ Գերադույն խորհրդի
վորոշման համաձայն այստեղ կաղմակերպված է մի արդեա-

Վայր՝ 350 հազար հեկտար տարածությամբ: Այս արդեււաւայրի նպատակն է սլահպանել կովկասյան բնությունն իր ամբողջ բուսական և կենդանական աշխարհներով:

Այստեղ ապրում են վարազներ, յեղջերուներ և հովազներ: Բարձր լեռներում սլատահում են լեռնային այծեր: Ժայռերում և անմատչելի ձերպերում բուն են դնում արծիվները:



Գոմեշները բևռ են տեղափոխում

Վորպես բանող անասուններ, ծովափին սլահում են գաւեշներ: Սրանք ուժեղ կենդանիներ են, վորոնք կարողանում են ծանր բեռներ փոխադրել նույնիսկ լեռներում: Գոմեշները կարող են ապրել միայն տաք կլիմա ունեցող յերկրներում: Նրանք ծածկված են հաստ, համարյա բոլորից զուրկ կաշվով:

Առաջադրութիւններ.— Ղրիմի հարավային ծովափի կլիման համեմատեցե՞ք Կովկասի Սեծովյան ափերի կլիմայի հետ:

Ինչո՞ւ Կովկասյան ծովեղերի բուսականութիւնն ավելի հարուստ է Ղրիմի բուսականութիւնին:

ԾՈՎԵՋՆԵՐՔԻ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Կովկասյան Սեծովյան յեղերքին ապրում են կովկասյան ժողովուրդները՝ արխազներ, աչարացիներ, վրացիներ:

Ծովեղերքի մեծ մասը բռնել են արխազները և աջարացիները: Արխազների զլխավոր զբաղմունքը յերկրագործութիւնն է: Նրանք ցանում են յեղիպտացորեն, մշակում են նաև խաղող: Բայց լավ մշակած խաղողի այլիններ քիչ կան: Խաղողի վորթը սովորաբար աճում է աղատ, փաթաթվելով ծառերին: Արխազների զյուղերը ցրված են առանձին-առանձին դաստակերտների ձևով, վորոնք շրջապատված են խաղողի և մրդի այլիններով և յեղիպտացորենի արտերով: Տները հյուսված են ճիւղտներից կամ չինված են տախտակներից, շրջապատված են պատշգամբներով և դրված են սյուների վրա:

Այստեղ կարելի յէ ապրել և առանց տաք տների:

Աջարացիք ապրում են ծովեղերքի հարավային և հարավարևելյան մասում, ընդհանուր առմամբ ունեն նույն կենցաղը, ինչվոր արխազիք:

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ԿՈՎԿԱՍԻ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՋՆԵՐՔԻ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՏՆՏՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ ՆՐԱՆՅ ԿՅԱՆՔԸ

Ծանր էր Կովկասի Սեծովյան յեղերքի ժողովուրդների վրանքը ցարական Ռուսաստանում:

Յարական կառավարութիւնը տիրեց կովկասյան ժողովուրդներին և զենքի ուժով դրավեց ամենալավ հողերը:

Արխազներն ամենից ավելի մեծ դիմադրութիւն ցույց տվին Կովկասին տիրապետելու ժամանակ: Տասնյակ տարիներ նրանք համառ կռվում էին ցարական կառավարութիւնի դեմ, վերջապէս ստիպված յեղան անձնատուր լինել: Շատերը նրանցից մեռան զենքը ձեռքներին, իսկ մի քանի տասնյակ հազար մարդ էլ դաղթեց թյուրքիա:

Ավերված հողերը ցարական կառավարութիւնի կողմից առատորեն բաժանվում էին սպաներին և չինովնիկներին:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո Սևծովյան յեզերքի բնակչության կյանքը նոր թափ ստացավ:

Այստեղ կաղամկերալվեցին կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ, վորտեղ մշակվում են թանդարժեք կուլտուրական բույսեր՝ բեյ, կիտրոն, նարինջ, մանդարին, զանազան տեխնիկական և դեղատու բույսեր:

Գետերի հովիտներում աճել են շատ դործարաններ: Անց են կացված նոր խճուղիներ և յերկաթուղիներ դեպի ծովեզերքի խորքերը:

Համարյա ամբողջ բնակչությունը զբաղեցնում է կառուցված են բաղամթիվ ուսումնական հիմնարկներ, վորտեղ դասավանդումը կատարվում է բնակչության մայրենի լեզվով:

Ծովեզերքի պալատներն ու ամառանոցները վեր են ածվել անապատի տներին: Կառուցվում են նոր սանատորիաներ և հիվանդանոցներ:

Կովկասյան ծովեզերքը ՍՍՀՄ-ի ծաղկած անկյունն է:

Ամբողջ ծովեզերքով խճուղի յե անցնում: Գեղեցիկ վուորաններով նա մերթ իջնում է դեպի ծովը, մերթ բարձրանում լեռները, կամ կամուրջներով անցնում է բաղամթիվ լեռնային գետերի վրայով: Ամբողջ ճանապարհի յերկայնքով ձգվում են մրդի և խաղողի այգիներ, ծխախոտի պլանտացիաներ, արմավենիներ և կիպարիսների պարկեր, գեղեցիկ սանատորիաներ և հանգստի տներ:

Խորհրդային իշխանությունը խնդիր է դրել Կովսիդայի դաշտավայրն իր ճահիճներով և անանցանելի անտառներով դարձնել ծաղկած այգի:

ԿՈԼԽԻԴԱՅԻ ՀԱՀԻՃՆԵՐԸ ԾԱՂԿԱԾ ԱՅԳԻ ԿԴԱՌՆԱՆ

Կովսիդայի հարթությունը դռնվում է Բաթումիից դեպի Հյուսիս-արևելք:

Քարեզի վրա գտե՛ք Կովսիդայի դաշտավայրը:

Դեռևս քիչ առաջ Կովսիդայի դաշտավայրը ծածկված էր խրոտ ճահճուտներով և անանցանելի անտառներով, վոչ ճանապարհներ կային, վոչ հարմար արահետներ:

Մարդիկ իրար հետ հաղորդակցություն էյին պահպանում գետերի միջոցով: Նոսր բնակչությունը բնակություն էր հաստատել ավելի բարձր տեղերում: Փոքրիկ հողամասերը բռնված էյին յեղիպտացորենով և խաղողով: Բնակիչները հիվանդանում էյին տենդով: Նրանք շարունակ պայքար էյին մղում անտառների դեմ, վսրոնք առաջ էյին շարժվում դեպի վարելահողերը, և գետերի դեմ, վորոնք վարարման ժամանակ սպառնում էյին վոչնչացնել ցանքերը:

Այժմ Կովսիդան արագորեն փոխվում է:

Անանցանելի ճահճները չորացվում են առուների խիտ ցանցի միջոցով: Անց են կացվում ճանապարհներ: Կտրվում են սակավարժեք անանցանելի անտառները:

Այժմ արդեն ճահճներից խլված է մի քանի հազար հեկտար հող: Յեվ այնտեղ, վորտեղ քիչ առաջ ճահճուտներ էյին, այժմ մշակվում են թանդարժեք բույսեր: Յերևան են դալիս նարնջի, կիտրոնի և մանդարինի ծառերի այգիներ, ավելի ու ավելի յե ընդարձակվում թեյի պլանտացիաների տարածությունը, յերևան են դալիս կարեոր տեխնիկական բույսերի պլանտացիաներ:

ԹԵՅԻ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

Գնացքն արագորեն սլանում էր աղմկող Բաթումիից դեպի Չակվա: Մեր մոտով մեկը մյուսի հետևից անցնում էյին ծաղիկների մեջ թաղված տներ, թփերի և բարձր ծառերի խիտ մաքսուտներ, փաթաթված փշոտ լիանաներով: Ծառերի կոշտ, մուգ-կանաչ տերևները անձրևից թրջված փայլում էյին:

Աննկատելի կերպով անցանք 13 կիլոմետր: Դուրս յեկանք վազոնից:


Արմավենիների ծառուղին տանում է դեպի բամբուկի, մանդարինի և թեյի պլանտացիաները:

Մենք ուղևորվեցինք դեպի թեյի պլանտացիան... Վայրը բլրոտ էր: Բլուրների լանջերին կանոնավոր շարքերով տնկված էյին թեյի թփերը: Դրանք իրենց մուգ կանաչով սուր կերպով

Ջուրովում եյին կարմրավուն հողի վրա: Մի քանի հարյուր մարդ պոկոտում եյին թեյի վերին տերևները և դարսում կողովների մեջ:

Թեյի տերևներով լի կողովները փոխադրում եյին բնակիչ ալտոմորիլների վրա, վորոնք տեղափոխում են դա թեյի ֆաբրիկան:

Կովկասյան ծովափի թեյի պլանտացիաներն այժմ տասնյալ հազար հեկտար տարածութիւն են բռնում Կովկասյան ծովափին: Թեյ արտադրում են կոլեկտիվ և խորհրդային տնտեսութիւններում:



Թեյի պլանտացիայում

Կոլեկտիվ տնտեսութիւններին ոգնութիւն հասցնելու համար հիմնվել են հատուկ թեյի մեքենա-տրակտորային կայաններ: Խորհտնտեսութիւններում զործադրվում են ամենաբազմապիսի մեքենաներ:

ԲԱԹՈՒՄԻ

Բաթումին Միութեան կարևորագույն նավահանգիստներից մեկն է: Այստեղից արտասահման են փոխադրում նավթ, միրգ, մետաղ: Բաթումին արդյունաբերական և թանգարտեք մերձա-

բևագարձային բույսերի՝ թեյի, նարնջի, մանդարինի, կիտրոնի և ուրիշ չափ տեխնիկական բույսերի կենտրոնն է:

Վարժութիւն.— Կոնտուրային քարտեզի վրա նշեցե՛ք Բաթումի նավահանգիստը:


Արտադասյան աշխատանք.— Կազմեցե՛ք ալբոմ՝ «ԽՍՀՄ-ի մերձարևմտյան դարձային դոտի» թեմայով:

9. Լ Ե Ռ Ն Ե Ր

Լեռները ԽՍՀՄ-ում գտնվում են զլխավորապես ծայրամասերում:

ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա գտե՛ք Խրինյան, Ուրալյան, Կովկասյան, Ղրիմի, Ալտայան, Տյան-Շան լեռները և Պամիր լեռնաշխարհը:

Լեռները գտնվում են տարբեր դոտիներում: Ուրալյան լեռներն սկսվում են հեռավոր հյուսիսում՝ տունդրայի դոտում, տայգայի դոտով և սևահողային տափաստաններով ձգվում են



դեպի հարավ և վերջանում չոր տափաստաններում: Կովկասյան և Ղրիմի լեռները գտնվում են մերձարևագարձային և տափաստանների դոտիների միջև: Տյան-Շանի լեռները և Պամիր լեռ-

Նաշխարհը գտնվում են անապատների դոտու ծայրամասերում։ Վոր գոտում էլ գտնվելիս լինեն այդ լեռները, նրանց բնությունը բարձրության հետ փոխվում է— վորքան ավելի բարձր են լեռները, այնքան ավելի ցուրտ է լինում։ Բարձր լեռների գագաթները նաև ամառը ծածկված են հալերժական ձյունով և սառույցով։

Բարձրության հետ փոխվում է լեռների և՛ բուսականությունը, և՛ կենդանական աշխարհը։

ԽՍՀՄ-ի լեռները տարբեր բարձրություն ունեն։ Նրանցից ամենաբարձրը Տյան-Շանի լեռներն են։ Պամիրում գտնվում է ԽՍՀՄ-ի ամենաբարձր գագաթը՝ Ստալինի պիկ գագաթը, վորի բարձրությունն է 7½ կիլոմետր։

Քարտեզի վրա գտե՛ք Ստալինի պիկ գագաթը։

ԽՍՀՄ-ի Ֆիզիկական քարտեզին կցած աղյուսակի և նկարի միջոցով իմացե՛ք՝ 1) ի՞նչպես են կոչվում հիված լեռների ամենաբարձր գագաթնա՝րը, 2) նրանք վորտեղ են գտնվում։

Լեռները ձգվում են մեկը մյուսի հետևից և կազմում են լեռնաշղթաներ։ Բարձր լեռների գագաթները բարձրանում են ամպերից ել վեր։ Արևի ճառագայթների տակ չլացնող փայլով պըսպղում է հալերժական ձյունը։

Այսպիսի բարձրության վրա վրջ վրջ չի ասլրում։ Միայն արծիվներն են թռչում լեռնադագաթների մոտով։

Ձյունի դանդաղության ճնշման տակ ձյունապատ գագաթներից դանդաղորեն սահում են սառույցները։ Հեռից նրանք սառցադեպերի յեն նմանում։ Դրանք սառցադաշտերն են։

Հսկայական ուժով նրանք կոկում են ժայռերը, պոկում են քարեր և ժայռերի կտորներ են իրենց հետ ցած տանում։

Գահավիթելով ժայռերից՝ նրանք կտրտվում են, փչրվում և կազմում սառցակոշտեր, սառցասյուներ, սառցաժայռեր։


Սառցադաշտը դանդաղորեն ավելի ու ավելի ներքև է սահում։ Բոլորովին վերջում նրա տակից բղխում է լեռնային հեղեղ և հոսում գեպի ցած։ Աղմուկով և դղրդոցով գլորում է դա քարակույտերը։ Այսպիսի հեղեղներն ապառաժներում սեպածն լանջերով խոր կիրճեր են փորում։

Այդպիսի կիրճերի միջով հաճախ կատաղի հեղեղներ են հոսում։ Ամեն մի սառցադաշտից մի այդպիսի հեղեղ է առաջ

գալիս։ Յեվ այդ բոլոր հեղեղները գահավիթում են գեպի ցած՝ դեպի հովիտները։

Լեռնաշղթաներն անմատչելի յեն թվում։ Բայց մարդիկ այստեղ նույնպես բնակություն են հաստատել։ Լեռնցիների գյուղերը ցրված են լեռնալանջերում և հովիտներում։ Բարձր լեռները բաժանում են գյուղերն իրարից։

Լեռների գագաթների միջև պատահում են ցածր տեղեր, վորտեղով լեռնցիներն անցնում են լեռնաշղթան։ Այդպիսի տեղերը կոչվում են լեռնանցքներ։ Լեռնանցքների վրայով անցնում են ճանապարհներ, վորով գյուղերը կապվում են իրար հետ։



Կիրճ Կովկասում

ԿՈՎԿԱՍԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

ԼԵՌՆԵՐԻ ՍՏՈՐՈՏԵՐՈՒՄ.— Մենք վորոշեցինք բարձրանալ Կովկասի ամենամեծ սառցադաշտերից մեկը։ Հավաքվեցինք Նախչիկում, վորը գտնվում է Կովկասյան լեռների ստորոտում։ Ամառային մի շոգ որ եր։

Վարդերը ծաղկել էյին, դաշտերում լցվել եր յեղիպտացորենը, բոստաններում հասունանում էյին սեխն ու ձմերուկը։ Այգիներից կոզովներով շուկա էյին տանում խաղող, ծիրան, խընձոր, տանձ։ Լեռնալանջերը ծածկված էյին հաճարի խիտ անտառներով։ Հաճարի անտառներից բարձր սեխն էյին տալիս յենդենու անտառները։ Ավելի բարձր կանաչին էյին տալիս ալպյան մարգագետինները, և գառիթափ բարձրանում էյին անմատչելի ժայռերի պատերը։ Իսկ ամենաբարձրում կասլույտ յերկնակամա-

ըի վրա յերևում էյին ձյունապատ դադաթները: Տարրերնակ եր թվում, վոր տարվա այս շոգ յեղանակին լեռները ծածկված են ձյունով:

ԴԵՊԻ ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ.— Յերկու որվա ճանապարհ անցանք: Հաճարի անտառները մնացին ներքևում: Յեղևնու անտառներն սկսեցին նոսրանալ: Լեռնային արահետը սաստիկ վողոցված եր: Յածում մեր տակն աղմկում եր անտեսանելի հեղեղը: Մեր դշխավերսը դեպի վեր էյին ձգվում ահռելի ժայռեր: Տեղ-տեղ արահետը ջրից վողոցվել ու քանդվել եր: Մեր եղբրը, բարձած շորերով, վրաններով ու ուտելիքով՝ հաղիվ էյին քաշ ալիս իրենց վոտքին ու շուտ-շուտ սայթաքում էյին: Մեր ուղեկիցները շարունակ բռնում էյին նրանց, վոր նրանք անդունդը չգլորվեն:

Գլխապտուկա բարձրության վրա նեղ արահետով կատարվող յերկար վերելքը բոլորիս սաստիկ հոգնեցրեց:

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐՈՒՄ.— Վերջապես մենք մտանք մի վառ-կանաչ հովիտ, վորտեղ հոսում եր կատաղի հեղեղը: Հարժար արահետը դալարվում եր խիտ խոտով ծածկված մարգագետինների միջով: Վոտքներիս տակը թաց եր, առունները քչքչում էյին: Այդ խոտհարքների արհեստական վոռոգումն եր: Վոռոգման շնորհիվ և միայն, վոր այստեղ աճում են վառ, խոշոր, հոտավետ ծաղիկներ ունեցող հյութալի խոտեր: Մենք յերկար դնացինք այդ արոտավայրով, անընդհատ բարձրանալով վերև:

Բայց ահա սկսեցին յերևալ ահռելի քարեր և ժայռեր: Խոտերը կարճացան: Դրանց մեջ յերևում են մեծ, պայծառ ծաղիկները, վորոնք ցողունիկներ համարյա չունեն:

Հանկարծ մեր առաջ, կարծես գետնի տակից, դուրս յեկավ հովիվ պապը: Շուտով մայուն լավեց, և վոչխարները հետաքրքրությամբ չըջապատեցին մեզ: Ծերունին մեղ տարալ իր բնակարանը: Լեռներից ընկած հսկայական քարը, դեմ առնելով ուրիշ քարերի, բնակարանի համար ծառայում եր թե իրրև պատեր և թե իրրև առաստաղ: Այս այրի ներսը փռված էյին վոչխարի մորթիներ, փայտե դուլները լիքն էյին մածնով և պանրով: Այստեղ պապն ամբողջ որերով սպասում է արածող հոտի վերադառնալուն դառնարածների հետ և մեծ վարպետությամբ

փայտե դղալներ ե շինում: Մենք այստեղ գիշերեցինք, վորպես-դի նոր ուժով շարունակենք մեր վերելքը:

ՍԱՌՅԱԴԱՇՏԸ.— Դեռ լույսը չբացված, դարթնեցինք: Մառախուղը նոսրացել եր և մենք տեսանք սառցադաշտը: Սառցադաշտի ծայրի սառցե այրի միջից դուրս եր վաղում կատաղի գետը:

Առավոտը պարզ եր, և մենք ուղեվարվեցինք դեպի սառցադաշտի սկիզբը:

Սառցադաշտի մակերևույթի վրա ցրված էյին մեծ ու փոքր քարեր, քչքչալով հոսում էյին բաղմաթիվ առուններ, վորոնք աղմուկով ծածկվում էյին սառցադաշտի խոր ճեղքերի մեջ:

Սառույցը և չըջապատող ձյունապատ դադաթներն այնպես շլացուցիչ կերպով էյին հուրհրատում, մեր շուրջը հեղեղված եր լույսի և կայծերի այնպիսի ծովով, վոր մենք ստիպված յեղանք մութ ակնոցներ դնել:

Յերեք ժամ հետո մենք գտնվում էյինք սառցե պատի մոտ և հիացած կանգ առանք:

Ճանապարհի բոլոր դժվարությունները մոռացանք:

Սառցով և ձյունով շղթայված անմատչելի քարե պատից անդադար դղրդում էյին ձյան հյուսերը և սառցի փլվածքները: Իսկ վոտքներիս տակ փռվում եր հսկայական սառցադաշտը: Ամբողջ սառցադաշտը կտրտված եր անհաշիվ ճեղքերով ու փոսերով, այստեղ-այնտեղ կանգնած էյին յերկնադույն սյուներ, վորոնք անընդհատ շարժումից յերբեմն ընկնում էյին և փչրվում:

ԱՄՊԵՐԻ ՄԵՋ.— Շլացած տեսարանի վեհությամբ, մենք դեռ յերկար կկանգնեյինք այստեղ, բայց ցածից մեզ վրա յեր արչավում մառախուղի ալեծուփ ծովը: Մենք սկսեցինք ցած իջնել սառցադաշտից և մի քանի բուլեյից հետո դտնվում էյինք սպիտակ մառախուղի մեջ: Միանգամից ցրտեց: Մենք հաղիվ էյինք իրար տեսնում սառցադաշտի վրա:

Սառցադաշտի վրա մնալը վտանգավոր եր: Կարելի յեր գլորվել ճեղքերի մեջ:

Մենք սկսեցինք խարխալելով իջնել սառցադաշտից: Հանկարծ ամպերը նոսրացան, պատուվեցին, և մենք բարձր ափին,

ուղղակի մեղքն ցած, տեսանք վրաններ և մեր ուղեկիցները
զեմքերը: Վրանի մոտ վառվում և խարուկը:

ԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂ ԿՈՎԿԱՍՈՒՄ. — Իրիկնամուտ և: Լեռ-
նային ամառնային արոտատեղերից իջնում եյին տղամարդիկ և
կանայք: Նրանք իրենց ուսերի վրա տանում եյին տիկեր՝ լցված
մածնով, այրանով:

Արահտից, վորով մենք գնում եյինք, բացվեց աուլի (լեռ-
նային գյուղի) տեսարանը: Աուլի մեջտեղում բարձրանում և
կիսավեր հին աշտարակը: Նրա կողքին կանգնած և մի նոր
մեծ տուն, վորի լուսամուտները մայր մտնող արևի ճառա-
գայթներից փայլում եյին:

Ցած իջնելով Խանք մի այնպիսի նեղ փողոց, վորտեղից
յերկու բեռնված ավանակ հաղիվհաղ կարող եյին անցնել: Ցած-
լիկ սակլաները, վոր շինված եյին տարբեր մեծության քարե-
րից, իրենց փոքրիկ լուսամուտներով փողոց եյին նայում: Տա-
փակ կոտուրների վրա քամուց ոռորվում և խոտը:

Շուրջանցքի մյուս կողմում սկսվում ևր ուրիշ՝ լայն փողոց:
Այստեղ չարք եյին կանգնել վերջերս կառուցված տները: Մեծ
խանութի դռների մոտ կանգնած ևր բեռնատար ավտոն, վոր աուլ
ևր բերել ամեն տեսակի ապրանքներ: Խանութի դիմաց գտնվում
ևր յերկու հարկանի շենք: Սրա առաջին հարկում տեղավորվել
ևր խոտող կինոն, յերկրորդ հարկում՝ գրադարանը: Բազմու-
թյունն ազմկելով սպասում ևր կինոյի սյանի սկսվելուն: Փո-
ղոցում արդեն վառվում եյին ելեկտրական լամպերը:

Ահա և դարոցը, վորտեղ մենք մտադրվել եյինք դիչերել:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ

Յարական դորքերը հեռու լեռներ եյին քել Կովկասի լեռն-
ցիներին: Նրանց գյուղերը ցրված են լեռնալանջերի վրա և
գետահովիտներում: Անանցանելի ձյունները և անմատչելի
թաղերը բաժանում են մի ժողովուրդ մի ուրիշից: Յուրաքան-
չյուր փոքրիկ ժողովուրդ շատ դարերի ընթացքում ապրել և իր
առանձին կյանքով: Հենց հեղափոխությունից առաջ նրանց
կյանքը նույնն ևր, ինչ վոր մի քանի դար առաջ:

Հեղափոխությունը լեռնային ամենահետամնաց ժողովուրդ-
ներին արթնացրեց նոր կյանքի համար:

ՍՎԱՆԵԹԻԱՅՈՒՄ

Լեռների խորքում ընկա՜ և մի փոքրիկ յերկիր— Սվանե-
թիան: Նա ամբողջ աշխարհից կտրված և անմատչելի լեռներով:
Նեղ, վտանգավոր արահետ և անցնում սեպածե ժայռի վրա-
յով, կատաղի գետից բարձր: Միայն այս արահետով սվաններն
առաջ ամառ ժամանակ կարողանում եյին կապվել մնացած աշ-
խարհի հետ, իսկ ձմեռը հաղորդակցությունը բոլորովին կտր-
վում ևր:

Այս փոքրիկ ժողովուրդը, վոր բաղկացած և ընդամենը 11
հազար մարդուց, մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ
հեղափոխությունը սահպանում ևր իր հին կենցաղը և նախնա-
կան տնտեսությունը:


Սվանները մեծ ջանասիրությամբ մշակում եյին իրենց փոք-
րիկ արաւերը: Բայց առաջ նրանք ունեյին ամենանախնական
զործիքներ. գութանի փոխարեն մի ծառի բուն՝ դեպի ցած
ծռած արմատով, վորին հագցրած ևր խոփ. տախանի փոխարեն՝
մի գերան, վորի վրա ցցված եյին ճյուղեր, կալսող մեքենայի
փոխարեն՝ տախտակ (կամ)՝ վրան քարեր, վոր յեղնները խուր-
ձերի վրայով քաշ եյին տալիս: Սվանեթիան չգիտեր, թե անի-
վըն ինչ բան և. հնձած հացը և խոտը սահանկներով եյին
կրում, իսկ մարդիկ բեռները տանում եյին լեռներով՝ վստքով
կամ ձիով: Բաջի ձիու և վորտորդական արահետներից, Սվա-
նեթիայում ուրիշ ճանապարհներ չկային:

Սվանները սաստիկ սնտրիապաշտ եյին: Սրբազան պուրակ-
ները, սրբազան ծառերը և աղբյուրները, սրբազան կենդանիներ-
ը, չար և բարի վուդիները, լուսինն պաշտելը, աշխատանքից
առաջ դոհ մատուցելը—հնության այս բոլոր մնացորդները
մեծ վնաս եյին հասցնում սվանների տնտեսությանը:

Բայց ամենավատն արյան վրեժն ևր:

Վիրավորանքի կամ սպանության համար բոլոր ազգական-
ները վրեժ եյին լուծում վիրավորողի ազգականներից շատ
սերունդների ընթացքում: Արենպարտները կարող եյին մահից
ազատվել միայն այն դեպքում, յեթե թողնեյին իրենց հայրե-
նիքը:

Այդպես ելին ամբողջ աշխարհից կտրված սվանները մինչև Մեծ Հոկտեմբերը:



Դյուղ Սվանեթիայում

Տնտեսական շինարարությունն այժմ յուրաքանչյուր տարի, յուրաքանչյուր ամիս փոխում է Սվանեթիայի կյանքը: Սվանեթիան, ազատվելով իշխաններից, հարձակումներից և ավերումներից՝ այժմ շտապում է հասնել կուլտուրական ժողովուրդներին:

Աշտարակների և ծխոտված, անլույս, ողազուրկ հին տների կողքին բարձրացել են նոր, լուսավոր տներ վառարաններով և պատուհաններով: Սվանեթիայի գլխավոր դյուղում վառվեցին ելեկտրական լապտերները, շինված է Սվանեթիայում առաջին և մեծ բաղնիքը: Բացված են կոոպերատիվ, հասարակական ճաշարան:

Ամբողջ յերկիրը ծածկվել է դպրոցների, հիվանդանոցների, անասնաբուժական կետերի ցանցով: Բավական թվով սվաններ են

առվորում խորհրդային տեխնիկումներում և համալսարաններում:

Սեծուլյան յեղերքից սկսած խճուղի յե կառուցված, վորով յերթեկեկում են ավտոմոբիլները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՍԻՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո Կովկասյան ժողովուրդները կազմակերպեցին մի քանի հանրապետություններ: Այսպես Անդրկովկասում հիմա յերեք դաշնակից հանրապետություններ կան՝ Վրացական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ:

Ամբողջ Կովկասում ծավալվել է շինարարությունը: Այց են կացված նոր խճուղիներ: Հիմա խուլ աուլներն ել մշտական կապ ունեն մյուս դյուղերի և Միության քաղաքների հետ:

Ստեղծվում է նոր տնտեսություն:

Լեռնային կատաղի դետերը, վոր առաջ միայն քչում տանում ելին կամուրջները, քանդում ելին ափերը և ավերում դյուղերը, այժմ սկսում են աշխատել մարդկանց ողտին:

Սրդեն կառուցված են բազմաթիվ հիդրոէկայաններ:

Այս կայանների կառուցումը տնտեսական խոշոր նշանակություն ունի:

Հիդրոէկայաններն եներգիա յեն տալիս ամբողջ շրջանի արդյունաբերությանը: Առաջանում են նոր արտադրություններ: Լեռնցիք դառնում են արդյունաբերական բանվորներ: Զարգանում է տեքստիլը: Ելեկտրական լույս է վառվում լեռնային աուլներում:

Լեռների ընդերքում շատ հարստություններ կան՝ դանազան հանքեր, քարածուխ, թանգազին քարեր և, վերջապես, նավթ:

Դարերով ընկած ելին այս հարստությունները մարդկանց աչքից հեռու: Պետք եր հետախուզական մեծ աշխատանք թափել և ուսումնասիրել լեռների կազմությունը, վորպեսզի այդ հարստությունները յերեկան բերվեյին:

Յեկ ահա հիմա խուլ, անմատչելի կիրճերում, ձյան և սառ-
ցադաշտերի մոտ, ամբողջ Կովկասում աշխատում են ինժեներ-
ների և գիտնականների հետախուզական խմբերը: Նրանք շա-
ղափում— ծակում են քարերը և հանում լեռնային տեսակների
նմուշներ: Յերբ գտնվում ե մի չերտ, վոր հարուստ ե վորևե
ողտակար հանածոներով, անմիջապես կառուցում են հանքահո-
րեր և գործարաններ:

Շատ ոգտակար հանածոներ են գտնվել Կովկասում: Բայց
և այնպես դեռ անբավարար են ուսումնասիրված Կովկասյան
լեռները:

Նրանց ծոցում դեռ չատ հարստություններ են թաղնված:

ՈՒՐԱԼՅԱՆ ԼԵՌՆԵՐԸ

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսից դեպի հարավ 2500
կիլոմետր տարածության վրա ձգվում ե վոչ բարձր Ուրալյան
լեռնաշղթան:

Քարտեզի վրա գտեք Ուրալյան լեռները:

ՅԵՐԿԱԹՈՒՂՈՎ ՈՒՐԱԼՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱՅԻ ՎՐԱՅՈՎ.—
Ուֆա կայարանում փոքր ինչ կանդ առնելուց հետո գնացքն
սկսում ե դանդաղորեն բարձրանալ լեռները: Հովտում աղմկում
ե լեռնային գետը: Նրա վրա կախվել են ուղղաձիգ ժայռերը:
Լեռնալանջերը ծածկված են անտառներով: Պարզ ու վորոշակի
աչքի յեն ընկնում յեղենիների սուր կատարները: Տեղ տեղ պա-
տահում են բացառները, վորոնք ծածկված են լեռների դադաթ-
ներից թափված քարերով:


Ուրալյան լեռները սաստիկ քայքայվել են: Սառնամանիք-
ներից, ջրից ու քամուց նրանց դադաթները ճաքճքվել են և
փշրվել, թափվել: Ուրալյան լեռներում չկան վոչ բարձր դա-
դաթներ, վոչ խոր կիրճեր:

Ահա վորտանի յետևը յերևում ե գործարանը:

Գնացքը դանդաղեցրեց իր ընթացքը, ձգվում ե թեք լանջի
յերկայնքով, կիսաշրջան ե գծում: Մենք բարձրանում ենք հենց
լեռնանցքը:

Ներքևում յերևում են գործարանի և մեր նոր թողած կա-
յարանի կրակները:

Շոգեքարչն աղմուկով բաց ե թողնում գոլորշու քուլաներ:
Անտառը լուսավորվում ե շոգեքարչի բոցով:




Արդեն դիչեր ե, բայց ուղեորները դեռ չեն ընել: Մենք լեռ-
նանցքում ենք գտնվում՝ Յեվրոպայի և Ասիայի սահմանում:
Հանկարծ յերևաց քարե մի սյուն՝ Յեվրոպա-Ասիա մակադրու-
թյամբ:


Մի քանի րոպե ետ, և գնացքն սկսում ե արագորեն ցած
իջնել: Գնացքը հեռզհետե արագացնում ե իր ընթացքը, անց-
նելով ժայռերի, անտառոտ լանջերի մոտով, իր հետևը թող-
նելով Ուրալյան լեռների վոչ բարձր դադաթները: Մեր առաջ
այժմ բացվում են տափաստաններ, հացարույսերի արաներ:

Ուրալն արդեն մնացել ե մեր հետևը:

Ուրալյան լեռներն իրենց հարստութիւններով վաղուց արդեն հայտնի էին: Ուրալի ընդերքում գտնվում են մեծ քանակությամբ հանքեր:



Պուլթյամբ վոսկու, պղնձի և յերկաթի հանքեր: Բայց այդ արդյունաբերական գոտիում չկան զանազան անհրաժեշտ բաներ:



Նոր գործարան Ուրալում

Հագին հարստութիւնների ճիշտ ոգտադործումն սկսվել է միայն խորհրդային ժամանակներում: Ուրալում յերևան են գալիս և արագ զարգանում նոր գործարաններ:

ՄԱԳՆԻՏՈԳՈՐՍԿ

Ուրալյան լեռների հարավային մասում՝ Ուրալ գետի վերին հոսանքի մոտ գտնվում է Մագնիտոսլայա լեռը: Նա համարյա ամբողջապես բաղկացած է ամենահարուստ յերկաթահանքից: Հանքն այստեղ գտնվում է ուղղակի յերկրի մակերևույթի վրա:

Հեղափոխութիւնից առաջ Մագնիտոսլայա լեռան հանքերը ձեռքով էին մշակում, և միայն լեռան մակերևույթից հանքը ձիւրով էին տեղափոխում: Մագնիտոսլայա լեռան մերկ լանջերը ծածկված էին բարձրնյակով:

Այժմ Մագնիտոսլայա լեռան մոտ յերկու տարվա ընթացքում անեց մի նոր քաղաք՝ Մագնիտոգորսկը: Կառուցվեց զիզանտ մետալուրգիական գործարան: Կառուցվել են աշխարհում յերկաթահանքի ձուլման խոշորագույն դոմնաները: Այստեղ աշխատում են հազարավոր բանվորներ: Լեռան լանջին մշակում են յերկաթահանքը:

Լսվում են խրացնող պայթյուններ, և տասնյակ հազարավոր տոնն հանքը պոկվում է յերկրի ընդերքից: Հզոր եքսկավատորները հավաքում են հանքը և լցնում զնացքը՝ գործարան ուղարկելու համար:

Գործարանում ամեն ինչ մեքենայացված է, այստեղ աշխատում են ժամանակակից ամենալավ մեքենաները: Գործարանի վոդքին կառուցված է յերեք ելեկտրոկայան:

Ելեկտրական եներգիւյով շարժվում են կախովի ճանապարհը, հազարավոր մանր և խոշոր մեքենաներ: Մեկ կիլոմետր յերկարութիւն ունեցող ամբարտակը կտրել է Ուրալ գետի առաջը և պահում է գերի վերցրած ջուրը:

Յերեք ելեկտրոկայանի ստորոտում ծվում են նոր, ահագին լճի ալիքները:


Մագնիտոգորսկի չրջակայքում դարդանում է նոր դյուղատնտեսությունը: Բլուրների մերկ լանջերը կանաչապատվել են բանջարանոցային կուլտուրաներով:

Մագնիտոգորսկն ավելի շատ յերկաթ է տալիս, քան Յեկոպայի ամենախոշոր դործարանները:

Բայց Մագնիտոգորսկի դործարանը քարածուխ չունի:

Իսկ Կուզնեցկի ավազանում, Ալտայան լեռների մոտ, քարածխի հսկայական պաշար կա, իսկ հանք քիչ կա:

Այդ պատճառով ել Մագնիտոգորսկը միավորված է Կուզբասի հետ և կազմել է Ուրալ-Կուզնեցկի կոմբինատը. Կուզբասը Մագնիտոգորսկին քարածուխ է տալիս, իսկ Մագնիտոգորսկի




Մագնիտոգորսկի դործարանի դամբանները

յերկաթահանքը փոխադրվում է Կուզբասի արդյունաբերական կենտրոնը— Ստալինսկ:

Վարժություններ.— Ուրվագծային քարտեզի վրա նշեցե՛ք ԽՍՀՄ-ի դըլափոր լեռնաշղթաները:

Նշեցե՛ք ողտակար հանածոների հանույթի դլափոր տեղերը:

Ուրվագծային քարտեզի վրա նշեցե՛ք Մագնիտոգորսկ և Ստալինսկ քաղաքները:



Ստալինսկ քաղաքը

ՆԱՎԹԻ ՀԱՆՈՒՅԹԸ

Կասպից ծովի արևմտյան ափին մի փոքրիկ թերակղզի կա: Նա ընկած է Կովկասյան լեռների ստորոտում: Ամառներն արևը վողողում է կուրացնող լույսով: Թերակղզու վրա սաստիկ չող է լինում:

Շուրջն ամեն ինչ մերկ է: Յերբեմն միայն պատահում են տեղեր, ծածկված չոր և փոշոտ բարձրանյակով: Կասպից ծովի պղտորավուն ջրերն աչքի համար հաճելի չեն. ծովը նույնպես տրտում է, ինչպես և ամալի ծովափը: Բայց ի՞նչն է պատճառը, վոր այս ամալի թերակղզու վրա փովել է հսկայական Բալու քաղաքը, բաղմաթիվ յերկաթուղիներ են դցվել, յերկար

չարաններով ձգւում են տարանքատար դնացքներ, շարժւում են մոտորները:

Ինչո՞ւ այստեղ այդպիսի կենդանութիւն է տիրում:

Իրա սրտատախտնը տալիս է այն վիշկաների տնտառը, վորոնք մեկը մյուսի հետեւից բարձրանում են թերակղզու ավին: Այստեղ նալթ է ստացւում:

Ահա և ամանը: Դեռես քիչ առաջ այստեղ մերկ տախտատաներ, իսկ այժմ այստեղ գեղեցիկ շենքերում ապրում են հաղաբաւոր նալթարդյունարեբող բանւորներ:

Ամենից շատ նալթ ստացւում է Բագլի, Գրոզնու շրջանայրում և Մայկոպում:

Քարտեղի վրա ցույց տվե՛ք այդ քաղաքները:

Բագլի նալթահանքերից նալթը խողովակներով վտխադրւում է Բաքումի նալթահանդիստը: Մի ուրիշ նալթամուղ միացնում է Գրոզնի քաղաքը Տուապսեյի հետ:

Ստացւած նալթը դործ է անում վոչ միայն Միութեան մեջ: Խորհրդային նալթն արտահանւում է արտասահման:

Տուապսեն և Բաքումին Սեծովյան այն կարևոր նալթահանդիսաներն են, վորտեղից մեր նալթն արտահանւում է:

Քարտեղի վրա ցույց տվե՛ք այդ քաղաքները:

Այստեղ կանգ են առնում զանազան պետութիւնների դրոշակներով բազմաթիւ նալթատար նաւեր: Նրանք լցւում են խորհրդային նալթով և Սև ու Միջերկրական ծովերով տանում են այն յերկրները, վորոնք նալթ չունեն:

Առաջադրութիւն.— Քարտեղի վրա ցույց տվե՛ք, թե նալթը Բաթումիից ի՞նչ ճանապարհներով է հասնում Ֆրանսիա և Իտալիա:

Վարժութիւն.— Ուրվագծային քարտեղի վրա նշեցե՛ք Բազու, Գրոզնի և Տուապսե քաղաքները:

Արտադասյան աշխատանք.— Կաղմեցե՛ք ալբոմ՝ «ԽՍՀՄ-ի լեռները» թե՛ մայրի:

III. ԽՍՀՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Նայեցե՛ք ԽՍՀՄ-ի վարչական քարտեղին: Դուք նրա վրա կտեսնեք տասնմեկ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն, վորոնք կամավոր միացել են և կաղմել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնը:

Ահա թե ի՞նչպէս են կոչւում այդ տասնմեկ միութենական հանրապետութիւնները.

Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիւ Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Մոսկւա: Նաև ամբողջ Խորհրդային Միութեան մայրաքաղաքն է:

Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Կիեւ:

Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Մինսկ:

Ադրբեյջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Բաքու:

Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Թբիլիսի:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Յերեւան:

Թուրքմենական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Աշխաբադ:

Ուզբեկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Տաշքենտ:

Տաջիկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Ստալինաբադ:

Ղազախստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Ալմա-Աթա:

Կիրգիզական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն: Մայրաքաղաքը՝ Ֆրունզե:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնը վոչ միայն կամալոր է, այլև ժողովուրդների յեղբայրական միութիւն է: Չկա մեկ ժողովրդի շահագործում մյուսի կողմից, ինչպես ցարական Ռուսաստանումն էր: Բոլոր ժողովուրդները ԽՍՀՄ-ում իրավահավասար են:

Քարտեզը վրա գտն'ք Միութենական Հանրապետութիւններից յուրաքանչյուրը և նրա մայրաքաղաքը:

2. ԽՍՀՄ-Ի ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԸ

Միութեան հսկայական տարածութեան վրա շուրջ 170 միլիոն մարդ է ապրում:

Իր բնակիչների թվով ԽՍՀՄ-ն բռնում է յերրորդ տեղը յերկրագնդի բոլոր պետութիւնների մեջ:

ԽՍՀՄ-ի բնակչութիւնն իր ազգային կազմով շատ բազմազան է: Խորհրդային Միութեան մեջ ապրում են շատ տարբեր ժողովուրդներ: Նրանք իրարից տարբերվում են իրենց լեզվով, տնտեսական ու կենցաղային առանձնահատկութիւններով:


Քարտեզի վրա գտն'ք, թե վրտեզ են ապրում ձեզ հայտնի ժողովուրդները:

Յարական Ռուսաստանում վաճառականները և չինովնիկները դիշատչորեն կողոպտում էին հեռավոր ծայրամասերի հետամնաց ժողովուրդներին: Ռուսները գերիշխող ազգութիւն էին: Ռուսական ցարական չինովնիկները կառավարում էին ԽՍՀՄ-ում բնակվող բոլոր ժողովուրդներին: Ռուս լեզուն բոլոր պետական հիմնարկութիւնների լեզուն էր: Դպրոցներում յերեւիտներին սովորեցնում էին միայն ռուսերեն լեզվով:

Ազգութիւնների մեծ մասը չունէր սեփական դիր ու այրութն:

Ճնշված ժողովուրդներին իրենց գլխավոր թշնամու—բռնակալութեան դեմ մղվող կովից հեռու պահելու համար ցարական կառավարութիւնը մի ազգութիւնը զրգոում էր մյուսի դեմ:

Վոչ ռուսական ծագում ունեցող աշխատավորների իրավադրկութիւնն ու զաղանային կողոպտութեան քայքայում էին նրանց տնտեսութիւնը, աղքատացնում նրանց:



Վորտեզ են ապրում ԽՍՀՄ զանազան ժողովուրդները

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութիւնն ազատեց Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին և նրանց դարձրեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան իրավահավասար անդամներ:

Միութեան ծայրամասերում արդյունաբերութիւնը և գյուղատնտեսութիւնը բռնեց թափով զարգանում են. զանազան ազգութեան ժողովուրդները մասնակցում են ԽՍՀՄ-ի սոցիալիստական տնտեսութեան կառուցմանը:

Բազմաթիւ նախկին վաճառուն ժողովուրդներ բնակութիւն են հաստատել նոր արդյունաբերական կենտրոնների շուրջը:

Արագ կերպով աճում է նաև ԽՍՀՄ ժողովուրդների կուլտուրան:

Նույնիսկ այն ժողովուրդները, վորոնք առաջ յեղել են հետամնաց և ամբողջութեամբ անգրագետ, այժմ ունեն իրենց դիրը և դպրոցները: Դասավանդումը կատարվում է մայրենի լեզվով:

Ահա այսպես Խորհրդային իշխանութեան որոշ փոխվում է Խորհրդային Միութեան ժողովուրդների կյանքը:

ԽՍՀՄ Ժողովուրդների կյանքն ու տնտեսությունը կառուց-
վում են Ստալինյան Սահմանադրության—Սորհրդային Միու-
թյան հիմնական որենքի հիման վրա: Դրանով ամրապնդված են
Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության բոլոր
նվաճումները:

Այդ որենքի համաձայն բոլոր հոգերը, բնական հարստու-
թյունները, ֆարրիկաները, գործարանները, հանքերը, յերկա-
թուղիները հանդիսանում են սոցիալիստական պետության սե-
փականությունը: Ամբողջ իշխանությունը պատկանում է աշ-
խատավորներին:

Իշխանության բարձրագույն որդանն է աշխատավորների
դեպուտատների Գերագույն Սորհուրդը, վորին ընտրում է
ամբողջ Ժողովուրդը:

Համաձայն Սահմանադրության ԽՍՀՄ բոլոր քաղաքա-
ցիներն ունեն աշխատուճի, հանգստի, կրթության, ծերության
հասակում ապահովման իրավունք:

ԽՍՀՄ աշխատանքի ընդունակ բոլոր մարդիկ պետք է աշ-
խատեն: «Ով չի աշխատում, նա չի ուտի»:

Կոմունիստական Կուսակցության և մեծ առաջնորդ ընկեր
Ստալինի իմաստուն ղեկավարությամբ Սորհրդային Միության
աշխատավորներն ուրախությամբ կառուցում են իրենց յարջանիկ
բանվոր կյանքը: Արթուն կերպով պահպանում են նրանք իրենց
Սոցիալիստական հայրենիքը թշնամիներից և բոլորը վորպես
մեկ մարդ վոտքի կենեն պաշտպանելու այն, յերբ անհրաժեշտ
լինի:

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԸ

1. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Բացի ԽՍՀՄ-ից յերկրագնդի վրա ուրիշ զանազան յերկր-
ներ ել շատ կան: Բայց միայն ԽՍՀՄ-ում է իշխանությունը
պատկանում բանվոր դասակարգին և աշխատավոր դյուղացիու-
թյանը: Միայն Միության մեջ է կառուցվում կոմունիզմ:

Մնացած բոլոր յերկրներում տեր ու տնորենը կապիտալիստ-
ներն ու կալվածատերերն են: Նրանց է պատկանում ամբողջ
իշխանությունը պետության մեջ, նրանց են պատկանում հոգերի
մեծ մասը, բոլոր ֆարրիկաներն ու գործարանները:

Այդ յերկրներում բանվոր դասակարգը և աշխատավոր դյու-
ղացիությունն աշխատում են կապիտալիստների և կալվածատե-
րերի համար:

Կապիտալիստներն ու կալվածատերերը չահադործում են
նրանց աշխատանքը՝ չահվելու, հարստանալու համար:

Բանվորների դրությունը կապիտալիստական յերկրներում
շատ ծանր է: Կապիտալիստները նրանց ստիպում են որական
10—12 ժամ աշխատել, ճնչին աշխատավարձ են տալիս, վորով
բանվորի ընտանիքը կարող է ապրել միայն կիսաքաղց: Գործա-
ղըրկությունը կապիտալիստական յերկրներում բանվորության
ամենասարսափելի պատիժն է: Միլիոնավոր բանվորներ յերկար
ժամանակ առանց աշխատանքի յեն մնում: Գործաղուրկներն ու
նրանց ընտանիքները աղքատության և սովի յեն մատնված:

Ավելի լավ չե դյուղացիների դրությունը: Հողի մեծ մասը
պատկանում է կալվածատերերին և կուլակներին, իսկ հարյուր
միլիոնավոր դյուղացիներ բավականաչափ հող չունեն իրենց ըն-
տանիքներին կերակրելու համար:

Բանվորները և գյուղացիները կապիտալիստական յերկրներում իրավազուրկ են: Յերբ նրանք պայքար են սկսում իրենց դրությունը լավացնելու համար, նրանց դեմ, կապիտալիստներին և կալվածատերերին պաշտպանելու համար, դուրս են դալիս վտտիկանությունը և դորքը: Բանվորական ժողովները ցրվում են, բանվորներին և գյուղացիներին ծեծում են, բանտ են նստեցնում, մահապատժի յենթարկում: Հատկապես ծանր և աշխատավորության դրությունը և մեծ և նրանց իրավազրկությունը Գերմանիայում, Իտալիայում և Ճապոնիայում, վորտեղ իշխանությունը պատկանում և նրանց վորտերիմ թշնամիներին՝ Փաշիստներին:

Այն պետությունները, ուր իշխանությունը պատկանում և Փաշիստներին, հարձակվում են թույլ յերկրների վրա, զավթում են դրանք: Փաշիստները թալանում են այդ յերկրների աշխատավորությանը, զաղանարար հաշվեհարդար են անում նրանց հետ: Նրանք հարձակում են նախապատրաստում խորհրդային Միության—ամբողջ աշխարհի աշխատավորների հայրենիքի դեմ:

Բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բոլոր կապիտալիստական յերկրներում համառ պայքար և մղում կապիտալիստների, կալվածատերերի և նրանց կառավարությունների դեմ: Բոլոր յերկրների առաջավոր բանվորները հասկանում են, թե Փաշիզմն ինչպիսի սպառնալիք և հանդիսանում աշխատավորների համար:

Նրանք միավորվում են Փաշիզմի դեմ պայքարելու համար, կազմում են աշխատավորների միասնական միջադրային ճակատ:

2. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Յերկրագնդի հինգ վեցերորդ մասը գտնվում և կապիտալիստների իշխանության տակ: Շահույթի յետևից ընկած՝ կապիտալիստները փնտռում են նոր տեղեր՝ իրենց ապրանքներն սպառելու, եթան հումույթ և եթան բանվորական ուժ ձեռք բերելու համար: Ուժեղ կապիտալիստական պետություններն այս նպատակով գրավել են բնությամբ հարուստ, բայց անպաշտպան յերկրները և այդ յերկրների պատճառով չարունակ պայքարում

են իրար դեմ: Այդ գրավված յերկրները գաղութներ են կոչվում: Կապիտալիստներն այնտեղ լրիվ տեր ու տնորեն են հանդիսանում:

Նրանք իրենց ապրանքները մեծ ողուտով սպառում են զաղութներում: Նրանք այդ յերկրների բոլոր բնական հարուստությունների տերն ու տնորենն են: Կապիտալիստները գիշատիչ կերպով կողոպտում են գաղութները և հումքն իրենց յերկրներն են տանում, քայքայում են բնիկներին և խլում նրանց հողերը, ստիպելով, վոր աշխատեն կապիտալիստների համար:

Կապիտալիստական պետությունների գրաված յերկրների մեծ մասը գտնվում և արևադարձային գոտում:

Նրանք ունեն տաք, շատ տեղերում խոնավ կլիմա, այդ պատճառով ել բուսականությունն այնտեղ շատ ճոխ և: Այստեղ աճում են մարդու համար շատ արժեքավոր բույսեր՝ կաուչուկատու ծառ, քինա-քինայի ծառ, հացի ծառ, կոկոսյան արմավենի, շաքարեղեղ, բանան: Մեծ բերք են տալիս սուրճի, կակաոյի, բրնձի, կաուչուկի պլանտացիաները: Այստեղ շատ կան նաև արժեքավոր ողտակար հանածոներ՝ անագի, արծաթի, պղնձի, հանքեր, վոսկի և նավթ: Կապիտալիստներն այս բոլոր բնական հարստությունները կողոպտում են և իրենց յերկրը տեղափոխում:

Գաղութային յերկրներում շատ զանազան ժողովուրդներ են ապրում:

Ծանր և զաղութային յերկրների բնակչության կյանքը: Աշխատանքից հրաժարվելու համար նրանց բանտ են նստեցնում: Չնչին զանցառության համար յենթարկում են մարմնական ծանր պատիժների: Հաճախ նրանց մտրակով այնքան են ծեծում, վոր նրանք ծեծից մեռնում են: Ծանր և մանավանդ ավերիկական նեղրերի դրությունը: Ձինվորական ուժով նեղրական ամբողջ գյուղեր քշում են կառուցվող յերկաթուղիների և խճուղիների վրա աշխատեցնելու: Այնտեղ աշխատում են մինչև գոտակտեղը ճահճի ջրի մեջ խրված: Աշխատանքները կատարվում են առանց մեքենաների: Կառուցման նյութերը փոխադրում են նեղրերն իրենց մեջքով:

Կապիտալիստներն հալիչառակում են զաղութների բնական

Հարստութիւնները, անդթորեն վռնչացնում են նաև բանվորական ուժը:

Նեղրերը և դադութային յերկրները այլ բնակիչները ծանր աշխատանքից հաղարներով մեռնում են կառուչուի անտառներում, ճանապարհներ կառուցելիս, պլանտացիաներում, մասսայորեն մեռնում են զանազան հիւվանդութիւններից: Որինակ, Բելգիայի աֆրիկական դադութում միայն մեկ յերկաթուղի շինելիս մեռան 17 հազար նեղր:

Իսոյց դադութների աշխատավորներն յեղև արդեն սկսել են պայքարի յելնել իրենց շահադործողներին— կապիտալիստների դեմ: Գադութներում հեղափոխական շարժումը հետզհետե ծափւոյում է: Գադութների աշխատավորները կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ ալիւլի ու ալիւլի համարձակ ու կազմակերպւած յելույթներ են ունենում կապիտալիստների դեմ:

3. ԳԼԽԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ (ԱՄՆ).— Ամերիկայի Միացյալ Նահանգները կապիտալիստական յերկրների մեջ ամենահարուստն է:

Ամերիկայի Միացյալ Նահանգները գտնւում են Հյուսիսային Ամերիկայի կենտրոնական և հարավային մասերում:

Գարտեղի վրա գտե՛ք Միացյալ Նահանգները և նրանց մայրաքաղաք Վաշինգտոնը:

Գարտեղի միջոցով գտե՛ք, թե Ամերիկայի Միացյալ Նահանգները վո՛ր ջերմային գոտում են գտնւում:

Նայեցե՛ք, վո՛ր պետութիւններն են սահմանակցում ԱՄՆ-ին և վո՛ր ուկիանոսներն են վողողում նրա ափերը:

Գարտեղի վրա ցույց ալե՛ք Նյու-Յորքից դեպի Լենինգրադ սանող ճանապարհը:

Գարտեղի միջոցով իմացե՛ք, թե Նյու-Յորքից մինչև Լենինգրադ քանի՞ կիլոմետր է:

ԱՄՆ-ի ամենադիւսալոր դադութներն են՝ Հալլայամ և Յիթս պիւնյան կղզիները խաղաղ ուկիանոսում, Ալյասկա թերակղզին՝ վոր գտնւում է Հյուսիսային Ամերիկայի Հյուսիս-արևմտյան սահմանում:

Գտե՛ք դրանք քարտեղի վրա:

Հալլայան և Յիթսիւնյան կղզիները գտնւում են տա՛ք գոտում: Այնտեղ մշակում են սուրճ, կակաո և բամբակ:

Յույց ալե՛ք այն ճանապարհը, վորով կապ է պահպանւում Նյու-Յորքի և Յիթսիւնյան կղզիների միջև:

ԱՆԳԼԻԱ.— Անգլիան գտնւում է Մեծ Բրիտանիա կղզու վրա, Արևմտյան Յեվրոպայի ափերի մոտ: Անգլիան ծովային յերկիր է:

Գարտեղի միջոցով իմացե՛ք, թե Անգլիան վո՛ր ջերմային գոտում է գտնւում:

Գտե՛ք քարտեղի վրա Անգլիան և նրա մայրաքաղաք Լոնդոնը:

Հին Ժամանակներից սկսած Անգլիան վարում է ծովային լայն առևտուր: Նրա նավերը լողում էյին յերկրագնդի զանազան ծովերում: Ամենուրեք շատ հարուստ յերկրներ դրաւեց նա:

Անգլիայի դրաւած յերկրների ամբողջ տարածութիւնը 140 անգամ մեծ է, քան թե ինքը՝ Անգլիան: Նայեցե՛ք քարտեղին. տեսե՛ք, թե վորքան մեծ է Անգլիայի դադութների տարածութիւնը: Նրանք ներկււած են նույն գույնով, ինչ վոր ինքը՝ Անգլիան:

Ահա նրա տիրապետութիւններից դիւսալորները՝ Հնդկաստան, Ավստրալիա, Հարավային Աֆրիկական Միութեւն, Կանարա:

Գարտեղի վրա ցույց ալե՛ք դրանք:

Գարտեղի վրա ցույց ալե՛ք այն ծովային ճանապարհը, վորով նավերն Անգլիայից դնում են իՍՏԱՆ-ի Հյուսիսային նավահանգիստները և ինտ դառնում:

ՅԻՍՆՍԻԱ.— Յիւնսիան գտնւում է Յեվրոպայի արևմտյան մասում:

Քարտեզի վրա ցույց տվե՛ք Ֆրանսիան և նրա մայրաքաղաք Փարիզը՝
իմացե՛ք, թե նա վոր ջերմային գոտում է գտնվում։ Ի՞նչ ուղիկանոս է
վողովում նրա ափերը։ Ի՞նչ պետությունների հետ է սահմանակից։

Ֆրանսիան ԽՍՀՄ-ից հետո ամենամեծ յերկերն է Յեվրոպայում։

Քարտեզի վրա վորոշեցե՛ք, թե Փարիզը Մոսկվայի վո՛ր կողմում է գտնվում։

Գտե՛ք Մոսկվայից Փարիզ տանող ճանապարհը։

Ֆրանսիան ահագին թվով դաղույթներ ունի։

Նայեցե՛ք քարտեզին, տեսե՛ք, թե վո՞րքան տեղ են բռնում Ֆրանսիայի դաղույթները։ Նրանք ներկված են նույն գույնով, ինչ վոր ինքը՝ Ֆրանսիան։

Ֆրանսիայի դաղույթների մակերեսը ը 22 անգամ մեծ է բուն Ֆրանսիայի մակերեսը թից։

Ֆրանսիայի դաղույթները գտնվում են Աֆրիկայի հյուսիս-արևմտյան մասում։ Նրան են պատկանում Մադագասկար կղզին, վոր գտնվում է Աֆրիկայի հարավ-արևելյան ափերի մոտ, և Հնդկաչին թերակղզու արևելյան մասը՝ Ասիայում։

Քարտեզի վրա գտե՛ք Ֆրանսիայի դաղույթները։

Քարտեզի վրա ցույց տվե՛ք, թե ինչ ծովի վրայով է անցնում այն ճապարհը, վոր տանում է դեպի Աֆրիկայի հյուսիսային ափին գտնվող Ֆրանսիական դաղույթները, Ֆրանսիայից ապրանքներն ինչ ծովային ճանապարհով են տեղափոխում Հնդկաչին։

Գերմանիա. Գերմանիան գտնվում է Յեվրոպայի կենտրոնական մասում։

Քարտեզի վրա գտե՛ք Գերմանիան և նրա մայրաքաղաք Բեռլինը։

Քարտեզի վրա ցույց տվե՛ք թե Գերմանիան ջերմային վո՞ր գոտում է գտնվում։

Նայեցե՛ք քարտեզին, թե նա վո՛ր պետությունների հետ է սահմանակից, վոր կողմից է վողովում ծովերով։ Քարտեզի վրա ցույց տվե՛ք, թե Բեռլինը Մոսկվայի վո՛ր կողմն է գտնվում։

Գերմանիայում իշխանությունը պատկանում է Փաշիստներին։ Գերմանական Փաշիստները հարձակվեցին Իսպանիայի աշխատավորության վրա, զավթեցին Ալստրիան և Չեխոսլովակիան։

ԻՏԱԼԻԱ. Իտալիան գտնվում է Յեվրոպայի հարավում։

Գտե՛ք քարտեզի վրա այն թերակղզին և կղզիները, վորոնք պատկանում են Իտալիային։ Վո՞ր ծովում են նրանք գտնվում։ Գտե՛ք Իտալիայի մայրաքաղաքը—Հռոմը։

Իտալիայում ևս իշխանությունը Փաշիստների ձեռքումն է։

Աֆրիկայում գտնվում են իտալական խոշոր դաղույթները։ Վերջերս Իտալիան Աֆրիկայում գրավել է Հաբեշստանը, բայց հարեչները շարունակում են պայքարել իրենց անկախություն համար։ 1936 թ. իտալական Փաշիստները դերմանական Փաշիստների հետ միասին հարձակվեցին իսպանական Ժողովրդի վրա և նրա դեմ պատերազմ եյին մղում։

ԻՍՊԱՆԻԱ. Իսպանիան գտնվում է Յեվրոպայի հարավ-արևմուտքում։

Քարտեզի վրա գտե՛ք Իսպանիան և նրա մայրաքաղաք Մադրիդը։ Վո՞ր գոտում է գտնվում Իսպանիան։

Վերջին տարիներս Իսպանիայի աշխատավորները հերոսական պայքար եյին մղում իրենց վրա հարձակված Փաշիստների դեմ։

ՃԱՊՈՆԻԱ. Ճապոնիան Անդլիայի նման ծովային պետություն է։ Նա գտնվում է կղզիները վրա՝ Ասիայի արևելյան ափերի մոտ։

Քարտեզի վրա գտե՛ք Ճապոնիան և նրա մայրաքաղաք՝ Տոկիոն։

Քարտեզի միջոցով իմացե՛ք, թե նա վոր ջերմային գոտում է գտնվում։

Նայեցե՛ք քարտեզին։ Մոսկվայի վո՞ր կողմն է գտնվում Ճապոնիան։ Վորտեղում է Ճապոնիան սահմանակցում ԽՍՀՄ-ին։ Մոսկվայից ի՞նչ ճապարհով պետք է գնալ Տոկիո։

Ճապոնիայում նույնպես, ինչպես և Գերմանիայում և Իտալիայում Փաշիստական իշխանություն է։

Ճապոնիայի ամենաբխավոր դաղույթներն են՝ Կորեյան և Ֆորմոզա կղզին։

Վերջին տարիներս Ճապոնիան գրավեց Մանչուրիան Չինաստանից։ Նա շարունակում է պատերազմ մղել Չինաստանի դեմ՝ նոր հողեր գրավելու փորձ անելով։

Քարտեզի վրա գտե՛ք Ճապոնիայի դաղույթները։

ՉԻՆԱՍՏԱՆ. Չինաստանը գտնվում է Ասիայի հարավ-արևելքում։

Բարեկցի վրա դռն՝ Զինաստանը և նրա մայրաքաղաք Նազկինը :

Իմացե՛ք, թե վո՛ր դոտում և գտնվում նա :

Յուշից ավե՛ք Մոսկվայից Նազկին տանող ճանապարհը :

Զինաստանի բնական հարստութիւնները վաղուց ի վեր գրավում էյին զանազան կապիտալիստական յերկրներ ռուս-գրութիւնը : Դեպի Զինաստան էյին ձգտում Ճապոնիայի, Յրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի կապիտալիստները :

Նրանք այստեղ բերին իրենց ապրանքները : Նրանք սկսեցին այստեղ հողեր գնել, հանքահորեր չինել, գործարաններ հիմնել : Նրանք զավթեցին Զինաստանի համարյա բոլոր բնական հարստութիւնները, համարյա ամբողջ արդիւնաբերութիւնը :

Այժմ Զինաստանի աշխատաւորութիւնը մեծ համառությամբ պաշտպանվում և ճապոնական հալածողիչների հարձակումից :

Բարեկցի վրա ցոյց ավե՛ք այն ծովային ճանապարհները, վարոնցով նավերը Լոնդոնից, Փարիզից, Տոկիոյից, Սան-Ֆրանցիսկոյից, Նյու-Յորքից Զինաստան են գնում :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I. ԽՍՀՄ-ի ԴԻՐԻՉ ԾԵՐԿՐԱԳՆԻՒ ՎՐԱ	3
II. ԽՍՀՄ-ի ԲՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ, ԲՆԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ	11
1. Բնեռային զոտի	11
2. Տունդրայի զոտի	31
3. Տալլայի զոտին	47
4. Խոտն անտառների զոտի	70
5. Անտառատափաստանի և սևահողային տափաստանների զոտի	83
6. Զոբ տափաստանների զոտի	103
7. Անտառանների զոտի	115
8. Մերձաբնակարձային զոտի	129
9. Լճաներ	145
III. ԽՍՀՄ-ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	161
ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԸ	165

Պատ. խմբագիր՝ Գ. Բացախյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան



Դիվանի լիազոր. վ.—2314. Հրատ. 4834.

Պատվեր 247. Տիրաժ 50.000.

Թուղթ 64X92, Տպագր. 11 մամ.

Մեկ մամ. 13680 նիշ.

Հանձնված է արտադրության 9 մարտի 1939 թ.

Ստորագրված է տպագրության համար 15 ոգոստոսի 1939 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

Հայաստանի Ազգային գրադարան



NL0427961

20839

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.
ԿԱԶՄԸ 50 Կ.

Լ. Գ. Терехова и В. Г. Эрдели
ГЕОГРАФИЯ
учебник для начальной школы
часть вторая
Арм. ССР, Ереван, 1939 г.